# Ազգ

Azg

21 ՀՈՒՆՎԱՐ 2022 ՈՒՐԲԱԹ 2(5690)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651


## «Հրեական Նոբելյան» կստանա «Փֆայզերի» ղեկավար Բուրլան

**Մեկ միլիոն եվրո պարգեւավճարով հրեական « Ջենեսիս» մրցանակն այս տարի կստանա ամերիկյան «Փֆայզեր» դեղագործական ընկերության ղեկավար Ալբերտ Բուրլան: 2013-ին ռուս հրեաների ջանքերով հիմնված պատվավոր այս մրցանակը, որ «հրեական Նոբելյան» են կոչում, տրվում է «բացառիկ անհատների, որ մասնագիտական արտակարգ հաջողությունների են հասել, աչքի են ընկել մարդկության համար կարեւոր ներդրմամբ եւ հրեական արժեքներին նվիրվածությամբ»: Իսրայելի նախագահ Իսահակ Հերցոգը հունիսի 29-ին Երուսաղեմում մրցանակը կհանձնի 60-ամյա Բուրլային:**

**Covid-19-ի դեմ առաջին պատվաստանյութը գերմանական «Բայոնթեքի» (BioNTech) եւ ամերիկյան «Փֆայզերի» (Pfizer) համատեղ ստեղծած միջոցն էր: Ինչպես գերմանալեզու «Յուդիշե ալգեմայնե» թերթն է տեղեկացնում, մրցանակակիրն ընտրվել է առցանց քվեարկությամբ, որին մասնակցել է 200 000 մարդ: Բուրլան հայտարարել է, թե պարգեւավճարը հատկացնելու է այն նախագծերին, որ ոգեկոչելու են Հոլոքոստի զոհերին, հատկապես Հունաստանի հրեաներին: Ալբերտ Բուրլան ծնվել է 1961-ին Թեսալոնիկում, Շոան վերապրողների ընտանիքում:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Հեռանկարում՝ ստրկության դարաշրջան

Պահն է թելադրում օրվա թեման, իսկ ներկա պահի թեման խոստանում է լինել ոչ թե օրվա, այլ առաջիկա 50 կամ 100 տարիների թեմա, ինչպես Ալեքսանդրապոլի անոթալի պայմանագիրը, ինչպես Մոսկվայի (մեր բացակայությամբ) եւ ապա Կարսի (մեր ներկայությամբ) կայացած ճակատագրական պայմանագիրը: Ասում են՝ վերջինը ստորագրած մեր երկու ներկայացուցիչներից Պողոս Մակինցյանը Երեւան վերադարձին խոստովանել է, որ ճիշտ կլիներ, եթե տեղում ինքնասպան լիներ, քան ստորագրեր փաստաթուղթը... Չգիտեմ՝ որեւէ բան կփոխվե՞ր նրա ինքնասպանությամբ, բայց նրա, այդ հայ բոլշեւիկի խոստովանությունը անկասկածելի ապացույցն է այն բանի, որ հայ բոլշեւիկները ամբողջական գիտակցումը ունեին իրենց գործած՝ թեկուզ պարտադրված արարքի, ճակատագրական պատասխանատվությունը իրենց մեղունակ քայլերի:

Մեր թերթի ներկա համարի վերլուծական բաժինը գրեթե ամբողջությամբ նվիրված է, ինչպես պիտի տեսնի ընթերցողը, ճակատագրական նույն թեմային՝ այսպես կոչված Հայաստան-Թուրքիա կամ հայ-թուրքական հարաբերություններին, ավելի կոնկրետ՝ օրերս սկիզբ առած բանակցային գործընթացին: Մեր ձեռնհաս աշխատակիցները՝ խորաթափանց հրապարակագիր Երվանդ Ազատյանը, դիվանագետ Գրիգոր Առաքելյանը, թուրքագետ Հակոբ Չաքրյանը, պատմաբան Սուրեն Սարգսյանը, լրագրող Մարիետա Խաչատրյանը, «Զարթօնք» թերթի խմբագիր Սեւակ Հակոբյանը եւ սյունակագիր Հակոբ Միքայելյանը իրենց մասնագիտական հայեցակետերից դիտարկում ու վերլուծում են սկսված այդ գործընթացը, կռահումներ եւ ընդհանրացումներ անում պատշաճ թելադրանքներով, ձեռնպահ մնալով լրագրական, մանավանդ ֆեյսբուքային խծբծանքներ անելուց, որով այս օրերին դժժում են խնդրով հետաքրքրվող մեր լրատվամիջոցները: Պահը շատ լուրջ է նման բաներով զբաղվելու համար: Խնդրո առարկա է երկրի ճակատագիրը եւ ամբողջովին տարբեր՝ վարչապետի ու նրա թիմակիցների շեփորած «խաղաղության դարաշրջանից»: Ստրկության եւ ստրկամտության դարաշրջանն է սկսվում նվաստացուցիչ պարտության, մարդկային, տարածքային ու նյութական ծանրածանր կորուստներից հետո, ընդհանուր անապահովության պայմաններում: Իրավիճակն զգալու, վերահաս նորանոր վտանգները չեզոքացնելու, օրհասական վիճակից երկիրը դուրս բերելու պարտականությունը մի կողմ թողած՝ ա՛յս պահին հայ-թուրքական հարաբերությունները կարգի բերելու գործընթացը, կրկնում եմ՝ այս պահին, մեզ չի կարող խոստանալ որեւէ լավ բան, որքան էլ որ Ռուսաստանն ու Ամերիկան, Եվրոմիությունն ու ՆԱՏՕ-ն դա պահանջեն, ստիպեն անգամ: Հայ կոմունիստները, Կարսից հետո, գոնե մխիթարությունն ունեցան, որ երկաթյա վարագույրից այս կողմ, պարփակված վիճակում, կարողացան գյուղատնտեսություն ստեղծել, ապա արդյունաբերություն զարգացնել, հաց եւ կրթություն տալ մարդկանց, գիտությունը, արվեստն ու սպորտը բարձր հիմքերի վրա դնել, ազգաբնակչության թվաքանակը, հակառակ բռնադատությունների եւ պատերազմի զոհերի, աննախադեպ՝ 4 միլիոնի հասցնել: Մինչդեռ...

Կարիք չկա բանագնաց կամ ներկայացուցիչ Ռուբեն Ռուբինյանին մեղադրելու իր երիտասարդության համար, որը գուցե նրա միակ առավելությունն է: Կարիք չկա նաեւ բորբոքված ներվերի համար նրան ձեռք առնելու. դա նրա երիտասարդությունից է: Սակայն կարիք կա, պե՛տք է նրան հարց տալ, թե ինչո՞ւ է ստանձնել նման ծանրածանր պատասխանատվություն, երբ կարող էր իրեն հանձնարարություն տվողին առարկել, որպես օրենսդիր մարմնի նախագահի տեղակալ, որ իր կամ խորհրդարանի որեւէ պատգամավորի ներգրավումը այդ գործընթացում՝ ոչ միայն նպատակահարմար չէ, այլեւ հակաօրինական է, քանի դեռ տվյալ անձը օրենսդիր է եւ ո՛չ գործադիր:

Ասածիս կարելի է առարկել՝ նա չլիներ, ուրիշին կհանձնարարվեր այդ պարտականությունը: Այո, բայց այստեղ կարեւորը հանձնարարողի անձն է: Այս պարագայում՝ մի անձ, որը հայտնի է իր խարդախությամբ, ստախոսությամբ, իր պատասխանատվությունը այլոց վրա գցելու, գործընկերներին դավաճանելու շատ ուրույն բնավորությամբ:

Թեթեւամիտ է այն անձը, որը չի կարողանում մերժել նման հանձնարարությունը նման մարդուց: Պատասխանատվություն՝ դարերի առաջ: Անցյալի օրինակները ներկա պայմաններում օրինակելի չեն, բացարձակապես: Մանավանդ որ դրանք բոլորն էլ ձախողվել են, հե՛նց Թուրքիայի կողմից: Եվ ժողովրդային ասացվածքը փորձի ու փորձանքի մասին՝ պետք է փոխել՝ փորձը փորձանք է:

Այս վերջին փորձը մեզ տանելու է ստրկացման:

Այս պահին, այսպիսի վիճակում, այսպիսի իշխանությամբ եւ այսպիսի ընդդիմությամբ մեզ հակացուցված է դարավոր թշնամու հետ բանակցելը, առանց նախապայմանի թե նախապայմանով:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Հիմա սխալվելը դար է արժենալու

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Ինչ աստիճանի կարեւորության իրադարձություն ուզում է կատարվի Հայաստանում եւ նրա շուրջ, դա մեր քաղաքական օրակարգում ոչ թե առաջին տեղում կլինի, այլ միայն ու միայն երկրորդ, երրորդ եւ այլն, քանի որ մեր քաղաքական օրակարգի առաջին տեղն ի սկզբանե զբաղված է , եւ դա իշխանություն-ընդդիմության, նրանց լիդերների հակադրությունն է, միմյանց սխալ հանելն ու միմյանց ոչնչացնելը: Հայ-թուրքական հարաբերություններ, ալիեւյան սպառնալիքներ, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների առիթով նշանակված ներկայացուցիչ՝ դրանք միայն առիթի կարգավիճակում են, որ ընդդիմությունն ու իշխանությունը հագնեն իրար ու համաշխարհային աղմուկ բարձրացնեն, ու հետո, սկանդալներից հագենալով միայն, նոր հասնեն հարցերի բուն բովանդակությունը: Ու հույս չկա, որ այդ սկանդալները կփոխարինվեն խելքի ու բովանդակության մրցակցությամբ միայն հարցերի էությունը վեր հանելուն (ափսոսում եմ այդ անիմաստ աղմուկի մեջ կորչող ՀՅԴ-ի համար՝ իր ուղեղներով հանդերձ), որի դեպքում մենք՝ թատրոնի հանդիսականի վերածված հայերս, կհասկանանք կատարվողն ու մեր գլխին գալիքը:

Աղմուկը խանգարում է հայ մտածող շերտին հասկանալ՝ ինչ է կատարվում աշխարհում այս պահին, մեր քայլերն ինչպես բխեցնել դրանից՝ թեկուզ նույնիսկ դրանք խորապես սցենարավորված լինեին: Այ, վերջին օրերին Իրանի նախագահ Ռաիսին Մոսկվայում էր, ու անհնար էր, որ Արցախի հարցն ու Հայաստանի հետ սահմանի, մեր անվտանգությանը վերաբերող խնդիրներն այնտեղ չքննարկվեին, իսկ մենք ի՞նչ գիտենք դրանց մասին, կամ դրա մասին հարց ԱԺ-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ բարձրացվե՞ց: Մինչդեռ այս պահին Իրանը կանգնեցրել է գազի մատակարարումը Թուրքիային՝ թեկուզ տեխնիկական խնդիրներով պայմանավորված, ու դա արդեն հետեւանք ունի Թուրքիայի տնտեսության վրա:

Ու հատկապես խորհրդարանում բոլորիս հոգնեցրած ոճը՝ դիմակազրկել միմյանց հնարավոր բոլոր միջոցներով, տեղը չի զիջում զուտ աշխատանքայինին, ու անգամ մեր ընդդիմության այս հակվածությունից օգտվում է իշխանությունը՝ գլուխը կախ իր գործն առաջ քշող հատվածը, արագ-արագ այնպիսի օրինագծեր անցկացնելով, որոնք, քողազերծումներով զբաղված ընդդիմության դիմակայությանը չհանդիպելով, մի հարվածով ընդունվում են, ու շուտով կբացահայտվի, որ դրանցից շատերը այս կամ այն աստիճանի դժվարացնելու են մեր կյանքը:

⇨5

## Մինչ աշխարհին ողջունում է նորմալացման գործընթացը առանց նախապայմանի ծավալելու հայկական եւ թուրքական կողմերի որոշումը

### *ՌԴ արտգործնախարարությունը դա անտեսում եւ փոխարինում է «համատեղ նախադրյալ» ստեղծելու արտահայտությամբ*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Թուրքագետ

Հունվարի 14-ին Մոսկվայում տեղի ունեցավ Հայաստանի եւ Թուրքիայի հատուկ ներկայացուցիչների առաջին հանդիպումը: Դրանով փաստորեն մեկնարկեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը: Հանդիպմանը հայկական կողմին ներկայացրել է ԱԺ փոխխոսնակ **Ռուբեն Ռուբինյանը,** իսկ թուրքականին՝ ԱՄՆ-ում Թուրքիայի նախկին դեսպան **Սերդար Քըլըչը**: Հայկական լրատվամիջոցները մանրամասն լուսաբանել են հանդիպումը: Դա եղել է նաեւ թուրքական լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում, գնահատականներն ընդհանուր առմամբ դրական են:

Թուրքական լրատվամիջոցները հանդիպումը բնութագրեցին «առանցքային», իսկ դրա անցկացումը Մոսկվայում բացատրեցին ՌԴ արտգործնախարարության ներկայացուցիչ **Մարիա Զախարովայի** հայտարարությամբ, թե Մոսկվան հայկական կողմի խնդրանքով է ընտրվել որպես հանդիպման վայր, առանց իհարկե բացատրելու, թե այդ խնդրանքն ո՞ւմ հորդորներով է եղել:

Համենայնդեպս հանդիպման ավարտին CNN-Turk-ը նշեց, որ դա անցել է դրական եւ կառուցողական մթնոլորտում, կողմերը որոշել են գործընթացը շարունակել առանց նախապայմանի եւ հաջորդ հանդիպումները բացառապես անցկացնել միայն Անկարայում ու Երեւանում: Որոշումներն արձանագրվել են հանդիպման ավարտին հրապարակված համատեղ հայտարարության մեջ:

Հատկանշական է, որ հանդիպման նախորդ օրը, հունվարի 13-ին, Սերդար Քըլըչը CNN-Turk-ի էկրանից «տարածաշրջանում անվտանգության ամրապնդման, հայ-թուրքական հարաբերությունների «ճանապարհային նոր քարտեզի» մասին արտահայտվելիս, 1915-ի իրադարձությունները պատմաբանների հայեցողությանը թողնելու, Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը հարգելու եւ «Զանգեզուրի միջանցքը» բացելու պահանջներ էր ներկայացրել հայկական կողմին եւ մատնանշել, որ Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացը իրականացվելու է Ադրբեջանի հետ համակարգման պայմաններում:

⇨2

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Համաձայնութիւն, բայց ի՞նչ գինով

Այս անգամ առանց ֆութպոլի, առանց միջազգային միջնորդներու եւ դէտերու ներկայութեան, պարտուողի խոնարհութեամբ համաձայնեցանք թուրքերուն հետ երկխօսութեան նստիլ:

Ուրիշ բան է, երբ երկու հակառակորդ պետութիւններ թշնամանքին վերջ տալու համար հաշտութիւն կը կնքեն, իսկ երբ կը պարտուի մէկ կողմը եւ ակամայ կը ստիպուի որ նստի ու թշնամիին հետ համաձայնութիւն կնքէ, այսինքն ընդունի իր պարտութիւնն ու հակառակորդին բոլոր պայմանները, ինչ ալ ըլլան անոնք, որպէսզի այլեւս զերծ մնայ թշնամիին զարկերէն, այդ ալ բոլորովին ուրիշ բան է:

Հայաստանը յաղթողի, կամ նոյնիսկ չպարտուողի հանգամանքով չէ որ կ՚երթայ երկխօսութեան: Կ՚երթայ, որովհետեւ իրեն զնա՛ ըսուեցաւ: Ի՞նչ կ՚ակնկալենք այս երկխօսութենէն, շա՞հ, ապահովութի՞ւն, տարածքներու ամբողջականութի՞ւն...

Այս տեսակի զիջողական համաձայնութիւնը թունաւոր է: Ես վստահ եմ, որ նախապէս քուլիսներու ետին բաներ մը ծրագրուած են, ու հիմա այդ գաղտնի համաձայնութիւնը պիտի բացայայտուի եւ հրապարակուի պաշտօնապէս:

Թուրքիան ղրկեց իր ծանր հրետանին՝ փորձառու քաղաքագէտ, դիւանագէտ ԱՄՆ-ի եւ ուրիշ երկիրներու մէջ Թուրքիոյ նախկին դեսպան, միջին տարիքի ներկայացուցիչ մը՝ **Սերտար Քըլըճ**, իսկ Հայաստանը անոր դէմ ղրկեց երիտասարդ, անփորձ մէկը՝ **Ռուբէն Ռուբինեան**, որուն Ազգային Ժողովի փոխնախագահ ըլլալը ինչքա՞ն վարկ կու տայ անոր, չեմ գիտեր:

Թուրքիոյ ներկայացուցիչը վիրաւորուած չէ՞ արդեօք, որ Հայաստան իր հետ խօսելու կ՚ուղարկէ իրեն ոչ հաւասար, իր կէս տարիքի մէկը, որուն հետ ինք կրնայ «խաղալ» ինչպէս որ ուզէ: Թէ՞ մենք անակնկալի մը առջեւ պիտի գտնուինք: Նայինք, սպասենք ու տեսնենք:

Ի՞նչ անակնկալ, ամէն ինչ ի սկզբանէ դասաւորուեր-վերջացեր է, հիմա եղածն ու ըլլալիքն ալ պարզապէս ներկայացում է: Ամէն մարդ անպայման անդրադարձ մը ունի, ահա՛ օրինակ մը.

- Աս ի՞նչ ճակատագիր է,- կ՚ըսէր Հալէպէն, Երեւան կայք հաստատած տիկին մը,- Հայերու համար հանգիստ չկա՞յ, պատերազմները մեզի կը հալածեն կարծես, Մերձաւոր Արեւելքի հայութեան փրկութեան երեք լաստերն ալ՝ Սուրիան, Լիբանանն ու Հայաստանը, երեքն ալ խաղաղ չեն, պատերազմներու, ներքին իրարանցումներու ու տնտեսական ճգնաժամի պատճառով, անապահով քամիներու բերանն ինկած ենք ու չորցած տերեւներու պէս մահուան շուրջպարի մէջ կը դառնանք ու կը դառնանք, առանց ելք մը գտնելու:

- Միակ լուծումը Գանատան է,- կը միջամտէր երկրորդ տիկին մը,- գացողները այնքան ուրախ են, որ կ՚ըսեն՝ երանի շատոնց գայինք:

- Շատ մի՛ հաւատար այդ փչոցներուն, անոնք իրենց գաղթելը արդարացնելու համար այդպէս կը գրեն:

- Ճանս, ալ hոս չ ապրցուիր, չես գիտեր վաղը ի՞նչ կը պատահի: Պարտուած երկրի մէջ ապրիլը դժուար է, մանաւանդ, երբ վաղը ճամբաները բացուին ու Երեւանը թուրքերով ու ազերիներով լեցուի:

- Ատանկ բան կ՚ըլլա՞յ մը քա՜... Է, ո՞ւր մնաց մեր հայութիւնը, մեր հայկականութիւնը:

- Ես պիտի վերյիշենք Սովետի շրջանին բեմերէն երգուած երգերը, կը յիշե՞ս՝ «Եղբայր դարձան Հայաստան- Ատրպէյճան...»:

- Մենք եղբայր- մեղբայր չենք կրնար դառնալ, մոռցա՞ր մեր սպան կացինահարողին ազգային հերոսի պատուին արժանացուց այդ զզուելի մարդը, չէ՞:

- Հարպա Ցեղասպանութեան ճանաչո՞ւմը, Ամերիկայի ընդունելէն ետք, չէ՞ որ կ՚ակնկալուէր որ Թուրքիան ուզէ-չուզէ պիտի ընդունի... Ասկէ ետք ընդունի՞լ մնաց:

- Ես գիտեմ նէ, Պայտընի յայտարարութենէն հարցը շրջուած էր: Վրանիս խնդաց, տակից թուրքին հետ համաձայնած էին, եւ ահա՛ պտուղը: Աստուած, օգնէ Հայաստանին:

- Աստուած ինքզինք օգնողի՛ն կ օգնէ:

# Լուսանկար մասնատված Թուրքիայի քարտեզի առջեւ

Հյուսիսային Իրաքում «Քուրդիստան» շրջանի նախագահ Մասուդ Բարզանին, հավանաբար Էրբիլում, ընդունել է ԱՄՆ-ի Կրոնական ազատությունների միջազգային հանձնաժողովի՝ USCIRF-ի նախագահ Nadine Maenza-ին եւ նրանք միասին լուսանկարվել են մասնատված Թուրքիայի քարտեզի առջեւ: Այդ մասին հունվարի 19-ի համարում տեղեկացնում է «TIMETURK»-ը: Փոքրիկ նյութ է, որտեղ փորձ է արվում ընթերցողի ուշադրությունը սեւեռել «մասնատված Թուրքիայի քարտեզի» վրա, ինչն արտացոլված է հենց վերնագրում: Քանի որ դա մեկնաբանության կարիքը չի զգում, ուստի թարգմանաբար նույնությամբ ներկայացնում ենք:



Ահա թե ինչ է գրած. «Հյուսիսային Իրաքի քրդական վարչակարգի նախագահ Բարզանին, ընդունելով ԱՄՆ-ում հանձնաժողովի նախագահ Maenza-ին, վերջինի հետ լուսանկարվեց «Ասիական Թուրքիայի նոր քարտեզի» առջեւ, որը հենց այդպես է անվանվել: Քարտեզում թուրքական տարածքները բաժանվել են մի քանի մասի՝ արեւելյան վիլայեթները կոչվում են Հայաստան, իսկ հարավ-արեւելյանները՝ Քուրդիստան: Ամերիկացի հյուրին ընդունելուց հետո սոցցանցում արած գրառման մեջ Բարզանին նշել է, որ մեծ գոհունակությամբ է հյուրընկալել Nadine Maenza-ին, նրա հետ բազմաթիվ այլ հարցերի թվում քննարկել է նաեւ Քուրդիստանի ժողովրդի կրոնական ազատությունների հանդեպ վերաբերմունքին, հանդուրժողականության ավանդույթներին առնչվող խնդիրներ»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Մինչ աշխարհին ողջնում է նորմալացման գործընթացը առանց նախապայմանի ծավալելու ...

1

Դա ենթադրում էր Ադրբեջանի ներգրավվածությունը հայ-թուրքական երկկողմ գործընթացին: Դա դեռ ոչինչ, Մարիա Զախարովան էլ հայկական կողմին հորդորել էր «սահմանազատել» հողերը հայ-ադրբեջանական սահմանին, հավաստելով, ըստ ռուս բլոգերների, որ այդ դեպքում խիկույն կդադարեն Ադրբեջանի կողմից հայ զինվորների վրա արձագվող կրակոցները շփման գծում: Քանի որ Զախարովան ՌԴ արտգործնախարարության ներկայացուցիչն է, այլ ոչ թե Ադրբեջանի, եթե կարողանում է սահմանին ադրբեջանական կողմից կրակոցների դադարեցման հստակ հավաստիացում տալ Հայաստանին, ապա մենք էլ նրա հավաստիացումը պետք է ընդունենք որպես խոստվանություն, որ շփման գծում հայ զինվոր սպանելիս՝ ադրբեջանցի հրոսակն առաջնորդվում է Մոսկվայի պատվերով:

Առհասարակ նախորդ օրվա նորությունները առավոտյան նույնությամբ կրկնում են նաեւ թուրքական հեռուստատեսությունները: CNN-Turk-ը, սակայն, Սերդար Քըլըչի պարագայում խախտեց այդ բարի ավանդույթը, հունվարի 14-ի առավոտյան վերջինի հայտարարությունները արդեն էկրանին ոչ թե ներկայացրեց ինքը, ինչպես նախորդ օրն էր, այլ հաղորդավարը, ընդ որում խմբագրված տարբերակով: Մինչդեռ նախորդ օրվանը՝ միանգամայն հեռանկարային էր Թուրքիայի տեսանկյունից, քանի որ այդ տարբերակում շրջանառվում էր «Զանգեզուրի միջանցքը» բացելու, Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը հարգելու, հայ-թուրքական նորմալացման գործընթացին Ադրբեջանի ներգրավվածությունն ապահովելու հարցեր: Հետեւաբար դա միանգամայն համընկնում էր նաեւ Մոսկվայի աշխարհաքաղաքական ծրագրերով պայմանավորված մոտեցումներին: Դա նշանակում է, որ գործընթացի հիմքում այդ տարբերակը դնելու դեպքում Թուրքիան ստանալու էր Կրեմլի անվերապահ աջակցությունը: Ինչպե՞ս:

Մինչ հարցին պատասխանելը պետք է անդրադառնալ Ռուբինյան-Քըլըչ մոսկովյան հանդիպման ավարտին երկու երկրների արտգործնախարարությունների հրապարակած համատեղ հայտարարությանը, որը հունվարի 14-ին կայքէջում թուրքական թերթերի հետ լուսաբանել է նաեւ Կ. Պոլսո «Ակօս» շաբաթաթերթը: Ըստ «Ակօս»-ի, Թուրքիայի արտգործնախարարությունը հայտարարությամբ նշել է. «Դրական եւ կառուցողական մթնոլորտում իրականացված առաջին հանդիպմանը հատուկ ներկայացուցիչները մտքեր են փոխանակել Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ երկխոսության ճանապարհով իրականացվող նորմալացման գործընթացի շուրջը: Կողմերը համաձայնության են եկել լիարժեք նորմալացման առաջադրանքով ծավալվող բանակցությունները առանց որեւէ նախապայմանի շարունակելու հարցում: Հանդիպման երկրորդ վայրն ու ժամանակը կճշտվի առաջիկայում»:

«Ակօս»-ի վկայությամբ, Եվրոպական միությունը գոհունակությամբ է արձագանքել Հայաստանի եւ Թուրքիայի հատուկ ներկայացուցիչների մոսկովյան հանդիպմանը եւ հայտարարել է, որ աջակցում է հարաբերությունների նորմալացմանն ու հաղորդակցության ուղիների բացմանը միտված գործընթացները: Հանդիպման առնչությամբ հաղորդագրություն է տարածել նաեւ ՌԴ արտգործնախարարությունը, որտեղ, «Sputnik»-ի վկայությամբ, հայտարարվում է. «Թուրքիան եւ Հայաստանը համաձայնության են եկել, որ շարունակեն «համատեղ նախադրյալ» ստեղծելու որոնումները»: Հաղորդագրության մեջ միաժամանակ նշվում է, որ ՌԴ արտգործնախարարի օգնական **Անդրեյ Ռուդենկոն** առանձին հանդիպում է ունեցել Սերդար Քըլըչի եւ Ռուբեն Ռուբինյանի հետ:

Այդ հանդիպման մանրամասները հայտնի չեն: Կարեւորը, սակայն, ոչ այնքան մանրամասներն են, որքան Հայաստան-Թուրքիա նորմալացման գործընթացն «առանց որեւէ նախապայմանի» ծավալելու պայմանավորվածությունը, որն արձանագրված պայմանավորվող կողմերի համատեղ հայտարարության մեջ, անտեսելու եւ դա «համատեղ նախադրյալ ստեղծելու որոնումներով» փոխարինելու ՌԴ արտգործնախարարության հակահայ նկրտումը, որքան էլ վերոհիշյալ պայմանավորվածության առթիվ ԵՄ-ը, ԱՄՆ-ը, հետեւաբար միջազգային հանրությունն ողջունեն պայմանավորվող կողմերին, զգալով, որ անհնար է նախապայմաններով սկզբնավորված գործընթացի զարգացումը:

Թեեւ համատեղ հայտարարությունը, ինչպես նաեւ դրանում վերոհիշյալ պայմանավորվածության արձանագրումը Թուրքիային չի կարող հետ պահել առիթի դեպքում Հայաստանին նախապայմաններ առաջադրելու գայթակղությունից, սակայն առաջադրելու դեպքում հայկական կողմը դուրս կգա գործընթացից, ընդ որում առանց որեւէ հակազդեցության, եւ դրա ձախողման ողջ պատասխանատվությունը կընկնի թուրքական կողմի վրա եւ ինքն էլ կդառնա միջազգային հակազդեցության թիրախը:

Գալով կողմերի միջեւ ձեռք բերված գործընթացն «առանց որեւէ նախապայմանի» ծավալելու պայմանավորվածությունն անտեսելու, այսպես կոչված, դաշնակից Ռուսաստանի դիրքորոշմանը, ապա նախապայմանների բացակայությունը միանգամայն հակասում է ՌԴ նախագահ **Վլադիմիր Պուտինի** նորմալացման գործընթացով պայմանավորված աշխարհաքաղաքական հաշվարկների տրամաբանությանը:

Մինչ Պուտինը ձգտում է գործընթացը ծառայեցնել «Զանգեզուրի միջանցքի» բացման նպատակին, որ կանխի 44-օրյա պատերազմի արդյունքում ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման գործընթացից, հետեւաբար եւ Հարավային Կովկասից դուրս մղված Մինսկի խմբի համանախագահներ ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի վերադարձը տարածաշրջան, փոխարինելու համար վերջիններիս Իրանով եւ Թուրքիայով, հանկարծ Հայաստան-Թուրքիա հարաբերորությունների նորմալացման գործընթացի նախաձեռնությունն անցնում է Վաշինգտոնին:

Խնդիրը, սակայն, սոսկ Պուտինի հաշվարկները չեն, այլ Ուկրաինայում հետզհետե սրվող լարվածության, առավել եւս Ուկրաինայի հետ նաեւ Վրաստանին ՆԱՏՕ-ի կազմում ընդգրկելու Արեւմուտքի պատրաստակամության պայմաններում ռուսական գերազդեցության տարածք համարվող Հարավային Կովկասում Ռուսաստանի դիրքերի թուլացումը: Դրանք թուլանում են նաեւ Հայաստանում, եւ Ռուսաստանը հետզհետե գիտակցում է գերազդեցության այս տարածքից վտարվելու անխուսափելիությունը:

Հայաստանի եւ Թուրքիայի հատուկ ներկայացուցիչների առաջին հանդիպման կազմակերպումը Մոսկվայում եւ դրա պայմանավորումը հայկական կողմի խնդրանքով եւ դրա մասին ՌԴ արտգործնախարարության ներկայացուցիչ Զախարովայի հայտարարությունը, յուրատեսակ ազդանշաններ էին, ցույց տալու միջազգային հանրությանը, թե Ռուսաստանը դեռ դուրս չի մղվել Հայաստան-Թուրքիան նորմալացման գործընթացից: Գալով Զախարովայի հայ-ադրբեջանական շփման գծում հողերը սահմանազատելու հայտարարությանը եւ նրա հավաստիացմանը, թե այդ դեպքում կդադարեն կրակոցները հայ զինծառայողների վրա, խնդիրն այստեղ կրակոցների դադարեցումը չէ, այլ նորմալացման գործընթացը Մոսկվայի նախաձեռնությամբ ծավալելու Պուտինի մտադրությունը:

# Թուրքիայի հետ «առանց նախապայմանների» բանակցությունների վտանգավոր ճանապարհը

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ
Դետրոյթ, ԱՄՆ

Հայաստանի եւ Թուրքիայի ներկայացուցիչները հունվարի 14-ին Մոսկվայում հանդիպեցին առաջին անգամ՝ նպատակ ունենալով շուտով պաշտոնական բանակցություններ սկսել երկու պետությունների միջեւ: Հանդիպումը ողջունեցին աշխարհի տարբեր կողմերում: Նույնիսկ ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի միջեւ օրեցօր սաստկացող լարվածության ներկա ժամանակահատվածում, երկու հակառակորդ պետությունների արձագանքները միահունչ էին:

Մ. Նահանգները, Ռուսաստանը, Եվրոմիությունը, ՆԱՏՕ-ն եւ այլ կառույցներ ողջունեցին նախաձեռնությունը, հատկապես երբ Հայաստանն ու Թուրքիան միանման հայտարարություններով հանդես եկան այն մասին, թե հանդիպումը կայացել է դրական մթնոլորտում, երկու կողմերի կառուցողական մոտեցումների պայմաններում:

Անշուշտ այս հրապարակային հայտարարությունները շատ բան չեն նշանակում, որովհետեւ առայժմ ոչ ճանապարհային քարտեզ կա, ոչ էլ օրակարգ՝ սկսելու իրական բանակցությունները:

Մերձեցման այս բանակցությունները նախաձեռնել էին Մոսկվան ու Վաշինգտոնը՝ տարբեր պատճառներով: Հայաստանը զգուշավորությամբ է շարժվում, որպեսզի ոչ մի առիթ չտա Մոսկվային մտահոգվելու, սակայն շատերի կարծիքով երես առ երես բանակցությունները առավել արդյունավետ կլինեին, քան երրորդ կողմերի միջնորդավորվածները, որովհետեւ վերջիններս կարող են իրենց շահերը թելադրել բանակցողներին:

Կացությունն իր մեջ պարունակում է որոշ հեգնական դրվագներ: Ռուսաստանի պարագայում հարց է առաջանում, թե ինչո՞ւ է Մոսկվայի համար կարեւոր Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունների կանոնավորումը, երբ Ռուսաստանն ինքն է խթանել Թուրքիայի դեմ Հայաստանի վախերը: Տարիներ շարունակ Հայաստանի անվերապահ համագործակցությունը Ռուսաստանի հետ հենց այդ վախով է պայմանավորված եղել, եւ Ռուսաստանն օգտագործել է այդ վախը որպես քաղաքական գործոն Հայաստանի հետ իր հարաբերություններում: Գյումրիում տեղակայված ռուսական 102-րդ ռազմակայանը դրա վառ ապացույցն է, որտեղ հակառակ իր թույլ տնտեսությանը Հայաստանը հանձն է առել հյուրընկալել այն եւ հոգ տանել դրա կարիքներին:

Հաջորդ հարցը բանակցությունների սկզբնավորման ժամանակահատվածն է: Ի՞նչ ազդեցություն է ունենալու Ուկրաինայի հարցով Վաշինգտոն-Մոսկվա հարաբերությունների լարվածությունը բանակցությունների վրա:

Բանակցությունները խրախուսելու Մոսկվայի եւ Վաշինգտոնի մղիչ ուժը այն է, որ երկու կողմերն էլ այժմ թույլ են եւ կարող են տեղի տալ միջազգային ճնշումների ազդեցության տակ: Իհարկե, այդ թուլությունը հարաբերական է: Հայաստանը ծնկի է իջել պատերազմում իր պարտությունից հետո, եւ Թուրքիան զոհ է դարձել իր իսկ ծավալապաշտական փառասիրությունների, որոնք երկիրը տնտեսական անկման եզրին են գլորել:

Հայտնի է, որ նախագահ Ջո Բայդենն է անձամբ խորհուրդ տվել նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին՝ վերացնելու Հայաստանի շրջափակումը եւ հաստատելու դիվանագիտական հարաբերություններ վերջինիս հետ:

Առաջ շարժվելու համար Հայաստանը պատրաստ է ուսումնասիրել բանակցություններ վարելու Անկարայի մարտավարությունները ու դրանցից բխող հնարավոր որոգայթները:

Նախագահ Բայդենի թելադրանքը կատարելու համար Էրդողանը զարմացրեց աշխարհին հայտարարելով, որ Հայաստանի հետ բանակցելու է առանց նախապայմանների, բայց բանակցությունների ընթացքում վստահաբար նա Հայաստանին փակուղու առաջ է կանգնեցնելու եւ

Իրադրությունը այս տեսանկյունից դիտարկելու փոխարեն, Անկարան այժմ բանակցությունների սեղանին է նստում կարգավորելու հնադարյան խնդիրներ, իսկ Երեւանը տեղի է տալիս դիվանագիտական այս խորամանկությանը:

Ոչ ոք չի կարող կանխագուշակել, թե ինչքան են տեւելու այս բանակցությունները եւ ինչ արդյունք են ունենալու, բայց Հայաստանը պետք է պատրաստ լինի տնտեսական այն զարգացումներին, որոնք կատարվելու են սահմանների բացումից հետո: Հայաստանը համապատասխանաբար պետք է սակագներ սահմանի եւ կարգավորիչ համակարգեր տեղադրի, որպեսզի կարողանա պաշտպանել իր նվաղուն տնտեսությունը:

Թուրքիայի ծավալապաշտական քաղաքականության բաղկացուցիչ տարրերից մեկը եղել է տնտեսական ներգրավվածությու-

տեր մարդիկ են լքում հայրենիքը, պատճառաբանելով, որ անվտանգությունն ու երեխաների ապագան խաթարված են:

Առանց նախապայմանների բանակցելու Թուրքիայի առաջ քաշած թեզը շատ քչերին կարող է խաբել, քանի որ նրա այնքան էլ ոչ թաքուն օրակարգում բազմաթիվ նախապայմաններ կան, որոնցից հավիտենականները հրաժարումն է Ցեղասպանության ճանաչումը պահանջելուց, վավերացումը Կարսի 1921 թվի պայմանագրի, որը սահմանում է Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ գոյություն ունեցող ներկա սահմանները եւ խաղաղության հաստատումը Ադրբեջանի հետ:

Արտգործնախարար **Մեվլութ Չավուշօղլուն** քանիցս նշել է, որ բանակցությունների ամեն մի փուլում Թուրքիան խորհրդակցելու է Ադրբեջանի հետ: Էրդողանն ինքն է Հայաստանին հորդորել

կարող են փակուղի մտնել, որովհետեւ այդ երկրի ղեկավարը շատ մեծ գին է պահանջում իր համաձայնությունը տալու համար: Նա պնդում է, որ ձեռք կբերի Զանգեզուրի միջանցքը Հայաստանի ինքնիշխան տարածքից: Այդ միջանցքը կարեւոր է նաեւ Թուրքիայի համար, հետապնդելու իր պանթուրանական օրակարգը, թեեւ այդ ծրագիրը հօդս ցնդեց Ղազախստանում տեղի ունեցած վերջին իրադարձությունների հետեւանքով: Նուրսուլթան Նազարբաեւը, որ պանթուրանիզմի անխոնջ պաշտպանն էր եւ դեռ շարունակում էր իշխել նախագահ Կասիմ-Ջոմարտ Տոկաեւի կառավարության օրոք, հեռացվեց քաղաքական թատերաբեմից եւ Ռուսաստանը ուժեղացրեց իր տնտեսական վերահսկողությունը տարածաշրջանում:

Այդուհանդերձ, թուրքերն իրենց քաղաքականությունը չեն մտա-




Վաշինգտոնին է ներկայանալու մաքուր ձեռքերով:

Թուրքագետ **Ռուբեն Սաֆրաստյանը,** Հայաստանի գիտությունների ակադեմիայից, տեղեկացնում է, որ սա չորրորդ փորձն է բանակցելու 2009ի Ցյուրիխյան Արձանագրություններից, «ֆուտբոլային դիվանագիտությունից» եւ թուրք-հայկական մերձեցման հանձնախմբի (TARC) երկրորդ փորձից հետո:

Դրանցից երկուսի խրախուսողը Մ. Նահանգներն էր: Սաֆրաստյանը հավաստացած է, որ բանակցությունների ներկա գործընթացը հաջողության ավելի լավ հնարավորություն ունի, քանի որ դրանով շահագրգռված են և՛ Մ. Նահանգները, և՛ Ռուսաստանը: Բայց նա զգուշացնում է շեշտելով, որ այս նոր գործընթացը կարող է հաջողությամբ ավարտվել, եթե Թուրքիան Մ. Նահանգների, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի ճնշումների ներքո ճանաչի Հայոց ցեղասպանությունը:

Նրա զգուշավոր լավատեսությունը ներկայիս հիմնված է այն փաստի վրա, որ ԵԱՀԿ-ի երեք համանախագահները, որոնք հանձն են առել կարգավորելու Ղարաբաղի հարցը, ներկա դրությամբ պաշտոնապես ճանաչել են Հայոց ցեղասպանությունը: Նախորդ անգամներում դրությունը այլ էր:

ԱՄՆ-ի նախագահ Բայդենը Թուրքիայից ընդամենը խնդրել էր վերացնել շրջափակումը եւ հաստատել դիվանագիտական հարաբերություններ: Եթե Թուրքիան կատարի այդ խնդրանքը, նրան պետք է վարձատրել «լավ վարքագծի» համար: Չէ՞ որ Անկարան սկզբից եւեթ խախտել էր միջազգային իրավունքի կանոնները՝ փակելով իր սահմանները դեպի ծով ելք չունեցող մի պետության հետ: Նրան, ընդհակառակը, պետք է պատասխանատվության կանչել որպես միջազգային հանցագործ իր արարքի համար:

նը: Դրա վառ ապացույցն է Թուրքիայի ներկայությունը Աֆրիկայում: Անցյալ աշնանը Էրդողանը Աֆրիկայում էր, որտեղից նա վերադարձավ նավթով հարուստ Անգոլայի հետ կնքած տնտեսական ծանրակշիռ պայմանագրերով: Մյուս կողմից, Ռուսաստանն է Թուրքիային եւ Կենտրոնական Ասիայի թյուրքախոս պետություններին պարտական իր տնտեսության բարեկեցության համար:

Հայաստանը չպետք է իր հույսերը կապի տնտեսական կապերի ամրապնդման հետ:

Թուրքիան կարող է Հայաստանին առաջարկել մի բան, որն ինքնին աննշան է, բայց շատ կարեւոր ու շոշափելի Հայաստանի համար՝ խաղաղություն եւ անվտանգություն Հայաստանի սահմաններում: Թուրքիան եւ Ադրբեջանը խեղդում են Հայաստանին ռազմական եւ տնտեսական առումներով, որպեսզի պակասեցնեն բնակչության քանակը: Էրդողանն ու Ալիեւը իրենց հանրային ելույթներում բազմիցս նշել են, որ Հայաստանի բնակչությունը արագորեն պակասում է, ինչը երկիրը թուլացնում է եւ հեշտ թիրախ դարձնում Թուրքիայի կողմից նվաճման:

Եվ իրոք, Հայաստանում այսօր նույնիսկ ապահով աշխատանքի

խաղաղություն կնքել Ադրբեջանի հետ:

Եթե Անկարան բանակցությունների ամբողջ ընթացքում գործակցելու է Բաքվի հետ, ապա հայկական կողմն էլ պետք է նշի, որ խորհրդակցելու է սփյուռքահայության հետ: Հայաստանը, ճիշտ է, միակ իրավական միավորն է, որ կարող է հետապնդել Ցեղասպանության եւ դրանից բխող փոխհատուցման հարցը, սակայն նա չի կարող անտեսել եւ չհամագործակցել սփյուռքահայերի հետ, քանի որ նրանք են այդ Ցեղասպանությունից վերապրածների հետնորդները:

Չիկագոյում կայացած մի համաժողովի ընթացքում Էրդողանի խոսնակ **Իբրահիմ Քալընը** նշեց, որ երբ Թուրքիան եւ Հայաստանը համաձայնության գան, սփյուռքահայության պարագան խորտակվելու է: Իր հերթին, արտգործնախարար Չավուշօղլուն զգուշացրել է սփյուռքահայերին իրենց գործողություններով չխափանել բանակցությունները: Պարզ է այսպիսով, որ սփյուռքահայության աշխույժ գործունեությունը իսկական փուշ է Անկարայի համար:

Գոյություն ունի սփյուռքահայերի մասնակցության նախադեպ: 1920-ին Փարիզի խաղաղության համաժողովին Հայաստանի կառավարության պատվիրակության ղեկավարը Ավետիս Ահարոնյանն էր, որ ստորագրեց Սեւրի պայմանագիրը: Բայց Ահարոնյանի ստորագրության կողքին ստորագրեց նաեւ Պողոս Նուբարը՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահը՝ որպես սփյուռքի տեղահանված հայերի ներկայացուցիչ, եւ Թուրքիան ճանաչեց երկուսի ստորագրությունները:

Եթե Ադրբեջանը խառնվի բանակցություններին, ապա դրանք

կում իրադարձությունների հիման վրա: Նրանք նախօրոք ծրագրում են դարերի համար, եւ այդ առումով նրանք դեռ կարող են նորից հետապնդել իրենց օրակարգը:

Պատճառը, որ Թուրքիան էլ այդքան հետաքրքրված է հայաստանյան միջանցքով այն է, որ վերջին պատերազմի ժամանակ Իրանն ու Վրաստանը փակեցին նրա զորախմբերի տեղաշարժման ճանապարհները: Ե՛վ Բաքուն, և՛ Անկարան այդ երկրների միջով ունեն քաղաքացիների տեղաշարժման համար հատուկ ճանապարհներ եւ միջանցքներ:

Սահմանային ներկա միջադեպերը արդյունք են **Ալիեւի** վրդովվածության: Նա հույսը դրել էր աշխարհում Թուրքիայի ունեցած կարեւոր դերակատարության վրա: Սակայն Թուրքիայի ներկա կացությունը եւ Ղազախստանում կրքերի հանդարտեցումը փոխեցին զարգացումների ընթացքը եւ մատնանշեցին, որ հետխորհրդային բռնապետերի վերջը եկել է:

Գուցե հենց այս նոր զարգացումների հետեւանքով է, որ Ալիեւը այդքան անշրջահայաց է գործում: Վերջերս անցկացրած մամուլի ասուլիսի ժամանակ նա կոպտել է եւ ծաղրի ենթարկել ԵԱՀԿ Մինսկի խմբին, հայտարարել է, որ այդ կառույցը այլեւս անելիք չունի, քանի որ Ադրբեջանը արդեն լուծել է Ղարաբաղի թնջուկը: «Ի դեպ, այս տարի լրանում է այդ կառույցի հիմնադրման 30-ամյակը: Նրանք կարող են տոնել այդ տարեդարձը եւ տուն գնալ», ասել է նա: Նա նաեւ սպառնացել է խոչընդոտել ԵԱՀԿ-ի գործողությունները տարածաշրջանում, ինչը նշանակում է մարտահրավեր ուղարկել միջազգային հանրությանը: Միջանցքի հարցի վերաբերյալ նա ավելացրել է. «Մենք երկաթգծեր եւ ավտոճանապարհներ կկառուցենք այնտեղ: Ապագայում մտադիր ենք նաեւ էներգակիր խողովակներ անցկացնել Նախիջեւանին էներգիայով ապահովելու համար: Կկառուցենք նաեւ նավթատար խողովակներ:

⇨4

# Հայ-թուրքական «առանց նախապայմանների» երկխոսության ժամանակն ու վայրը

*Իրանական արձագանքներ*

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանում ՀՀ նախկին դեսպան



Դիվանագիտությանը հայտնի է բանակցային գործընթացն սկսելու «լավագույն եւ վատթարագույն պայմաններ» հասկացողությունը, որի մեջ են մտնում բանակցությունների ժամանակն ու վայրը: Որեւէ գործընթացի մասին գնահատականներ տալու համար պետք է այն դիտարկել ընթացող միջոցառման ժամանակի ու վայրի տրամաբանության մեջ:

Այսպիսով, կարեւոր է իմանալ, ի՞նչ պայմաններում՝ ե՞րբ եւ որտե՞ղ են մեկնարկում երկկողմ հարաբերությունների կարգավորման նպատակով ձեռնարկված հայ-թուրքական շփումները:

Սակայն, ո՞վ կարող է առարկել, որ բանակցությունների մեկնարկը տրվում է այն ժամանակ, երբ Հայաստանն իր վրա է կրում Թուրքիայի գործուն ներգրավվածությամբ բռնկված 44-օրյա պատերազմի պարտության խարանը, եւ այն երկրում, որի պաշտպանության նախարարը հպարտությամբ հայտարարում է Արցախում իրականացված ռուս-թուրքական համատեղ բարդ օպերացիայի հաջողության մասին:

Հունվարի 14-ին ՌԴ ԱԳ փոխնախարար **Անդրեյ Ռուդենկոյի** ուղեկցությամբ Մոսկվայում կայացել է հատուկ ներկայացուցիչներ **Ռուբինյանի** եւ **Քըլըչի** «առանց նախապայմաների» առաջին շփումը:

Եվրոմիության խոսնակ **Պետեր Ստանոն** նախապես ողջունել էր Հայաստանի ու Թուրքիայի պատրաստակամությունը՝ աշխատելու երկու երկրների միջեւ հարաբերությունների կարգավորման նպատակով հատուկ բանագնացների (ներկայացուցիչների) նշանակման կապակցությամբ եւ վերջիններիս առաջին հանդիպումն այդ ուղղությամբ կարեւոր քայլ համարել:

Պաշտոնական Բաքուն, որպես հայ-թուրքական հարաբերությունների «բարելավման» գլխավոր շահառուներից մեկը, Ադրբեջանի ԱԳ նախարարի տեղակալ **Խալաֆ Խալաֆովի** բերանով ողջունել է հայ-թուրքական շփումների մեկնարկը:

Հայ-թուրքական շփումների մեկնարկի մասին դրական են արտահայտվել նաեւ Մոսկվան ու Վաշինգտոնը: Եւ այդ դրվատական ուղերձները հնչել են տվյալ երկրների արտաքին գերատեսչությունների ղեկավարներ **Սերգեյ Լավրովի** ու **Էնթոնի Բլինքենի** շուրթերից:

ՆԱՏՕ-ն նույնպես իր աջակցությունն է հայտնել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման կապակցությամբ, այդ գործընթացը համարելով տարածաշրջանում կայունության հաստատմանն ուղղված կարեւոր քայլ:

Էլ չենք խոսում հայ-թուրքական երկխոսության գործընթացի կայացման հարցում առանձնահատուկ միջնորդական դերակատարությամբ հանդես եկող Վրաստանի վարչապետի՝ դեռեւս չհայտարարված, բայց ակնկալվող դրական մոտեցման մասին:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նպատակով գործադրվող ջանքերը ողջունելու մասին Իրանի պաշտոնական դիրքորոշումը, որը պիտի հնչեր ավելի ուշ՝ ԻԻՀ ԱԳՆ խոսնակ **Խաթիբզադեի** շուրթերից, իր մեջ ներառելու էր նաեւ 3+3 ձեւաչափի մասին դրվատանքի խոսքեր:

Մինչ Թեհրանի պաշտոնական տեսակետների հրապարակումը, այդ բացը լրացվում էր Իրանում լույս տեսնող թերթերի ու լրատվական կայքերի ջանքերով:

Իրանական «ԻԼՆԱ» կայքում տեղ գտած վերլուծական հոդվածի հեղինակ **Ալի Ղայեմմաղամին** հետաքրքրել է հայ-թուրքական երկխոսության թեման: Նա Թուրքիայի նախագահ Էրդողանին համարել է դրա գլխավոր շահառուներից մեկը, որը ձգտում է Հայաստանի հետ հարաբերությունների բարելավումից ակնկալվող տնտեսական շահը վերագրել իրեն ու դառնալ Թուրքիայի տարածքով անցնող «մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության կնքահայրը:

Իրանական anaj.ir տեղեկատվական կայքը նույնպես հունվարի 17-ին անդրադարձել է հայ-թուրքական երկխոսությանն, ու չի բացառել, որ այն կարող է տվյալ երկրների՝ 2022 թվականի կարեւորագույն իրադարձությունների շարքին դասվել:

Հոդվածագիրը հարաբերական գոհունակությամբ ու զգուշավոր լավատեսությամբ է արտահայտվել ընթացող երկխոսության մասին, որի համար, հավանաբար, հիմք է ծառայել կողմերի «առանց նախապայմանների» գործընթացն սկսելու պայմանավորվածությունը:

Կայքի փոխանցմամբ, որոշ հայ քաղաքական գործիչներ, հատկապես ԱՄՆ-ում եւ Եվրոպայում, այն կարծիքին են, որ թուրքական իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը որպես նախապայման բանակցությունների օրակարգում չներառելը, հայկական կողմի մեծ բացթողումը կարող է լինել: Սակայն կայքի տեսակետով, առկա է նաեւ հարցի հակառակ կողմը, համաձայն որի, Թուրքիան էլ կարող է բարձրացնել հայոց ցեղասպանության հարցի միջազգայնացման նպատակով թուրք դիվանագետների ու նրանց ընտանիքների անդամների նկատմամբ հայ վրիժառուների կողմից իրագործված «ահաբեկչական» գործողությունների հարցը, որի անտեսումը Թուրքիայի կողմից, ըստ կայքի վերլուծության, դժվար է պատկերացնել:

Իրանական yazeco.ir կայքն էլ հայ-թուրքական լարված հարաբերությունների թեմայից առանձնացրել է հայկական պահանջատիրության հարցն ու դրա բաղադրիչները՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու Թուրքիայի հյուսիսարեւելյան նահանգների նկատմամբ Հայաստանի «հավակնությունների» հարցերը, եւ մանրամասն նկարագրել 2009 թվականին թուրքական կողմի նախաձեռնությամբ մեկնարկած հայ-թուրքական բանակցությունների ձախողման հանգամանքները:

Տվյալ թեման չի վրիպել նաեւ իրանական այլ լրատվամիջոցների ուշադրությունից, որոնցում ներկայացված չեն հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարի մասին հստակ գնահատականներ ու կանխատեսումներ: Փոխարենը, ողջունելի է համարվել գործընթացն «առանց նախապայմանների» մեկնարկելու կողմերի պատրաստակամությունը:

Բայց արդյո՞ք բանակցությունների հաջողության համար նախապայմանների բացակայությունն է ամենակարեւորը, թե՞ էական նշանակություն ունեն նաեւ բանակցությունների ժամանակն ու վայրը:

# Իշխող ՔՊ-ն վանաձորյան թնջուկի համար երկու սցենար ունի

Թեեւ դեկտեմբերի 5-ին Վանաձոր խոշորացված համայնքում նույնպես տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ են անցկացվել, բայց համայնքն առ այսօր ղեկավար չի ընտրել: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մանդատները բաշխել է, ավագանին կարող է ստանձնել լիազորությունները, բայց «Լուսավոր Հայաստան» կուսակցության առաջ քաշած դատական գործընթացների պատճառով ավագանին նիստ գումարել ու համայնքապետ ընտրել չի կարողանում: Բանն այն է, որ ԼՀԿ-ն, չհաշտվելով կուսակցության առաջնորդ Էդմոն Մարուքյանի ծննդավայր քաղաքում նախորդ ընտրությունների հետ համեմատած տասնապատիկ անգամ պակաս ձայներ հավաքելու ու մանդատներ չստանալու հանգամանքի հետ, ամեն գնով փորձում է գոնե մեկ մանդատ ստանալ: Դատարանը սակայն ԼՀԿ-ի հայցը մերժել է: Ավագանին, ըստ տրամաբանության, արդեն կարող է նիստ գումարել, բայց իշխանություններն ամեն կերպ փորձում են ձգձգել դրա անցկացումը: Ու թեեւ նախկին քաղաքապետ, համայնքապետի թեկնածու **Մամիկոն Ասլանյանը** կալանքի տակ է, բայց դատարանը, ըստ օրենքի, պետք է պահպանի նրա՝ ավագանու նիստում համայնքապետ ընտրելու իրավունքը, քանի որ նա դեռեւս մեղադրյալ է: Ըստ «**Ազգ**»-ի ունեցած տեղեկությունների՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութունը վանաձորյան՝ իրենց իսկ կողմից ստեղծված թնջուկի համար լուծման երկու տարբերակ ունի:

Առաջինն այն է, որ մինչեւ քաղաքապետ ընտրելը ցանկանում են քաղաքապետի պաշտոնակատար նշանակել: Ավելին՝ եթե ավագանին նիստ գումարի, ապա ՔՊ-ականները մտադիր են ոչ թե քաղաքապետ ընտրելու, այլ համայնքապետի պաշտոնակատար նշանակելու օրակարգն առաջ տանել: Երկրորդ տարբերակը, որ քննարկում են, մանդատները դնելով՝ նոր ընտրության գնալն է:

# Մեխողն էլ են իրենք, պայտողն էլ

Բավական կատակասեր էկոնոմիկայի նախարար ունենք: Սեփական հայտարարություններից ու խոստումներից հետ կանգնելու համար հարմար բացատրություն է գտել, թե կատակել է: Երկրի տնտեսության պատասխանատուներից մեկը, որ տնտեսական աճի ուղիղ ցուցիչ խցանումներն է համարում, սրամտում է, թե կատակել է՝ ասելով, որ եթե երկնիշ տնտեսական աճ չլինի, հրաժարական կտա: Կատակելո՞ւ համար են Քերոբյանին պորտֆել տվել, կարծում ՝ ոչ: Վստահ եմ նաեւ, որ տրամաբանությունից դուրս համեմատություններ անելու համար էլ չեն նրան կարեւորագույն ոլորտ վստահել, որ խցանումն ու տնտեսական աճն իրար հետ կապի: Ըստ իս՝ պորտֆելը նախարարին տալիս են, որ կառավարի ոլորտը, քաղաքականություն մշակի, ոչ թե որպեսզի կատակներ անի, մարդկանց սին ու սուտ հույսեր տա:

Իհարկե, այս ամբողջ պատմության մեջ Քերոբյանի մեղավորությունը չնչին է, չէ՞ որ վարչապետ Նիկոլ Փաշինյանն է ամեն ինչի որոշողը: «Պարոն Քերոբյանին ես եմ արգելել հրաժարական տալ, եւ ես կորոշեմ՝ յուրաքանչյուր նախարար ու կառավարության յուրաքանչյուր անդամ ինչքան կաշխատի»,- ասում է ՀՀ վարչապետը: Նրա ասածի ենթատեքստը նույնն է, ինչ տարիներ առաջ ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի ասածինը, թե «ինչքան ուզենք, այնքան կխփենք»:

Սոցիալական արդարության խոստումներով իշխանության եկածներն արդեն ոչ թե ակնարկներով, այլ ուղիղ տեքստով են հասկացնում, որ կանեն այն, ինչ կուզեն կամ ինչ հարմար կլինի այդ պահին: Պետք լինի՝ Վահան Քերոբյանն անհեթեթ նոր հայտարարություններ կանի, պետք լինի արար աշխարհով մեկ պախարակել ու պաշտոնանկ անել, ապա աչքն անգամ չեն թարթի:

Սա իշխանության քաղցրությունը կարճ ժամանակում ճաշակելու ու դրանից չհրաժարվելու ցուցիչ է: Ժողովրդի լեզվով ասած՝ «մեխն էլ իրենց ձեռքում, նալն էլ», ու որ պահին ինչ կամ ում պետք է լինի հա՛մ կմեխեն, հա՛մ կպայտեն:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

# Թուրքիայի հետ «առանց նախապայմանների»

⇨3 Մեկը կանցնի Մեղրիով, մյուսը՝ Կապանով, իսկ երրորդը՝ Սիսիանով: Այնպես որ այդ միջանցքը իր մեջ կպարփակի Սյունիքի ամբողջ տարածքը»:

Ալիեւի անարգական խոսքերում հնչել են նաեւ ռազմական սպառնալիքներ: Նա նշել է, որ Ադրբեջանը շարունակելու է վերազինվել, բայց նաեւ ուշադիր հետեւելու է հայկական կողմի ռեւանշիստական գործողություններին եւ ջախջախելու է ամեն մի սպառնալիք, ինչքան էլ այն սարսափելի լինի»: Անշուշտ, Ալիեւի խաղաղության ծրագիրը, որը նա Հայաստանին է պատրաստվում թելադրել, միտված է Ադրբեջանի տարածքային ամբողջականության (Ղարաբաղը ներառյալ) ճանաչմանը Հայաստանի կողմից:

Շարունակելով իր անշրջահայաց քայլերը, Ալիեւը, գուցե ակամայից, Հայաստանի համար նպաստավոր մի քայլ կատարեց անցյալ շաբաթ, մեկնելով Ուկրաինա, որտեղ Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ հնարավոր պատերազմի ղողանջներն են հնչում, եւ փոխադարձ պաշտպանության ռազմական պայմանագիր կնքեց:

Մինչ օրս Ռուսաստանը թողել էր, որ Ալիեւը անշրջահայաց քայլեր կատարի եւ չէր արձագանքել, բայց այս անգամ արտգործնախարար **Սերգեյ Լավրովը** հայտարարեց, որ սահմանազատման եւ սահմանագծման հարցերը Ղարաբաղին չէին վերաբերում, ինչպես Ալիեւն էր պահանջում, կամ ակնարկում:

Այնպես որ, բազմաթիվ խոչընդոտներ կան այս բանակցությունների գործընթացում: Հայաստանը կարիք ունի խաղաղության, որպեսզի ժամանակ շահի եւ արդիականացնի իր զինված ուժերը հաջորդ փուլի համար, որը կարող է մոտ ապագայում լինել:

Անգլ.ից թարգմանեց ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian-Mirror Spectator)

# Հիմա սխալվելը դար է արժենալու

⇨1

Դիցուք այդ կարգի օրենքներից մեկը որոշակի սահմանաչափով կանխիկ շրջանառությունը թույլատրելուց հետո մեր սեփականություն-գումարների անկանխիկ գործածություն սահմանելով՝ դրանք հարկելու օրինագիծն է, որով մարդկանց սեփական գումարներում շուտով փայ կմտնի նաեւ պետությունը, համատարած թանկացումներին զուգահեռ: Չէ, քաղաքակիրթ անկանխիկ գործառնություններին, որ աշխարհում վաղուց է ընդունված, մենք դեմ չենք, բայց աշխարհի կյանքից որակով ու ապահովությամբ հետ մնացող մեր կյանքում մեր ունեցածը նվազեցնելու այս քայլը շուտով կարող է մարդկանց նյարդայնացնելու երեւույթն ունենալ: Կամ ասենք՝ եթե օրական մի հացի, մի կգ կարտոֆիլի եւ մեկ հարյուր գրամանոց թթվասերի ծախսին հազիվ ձգող մեր թոշակառուներին շուտով կիրառվի այդ թթվասերը խանութում ոչ բնական բաղադրիչներով մթերքների դարակում փնտրելու սպառնալիքը (այդպիսի օրենք ընդունեց ԱԺ-ն), իսկ բնական բաղադրիչներով թթվասերը միայն ավելի բարձր գնով ու այլ դարակում անհասանելի դարձնելով նրանց. հա դե՝ վատ չի, կիմանանք, որ մեզ խաբում էին ու թթվասերի տեղակ ինչ-որ անհասկանալի խառնուրդ են առաջարկում, բայց մեկ է, թոշակառուն բնականը չի կարողանա գնել՝ թանկ լինելու պատճառով ու կմնա մեկ հաց-մեկ կգ կարտոֆիլ սխեմայում, չնայած մեր էկոնոմիկայի նախարարությունը շատ մտահոգված է թոշակառուների՝ ճիշտ թթվասեր ուտելով:

Դե իսկ օգնել՝ պատկերացնելու, թե ինչ է կատարվում աշխարհում, այս պահին Ռուսաստան-Արեւմուտք դիմակայության հերթական փուլն ո՞ւր է հասել, ի՞նչով է դա սպառնում Հայաստանին ու Արցախին, եւ այլն՝ դրանք բացատրելու ֆունկցիան խորհրդարանում ո՛չ անհաս պատգամավորներն են վերցնում, ո՛չ խմբակցությունները, նրանք միայն կենցաղային մակարդակով միմյանց դիմազրկմամբ են զբաղված, **Արարատ Միրզոյանի**՝ ընդհանրական-անտեղեկություն այս տիպի ձեւակերպումները չհաշված.« Որեւէ աշխարհաքաղաքական իրողություն պետք է հաշվի առնել այդ մեծ զարգացումների համատեքստում, հատկապես, որ այդ զարգացումները ոչ միայն շատ արընթաց են, այլ նաեւ վտանգավոր ոչ միայն մեր, այլեւ շատ ավելի լայն տարածաշրջանի ու աշխարհի համար»:

Մյուս կողմից ԱԺ-ում կատարվողն օգնում է հասկանալ, թե որ աստիճանի մեծ, մեր խորհրդարանականներին անհաս գործընթացներ են աշխարհում, ու դրա պրոյեկցումը Հայաստանում միշտ եւ հիմա այն աստիճանի սցենարավորված են եղել՝ 1999 հոկտեմբերի 27-ից, Մարտի 1-ից սկսած ու պատերազմով, հետպատերազմյան գործընթացներով վերջացրած, որ սովորական մտածող շերտը պետք է ունենա հզոր երկրների չորս-հինգ հատուկ ծառայությունների հավաքական տրամաբանությունը եւ տեղեկացվածությունը, որ հասկանա ինչն ինչի համար ու ինչից հետո է կատարվում, այդ ըմբռնումով երկրում դրսի վտանգների դեմ պատնեշ մտմտա՝ անկախ իշխանության եւ ընդդիմության պահվածքից, որը մենք չենք տեսնում, եւ որն ի վերջո անհնար է. ունենք այն, ինչ ունենք:

Իսկ աշխարհում պատերազմի սպառնալիքը մեծանում է, Ուկրաինա-Ռուսաստան հակադրությունն ունի իր մետաստազները, կամ հակառակը, հենց դա է մեծ դիմակայության մետաստազ, ինչպես, ի դեպ, Ղազախստանում եղածը,կամ մե՛ր տարածաշրջանում, ընդհուպ Հայոց սահմաններին տեղի ունեցողը (նաեւ՝ՀԱՊԿ խաղաղարարների մուտքը Ղազախստան ներառյալ, որը մեր իշխանությունը մի առանձնահատուկ դրական է գնահատում), ու մենք պետք է հասկանանք, թե ինչ է հետեւելու ամեն պահ, որ կարողանանք մեզ պաշտպանել նախ դիվանագիտորեն, ապա՝ զենքով: Իսկ հասկանալ պետք է ազգովին, ու ոչ թե ԱԳՆ ինչ-որ վարչության ինչ -որ նեղ-մասնագիտական բաժնի մակարդակով, դա պետք է անի նախ ԱԺ-ն, երկրի քաղաքական մարմինը, աշխարհում մեծ պատերազմի բռնկումից հինգ րոպե է պակաս:

## «Բարեւ Ձեզ, ուրախ եմ ծանոթանալ»

Այս միտքը Ստոկհոլմում իրար ասել են Թուրքիայի արտգործնախարար **Չավուշօղլուն** եւ մեր **Արարատ Միրզոյանը**, երկար միջանցքով քայլելիս. աշխարհի գլոբալ դիմակայության ֆոնին, որտեղ Թուրքիան դերակատար է, մերոնք ուզում են հարաբերվել թուրքերի հետ, այն էլ՝ առանց նախապայմանների: Մինչդեռ թուրքական մշտական նախապայմանները՝ երբեք չեն դադարել: Իսկ մենք իրավունք չունենք Ցեղասպանության փաստի ընդունման ու հատուցման մեր նախապայմանները Թուրքիային մոռանալ՝ այդ երկրի պաշտոնյաների կեղծ ժպտեներից հալվելով:

Խորհրդարանում Հայաստանի ԱԳ նախարարի, վարչապետի բացատրությունները Թուրքիայի հետ « դժվար» բանակցությունների եւ ԱԺ փոխխոսնակ **Ռուբեն Ռուբինյանի**՝ հայ-թուրքական բանակցություններում Հայաստանի ներկայացուցիչ նշանակվելու մասին՝ մատնանշում են, որ Հայաստանի իշխանությունը, նրա վարչապետը լիարժեք չեն պատկերացնում այն պատասխանատվության մեծ բեռը, որ ստանձնում են, ասելով, թե Թուրքիայի հետ բանակցություններում Հայաստանի ներկայացուցիչ նշանակված Ռուբինյանը չի որոշում կայացնողը, այլ անձամբ վարչապետը, եւ որ՝ Հայաստանը պատրաստ է առանց նախապայմանների բանակցությունների: Բայց ո՞ւմ անունից, չէ որ ցեղասպանությունից, հատուցումից հրաժարվելը, որը միշտ եւ հիմա էլ պնդում է Թուրքիան, ոչ թե իշխանությանն ընտրած զանգվածի պատասխանատվության տիրույթում է ու ոչ միայն Հայաստանի խնդիրն է, այլ աշխարհի տասն միլիոն հայերի: Ո՞նց կարող եք վստահ լինել, որ այդ տասն միլիոնը հրաժարվում է հատուցումից, ցեղասպանության համար հայերի դատը հետապնդելուց: Կամ ո՞վ՝ մի ողջ իշխանություն լինի, կամ թե մեկ մարդ, կարող է տասն միլիոնի վերաբերյալ որոշման պատասխանատվության բեռի տակ մտնել, ո՞նց կարող է մեկ մարդ որոշել տասն միլիոն հայի փոխարեն,«իհ, Ստամբուլ, հեչ, ոչ մի բան» , չլինելիք բան: Գումարած, որ Թուրքիան դեռ խոսում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը ճանաչելու Հայաստանի պարտավորությունից, Ադրբեջանի նախագահի օգնականը հենց երեկ՝ աշխարհաքաղաքական նոր իրողությունները գնահատելու Հայաստանին ուղղված ակնարկ է անում: Ու միշտ հիշենք, որ Գրիգոր Զոհրապը նույնպես խաղաղության կողմնակից էր, բայց տեսաք , թե ինչ պատահեց նրա հետ:

Իսկ Արցախի հարցում Մինսկի խմբին ապավինելը, որը հստակ նշեց Ա. Միրզոյանը խորհրդարանում եւ Մինսկի խմբի այցելությանը սպասելը էլի կախված են ռուսական-թուրքական կամեցողությունից, որին խանգարելու ռուս-թուրքական ցանկությունը կարտացոլվի (արտացոլվում է) Ադրբեջանի խոսույթում: Ռուսաստանի ԱԳՆ ներկայացուցիչ **Զախարովան** վկա, Մինսկի խմբին ուղղված հումանիտար պարտավորությունների հերթական վկայաբերմամբ:

## Անհասկանալի

Մեծ հաշվով անհասկանալի է, թե ինչու է **Լեւոն Տեր-Պետրոսյանը** ժամանակ առ ժամանակ, հատկապես լարված ճակատագրական պահերի քաղաքական դաշտի մասին դիտարկումներ անում, գնահատականներ տալիս՝ եթե ելք չի առաջարկում տվյալ վիճակից: Իհարկե, քաղաքական ընթացքը լավ իմացողը կարող է գլխի ընկնել նրա եւ նրան մերձ շրջապատի ուզածը, մանավանդ տարբեր ենթադրությունների դուռը բաց է թողնում հենց ինքը՝ Տեր-Պետրոսյանը, իր դիտարկումներում անավարտություն եւ թերասացություններ թողնելով: Թե բա՝ ելքի փնտրտուքը բացառապես հակամարտող կողմերի եւ մտավորականության պարտականությունն է, հասարակության մնացյալ շերտերը իրավիճակի վրա ազդելու լծակներ այս պահին չունեն, իսկ քաղաքագիտական եւ լրատվական դաշտի ակտիվ դերակատարները, գրեթե ամբողջությամբ, սպասարկում են հիշյալ երեք ճամբարների շահերը: Կոնկրետ՝ Լ. Տեր-Պետրոսյանն իրեն ելք փնտրող ո՞ր շերտից է համարում, թե՞ ուղղակի կարդանք ու անցնենք:

Տողատակի սառնությունն , այնուամենայնիվ, նրա գնահատականից փչում է մարդու դեմքին առ այն, որ Հայաստանի համար թերեւս ամենաճակատագրական օրերն ու ժամանակն ենք ապրում, եւ փոքրիկ ժամանակի մեջ սխալվելը դար է արժենալու: Այժմ հատկապես կա սթափ գնահատականների, Հայաստանի հետագա ընթացքի մասին ամենապրագմատիկ վերլուծությունների, խորհրդատվության կարիք, ու Հայաստանում նախագահած բոլոր անձինք պիտի այս պահին իրենց խորհուրդները հանձնեին հանրությանը՝ որպես բաց ծովում հայտնված հայերիս նավի կողմնորոշիչ: Սակայն մենք ընդամենը տեսնում ենք ներքաղաքական գնահատականներ ու գործունեություն՝ հույսներս կտրելով բոլոր նրանցից եւ մտածելով, թե խեղդվողի փրկությունը հենց խողդվողի ձեռքին է:

Նույնը կարելի է տեսնել Հայաստանի խորհրդարանում, որտեղ Հայաստանի նախագահներից երկուսը խմբակցություններ ունեն, ու նոր տարվա առաջին նիստում սկսված բուռն տուրեւառը հենց վկայում է, որ Հայաստանի խորհրդարանական ընդդիմությունը եւս չի ընմբռնում պահի ճակատագրականությունը, իսկ հայ-թուրքական հարաբերությունների պարտադրված նախապատրաստություն ստանձնած իշխանություններին արված հարցադրումներն ավելի շատ վերածվեցին աղմուկ-աղաղակի (գոնե առաջին օրվա ընթացքում), արդար լինենք՝ իշխանության հետ միասնաբար հրահրված աղմուկ-աղաղակի, որ մարդ մտածում է, թե այս աղմուկը հենց նրա համար է, որ բովանդակություն լղոզվի:

Միթե չե՞ք նկատում, որ Հայաստանին շատ արագ մոտենում է աղետը, ու դրա համար ոչ թե ողջ ուժով պետք է գոռգոռալ, կամ արագ իշխանափոխություն տենչալ, այլ մարտահրավերներին համարժեք, քայլերն իմացող ընդդիմություն դառնալ, որովհետեւ այս պահին ոչ թե աղմուկ, այլ մի պահ անգամ լռություն է պետք՝ հասկանալու համար հետագա անելիքը:

Ճիշտ է, ԱԺ նիստի երկրորդ օրը եւ հատկապես ԱԺ-կառավարություն հարցուպատասխանին հայ-թուրքական նոր մեկնարկած «կառուցողական-դրական» հանդիպման մասին հարցադրումները մի փոքր առարկայացան ի վերջո՝ իշխանությունից օրակարգ ու բովանդակություն պարզելու առումով, մանավանդ որ թուրքերն արդեն առ այդ ճանապարհային քարտեզ են հրապարակել (ամռանը «Զանգեզուրի միջանցքը» բացելու վերջնանպատակով), եւ անգամ ԱԺ նիստի առաջին օրը տղայաբար բանավեճի մեջ ներքաշված ԱԺ փոխնախագահի, հայ-թուրքական շփումներում Հայաստանի ներկայացուցիչ նշանակված Ռուբեբն Ռուբինյանն էր փորձում տարբեր դրվագներով վերադառնալ կառուցողական դաշտ: Բայց նախորդել էր (երկուշաբթի օրը) ըստ էության Հայաստանի հեռանկարին սպառնացող թեմայով (հայ-թուրքական վերջին շփումների) մի խոսակցություն, թե ո՞վ է Հայաստանում թուրքական ազդեցության գործակալ, Ռուբեն Ռուբինյանի մասնակցությամբ, որն իջավ տղայական հաշիվ մաքրելու մակարդակին, անգամ մի պահ դուրս եկավ հունից:

Է, մտածեցինք, եթե մեր խորհրդարանում Հայաստանի ներկայացուցիչը չի տիրապետում ինքն իրեն, էդ բանակցություններին թուրքական նենգությանը դիմակա ո՞նց է անելու: Կամ ի՞նչ իմաստ ունի մեկ օր առաջվա աղմուկից հետո, հաջորդ օրերին էլ միմյանց ազդեցության գործակալ անվանել: Ապրեք, ընդդիմություն եւ իշխանություն, իրար սազում եք, բայց, այնուամենայնիվ, երկուսիդ էլ առաջարկում ենք նորից լսել պատգամավոր **Գեղամ Նազարյանի** խոսքը ԱԺ ամբիոնից եւ ականջալուր լինել՝ օրվա հրամայականները պահանջում են ընդդիմությունից էլ, իշխանությունից էլ խոհեմ լինել եւ անիմաստ աղմուկ չհրահրել, այլ բովանդակային քննարկմամբ վեր հանել նոր մարտահրավերները:

Այ բալամ, դուք անելիք չունե՞ք, **Էրդողանը** հայերիս անվանում է անհայրենիք-թափառական ցեղախումբ, դուք ինչո՞վ եք զբաղվում. ընդդիմությունն ասում է դեմ չէ առանց նախապայմանների հայ-թուրքական հարաբերությունների, բայց որտե՞ղ տեսավ առանց նախապայման հարաբերությունների մասին անգամ խոսակցություն, մի հատ թուրքական մամուլը նայեք: Իշխանությունն էլ, անհայրենիք ցեղախմբի ներկայացուցիչ բնորոշմանը չհակադրվելով եւ ցեղասպանողին իր բնորոշումը չտալով՝ ուզում է հարաբերություն հաստատել հայերին վերջնականապես ոչնչացնել ցանկացողի՝ էրդողանյան Թուրքիայի հետ, **Խաչատուր Սուքիասյանի** ասած օգուտները ստանալ ու Գյումրիում թուրքերին բուժել, բայց բարկանում է, երբ հարցնում են Հայաստանի ներկայացուցիչ նշանակելու իրավական հիմքերից, կամ հայ-թուրքական օրակարգը բացահայտելու պահանջ ներկայացնում. հանգիստ-հանգամանալից ամեն ինչ բացատրեք, դուք միայն մենեջեր եք՝ հայ ժողովրդին սպասարկող, եւ այդ հարցերը ձեր մենաշնորհը չեն:

Ընդհանրապես՝ ձեր կռիվների մեջ կանգ առեք ու սկսեք անելիքը բաժանելով կառուցել այն քայլերը, որոնք արդյունավետ կլինեն հատկապես այս վտանգավոր ժամանակի մեջ:Գեղամ Նազարյանի ասած միասնական նավը որ խորտակվի, դրա մեջ ազդեցության գործակալն էլ է լինելու, գործակալ փնտրողն էլ...

Դե բայց ինչ եմ ասում՝ Հայաստանի շուրջ տեղի ունեցողը, Հայաստանի ներսուդրսում կատարվողը, Հայաստանի քաղաքական ուրվագիծը այնքան սարքված-նախապատրաստած-կառավարելի են թվում՝ սեփական քաղաքագետներով ու վերլուծողներով համեմված, որ երբեմն սիզիփոսյան աշխատանք է թվում անգամ ինչ-որ անկողմնակալ բան գրելը, ինչ-որ բան փրկել փորձելը:

***Հ.Գ.***-*Հինգշաբթի երեկոյան «Հայաստան» խմբակցության պատգամավոր Անդրանիկ Թեւանյանը վերջապես ներկայացրեց իր մոտեցումները՝ առանց նախապայմանների հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ պատկերացումների մասին, դա գնահատելի է:*

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ
պգդ, պրոֆեսոր

# Հայկական հարցը վաղուց արդեն միայն հայկական չէ

Վերջերս ԶԼՄ-ներով եւ իշխանական բոլոր լծակներով լուսաբանվում եւ մեր առանց այն էլ թմբիրի մեջ գտնվող հասարակությունում ներբեռնվում է հայ-թուրքական անխուսափելի մերձեցման, հաշտվելու անհրաժեշտության եւ նույնիսկ դարերից եկող բարեկամության եւ այլ համանման գաղափարներ: Պատվերով այդ համերգի տարատեսակ ու բազմագույն գրչակները քափ ու քրտինքի մեջ գրում ու «ապացուցում են», որ արդեն մի քանի հարյուրամյակ օտարներն են իրենց շահերից ելնելով թշնամացրել մեզ՝ երկու բարեկամ ժողովուրդներին ու հասունացել է ժամանակը հաշտվելու եւ երանելի ժամանակներին վերադառնալու համար:

Իրենց՝ թուրքերի մեջ էլ երբեմն հայտնվում են «իրատես» մտավորականներ, որոնք «անկեղծորեն» ցավում են անցյալում տեղի ունեցած անցանկալի իրադարձությունների համար (այդպես են բնորոշում ցեղասպանության եզրույթը) եւ հիմնախնդրի վերաբերյալ տարատեսակ հայտարարություններ անում: Դրանք էլ առիթ են դառնում, որ օր օրի նոր սկանդալ հասունանա այդ երկրում:

Օրերս The Yerevan-post-ը ներկայացրեց մի քանի այդտեսակ հրապարակումներ, որտեղ թուրք որոշ քաղաքական գործիչներ, լրագրողներ, ինչպես նաեւ հրապարակախոսներ գտնում են, որ թուրքերը պիտի ներողություն խնդրեն եւ փոխհատուցում տան հայերին: Օրինակ է բերվում թուրք քաղաքական գործիչ, Մեջլիսի պատգամավոր **Ուֆուկ Ուրասին**, որ գտնում է, թե հարկավոր է ստեղծել իրավական եւ քաղաքական այնպիսի պայմաններ, որ Սփյուռքում բնակվող Թուրքիայի նախկին քաղաքացիներ (դա նորություն չէ, թուրքերը աշխարհասփյուռ հայության ու նրանց ժառանգներին իրենց սփյուռքն են համարում) հայերի ժառանգները կարողանան վերադառնալ իրենց հայրենիք ու հանգիստ ապրեն այնտեղ: Որ հայ-թուրքական հարաբերությունները պիտի մի օր անպայման կարգավորվեն, իսկ «Թուրքիայի սահմանադրությունն էլ պիտի հնարավորություն տա, որ փոխհատուցվեն հայերի նախկինում կրած բոլոր վնասները»: Ուրասի ասելով՝ թուրքերը ոչ միայն պիտի ներողություն խնդրեն, այլեւ փոխհատուցումն էլ պետք է տան առանց որեւէ նախապայմանների:

Հայտնի լրագրող, հրապարակախոս **Օրհան Քեմալ Ջենգիզն** էլ է գտնում, որ Թուրքիան Հայոց Ցեղասպանության համար պետք է ներողություն խնդրի ու հայերին ֆինանսական փոխհատուցում տալու համար օրենսդրական ճանապարհներ ստեղծի: Միեւնույն ժամանակ նա շեշտել է, որ որեւէ դատարան Թուրքիային այսօր դատել չի կարող, քանի որ 1915թ. մեղավորներից ոչ մեկն այլեւս կենդանի չէ: Նա առաջարկել է խնդրի լուծման իր տարբերակը՝ «Թուրքիան կարող է ասել, որ 1915թ. դեպքերը մարդկության մեծ ողբերգություններից է եւ մենք ընդունում ենք այն: Մենք դատապարտում ենք դրա կազմակերպիչ «Միություն եւ առաջադիմություն» կուսակցությանը եւ այդ ողբերգական իրադարձություններին զոհ դարձած մեր հայ եղբայրներից եւ նրանց ժառանգներից ներողություն ենք խնդրում»: Լրագրող- հրապարակախոսը պնդում է նաեւ, որ Թուրքիան միայն ներողություն խնդրելով չի կարող բավարարվել, եւ ֆինանսական փոխհատուցում տալու ճանապարհները նույնպես պիտի գտնվեն. «Ուստի առաջարկում եմ, հայերի կրած վնասների հատուցման համար իրավական ճանապարհներ ստեղծել: Այդպիսով կլուծվի փոխհատուցման թե՛ բարոյական, թե՛ ֆինանսական կողմը»,- նշել է Ջենգիզը:




Հետաքրքրական է նաեւ այն իրողությունը, որ հայ-թուրքական մերձեցման գործընթացը ողջունում են ԱՄՆ-ը, Եվրոմիությունը եւ նույնիսկ ղազախական ներխուժման աղմուկը չմարսած Ռուսաստանը: Բոլորն էլ տարբեր մակարդակներով ու տարբեր շուրթերց ընդգծում են այդ քայլի շրջադարձային լինելու հանգամանքը եւ այնպիսի շեշտադրումներով, որ կարծես աշխարհիս ապագան հենց միայն դրանից է կախված:

Ակամա հարց է առաջանում. ինչո՞ւ, ի՞նչ նպատակով եւ ո՞ւմ կողմից է սա արվում եւ ո՞ւմ է ձեռնտու այս ամենը: Հասկանում եմ, հավերժ թշնամի մնալն էլ մի բան չի, բայց որ արդեն ցեղասպանության զոհերի հիշատակի վրայով են փորձում անցնել, ինձ համար անհասկանալի ու անընկալելի է: Ականջդ կանչի **Շահան Նաթալի**. «Եվ, իսկապես, մարդասպանը միշտ էլ պատեհություն կարող է ունենալ հանցանքից ազատվելու, որովհետեւ ապրում է, իսկ ամենից անմեղ սպանվողն անգամ, հակառակ բոլոր վճիռներին, մեռավ գնաց»: Մարգարեական խոսքեր...

Ակամա հիշեցի զորավար **Անդրանիկին**. «Դուք հաշտվեցաք թուրքերուն հետ, բայց ինձ թույլ տվեք անհաշտ մնալու, ես թուրքի հետ չեմ կրնար հաշտվիլ մինչեւ իմ մահը: Բայց ես ձեզ գուշակություն մը կուզեմ ընել եւ կուզեմ որ լսեք: Եթե այս հեղափոխական կոչված թուրքերը օր մը ձեզ չի կախեցին, ես մարդ չեմ: Օր պիտի գա, որ այս հեղափոխականներն ալ պիտի դառնան Սուլթան Համիտի պես գազան մը եւ բոլորիդ ալ պիտի հոշոտեն...»: Զորավարը ծնվել ու ապրել, սեփական մաշկի վրա էր զգացել թուրքի ով լինելը, ու թեեւ մարգարե չէր, սակայն կյանքը ցույց տվեց, որ միանգամայն իրավացի էր:

Լավ, դրանք մեր մեծերն են: Բա մեծ մտածող ու համաշխարհային գրականության մեծ երախտավոր **Էռնեստ Հեմինգուեյն** ինչու էր ասում. «Եթե ուզում եք ինձ սպանել, պարզապես ինձ թուրք անվանեք: Եվ ես կմեռնեմ ամոթից»: Թուրքերն էլ լավ տեղյակ են այդ ամենին, սակայն քանի որ հրաշալի դիվանագետներ են, հարմար նկատելով պահը՝ փորձում են կրկնակի շահած դուրս գալ: Նախ, որ պարտված Հայաստանն իր անփորձ վարչախմբով ու սենսացիոն նորություններ բերելու մարմաջով պատրաստ է գնալ ցանկացած զիջումների, հետո էլ շահերի բախումների ու նոր աշխարհակարգ ձեւավորելու շեմին կանգնած մեր մոլորակի հզորներն օր առաջ ուզում են որեւէ կերպ լուծել մեր տարածաշրջանի անհանգստությունները, որպեսզի կարողանան ավելի մեծ խնդիրներին ուշադիր լինել: Հերն էլ անիծած, թե այդ ընթացքում քանի անմեղ երիտասարդներ կմատաղվեն, քանի ընտանիք չի կազմվի, քանիսը անտեր կմնա...

Արդեն զավեշտի է վերածվել. Մի ձեռքով «հաշտություն» ենք բանակցում, մյուսով հերթական անմեղ զոհերին ենք հողին հանձնում: Ինձ շատ մոտ արյունակից հարազատներից մեկն էլ է մասնակցել ամսի 11-ի մարտերին, որը ամենալուրջ միջադեպն էր նախորդ տարվա մայիսի 12-ից հետո, երբ ադրբեջանական զինված ուժերը ներխուժեցին ՀՀ տարածք: Ամեն ինչ սկսվել էր այն բանից հետո, երբ ադրբեջանական զինուժը կրակ էր բացել հայկական տրակտորի ուղղությամբ, որը մաքրում էր դիրքերի միջեւ գտնվող ճանապարհների ձյունը: Դրանից հետո հայկական ուժերն անմիջապես պատասխանել են, որի հետեւանքով ադրբեջանցի զինծառայող էր սպանվել: Ըստ հավաստի տեղեկությունների՝ հունվարի 11-ին Վարդենիսում պայթեցվել էր հակառակորդի չորս հենակետ եւ ռազմամթերքի պահեստ: Ադրբեջանական զինուժը տվել էր 18 զոհ, մենք՝ երեք: Ադրբեջանը կիրառել է ԱԹՍ-ներ, հրետանի, իսկ «բայրաքթարով» հայկական դիրքը խոցելուց հետո նույն ուղղությամբ նաեւ նռնականետերի մոտ 30 հարված է հասցրել, ինչը փաստում է, որ նրանք ռազմական բախումների հարցում լուրջ են տրամադրված:

Այդ ռազմական գործողությունների մասնակից ազգականս մարտական ուղի անցած սպա է, պինդ ու զուսպ: Չի խոսում, չի պատմում, սակայն էս անգամ երկու օրով տուն էր եկել ու...մասաղ արեցինք: Մեր շնորհակալությունն հայտնեցինք Բարձրյալին, որ հրաշքով փրկել է նրան, որ տարիքն առած ծնողների, մինչեւ վերջին բջիջը նրան նվիրված կնոջ ու երկու դեռահաս երեխաների հենարանին պահպանել էր: Իսկապես՝ այդպես: Քանի որ անգամ իրավիճակին փոքր ինչ ծանոթ որեւէ մարդ այլ կերպ չի գնահատում տեղի ունեցած հրաշքը: Հասկանալի պատճառներով ավելին ասել կամ գրել չի կարելի, սակայն այս առիթով մի դիտարկում եմ ուզում կատարել: Երկար ժամանակ է մեզանում մի տխուր ավանդույթ է ձեւավորվել՝ մարդը պիտի զոհվի կամ առնվազն հաշմվի, որ նրա մասին խոսվի, գրվի: Իսկ եթե հրաշքով կենդանի է մնացել, դրա մասին քիչ թվով մարդիկ կիմանան: Որքան կարողացա ճշտել, նույնիսկ անուն-ազգանունն ասելը ցանկալի չէ: Ինչո՞ւ, նա մեղավո՞ր է, որ իր պարտականությունները փայլուն կատարել է, բայց չի զոհվել: Առանց այդ մարտական գործողությունների էլ նրանք ամեն օր հերոսանում են: Զյան, ցրտի, աշխարհից կտրված կենցաղով ապրելն ու մարտնչելն արդեն հերոսությունը նրանց համար կենցաղ է, ուստի նաեւ ամենայն մեծարանքի ու խոնարհման արժանի: Մեր ամեն ինչից անտեղյակ, սեփական կամ վարձակալած ինքնաթիռով տաք երկրներ գնացողեկող հասարակությունն էլ սկսել է «հոգնել ու ձանձրանալ», որ նրանք երբեմն իրենց թույլ են տալիս անձայն տրտնջալ:

Ժամանակին միանգամայն իրավացիորեն ասվում էր, որ եթե Հայաստանը կորցնի Արցախը, ապա Ռուսաստանը կկորցնի Հայաստանը: Հայերը միակ ազգն են, որոնք կամավոր մտել են ՌԴ-ի կազմ: Հեռավոր 1721 թ-ին Արցախի Գանձասար տաճարում կայացած հայ իշխանների համաժողովում նշվել է, որ Պետրոս առաջինից դիմում կա, որով խնդրում էր հայերին ընդունել Ռուսաստանի քաղաքացիություն: Այդ ժամանակից ի վեր, անցած 300 տարիների ընթացքում Հայաստանը եւ հայ ժողովուրդը միշտ եղել է ամենահուսալի հենակետը, Ռուսաստանին աջակցողը Այսրկովկասում: Հայաստանը ՌԴ-ին տվեց ականավոր շատ պետական գործիչներ, զինվորականներ, գիտնականներ: Միայն Լորիս-Մելիքովն արժե ամեն բան, իսկ Լազարեւը, մարշալ Բաղրամյանը, ծովակալ Իսակովը... Նրանք շատ են: Եվ նրանք բոլորը հայեր էին, որոնք հավատով ու ճշմարտությամբ ծառայեցին Ռուսաստանին: Սակայն այսօր Գանձասարն ու Շուշիի Ղազանչեցոց տաճարը պարզապես կարող են ռմբակոծվել կամ սրճարանի վերածվել թուրքերի կողմից: Այդտեսակ կառույցների թիվը հարյուրավոր է Արցախում: Իսկ ազերիները պարզապես հայտարարում են. «Մենք միշտ եղել ենք այստեղ, սա մեր հողն է, որ հայ եկվորները զավթել են այն. սա հայկական ճարտարապետություն չէ, այլ ալբանական: Հայերը էստեղ տեղափոխվել են ռուսների միջոցով»:

Պատմաբանիս կարծիքով, այն, ինչ այսօր կատարվում է Հայաստանի հետ, շատ նման է 1939-ի սեպտեմբերին Լեհաստանում տեղի ունեցածին: Նույն տարածքային հարցը, ուժերի նույն բացարձակ անհավասարությունը՝ ագրեսիայի մի կողմից, ոչ թե մեկ այլ 2 երկիր, միջազգային ահաբեկչական կազմակերպություններ: 3 հզոր ուժ ընդդեմ երեք միլիոնանոց Հայաստանի: Ես պարզապես չեմ հասկանում, թե ինչ է կատարվում, եւ «հավասարաչափության» հայտարարված քաղաքականությունը, ինձ թվում է, երկու միակցիչի վրա նստելու փորձ է: Իսկ խաղաղության բանակցությունները՝ հերթական անհաջող փորձ՝ մեր վաղեմի թշնամու անհագ ցանկություններին հագուրդ տալու հնարավորություն: Դա պետք է լավ ըմբռնի յուրաքանչյուր հայ, ռուս ազգային եւ իշխանական էլիտան, մեր մյուս հարեւանները, քանի որ Հայկական հարցը վաղուց արդեն միայն հայկական չէ...

5-20.01.2022

Ազգ ՀԱՎԵԼՎԱԾ ՄՇԱԿՈՒՅԹ
Թիվ 2(5690)
21 ՀՈՒՆՎԱՐ 2022

## Ռազմիկ Դավոյանի հիշատակին

# Էդուարդաս Մեժելայտիս

### Մարդասիրական պոեզիա



Հայաստանն անսահմանափակ պոեզիայի երկիր է: Եվ որքան խորանում ես նրա բիբլիական պատմության խորքում ու ծանոթանում այս երկրի առասպելական մանրամասներին, այնքան լավ ես հասկանում, թե ինչու է այստեղ պոեզիան անսահմանափակ: Գրիգոր Նարեկացի, Նահապետ Քուչակ, Եղիշե Չարենց, Պարույր Սեւակ, Վահագն Դավթյան, Համո Սահյան եւ ինձ համար սիրելի դարձած շատ այլ բանաստեղծներ, որ գրել են հայկական արեւի տակ, ես նրանց հենց այդպես էլ պատկերացնում եմ. բիբլիական Արարատ լեռան՝ այստեղ գոյություն ունեցող յուրահատուկ կանաչի, արեւի յուրահատուկ դեղինի ու երկնքի յուրահատուկ կապույտ ֆոնի վրա: Այդ ֆոնի վրա նրանք Նոյյան աղավնու նման իրար են փոխանցում ձիթենու ճյուղը՝ որպես պոետական գրիչ, ու շարունակվում իրար մեջ՝ որպես անսահմանափակ պոեզիա արարողներ:

Յուրաքանչյուր առասպել ավարտվում է ֆիզիկական մահով եւ հոգեկան հաղթանակով: Հայաստանը անսահմանափակ առասպելների երկիր է: Ուստի հոգեկան հաղթանակներն այստեղ շարունակում են ծնունդ տալ իրար:

Առասպելներից ծնված հոգեկան հաղթանակների գոյությունը ես ավելի կոնկրետացված զգացի, երբ ծանոթացա Ռազմիկ Դավոյանի բանաստեղծությունների հետ: Ես անմիջապես զգացի, որ նա հենց այսպես գրող լինելու համար եւ համառ ջանքերով չի ստեղծագործել: Հարյուրամյակներ, գուցե թե նաեւ հազարամյակներ շարունակ նրա գրչի համար պատմական մշակութային ու հոգեւոր հող է նախապատրաստվել: Ռ. Դավոյանը ժառանգորդ է: Առասպելից ծնված բանաստեղծականությամբ հարուստ ազգի ժառանգորդը: Ստացել է ժառանգություն Նարեկացուց: Գենետիկորեն ու հոգեւոր ոլորտներով նրան է անցել Նարեկացու փիլիսոփայական միտքը: Եվ եթե Նարեկացու առասպելական կյանքն ավարտվել է ֆիզիկական մահով, նրա ոգեղեն աշխարհը հաղթել է մահին, քանի որ կասկածից վեր է, որ անցել է, շարունակվել բանաստեղծ Ռազմիկ Դավոյանի մեջ: Նարեկացու ոգու աշխարհը մահ չի ճանաչել, քանի որ մահից շատ մեծ ընդգրկումներ ունեցող սիրո աշխարհ է այն: Ահա թե ինչ է շարժել նաեւ Ռազմիկ Դավոյանի գրիչը՝ Սերը մարդկության եւ մոլորակի ներդաշնակ գոյության նկատմամբ:

Մարդասիրական պոեզիայի մեջ անչափելի մեծություն է Պարույր Սեւակը, որի հետ ես շատ հետաքրքրական ծանոթություն ու բարեկամական հարաբերություններ ունեցա: Սեւակի անձն ինձ մշտապես ինչ-որ անտիկ բան է հիշեցնում: Այս զարմանալի պոետիկ երկրում ես սեւակյան անտիկ գեղեցկության, ռեալականության կողքին գտա մի բոլորովին ուրիշ գեղեցկություն՝ Ռ. Դավոյանի պոեզիան, որի գեղեցկության փայլն ասես իջնում է երկնային ոլորտներից: Մարդկանց աշխարհն ու տիեզերական անսահմանությունն իրար մեջ տարածելու ամբողջական սիրո պոեզիա է Ռ. Դավոյանի պոեզիան: Ես չեմ կարող անտարբեր անցնել ու չհիանալ նրա այն տողերով, ուր բանաստեղծը, իր երկրային ներկայության մեջ իրեն մոլոր ուլի նմանեցնելով, ի վիճակի է ցրիվ գալ, տարածվել տիեզերքում, որպեսզի կարողանա ստանալ իր ամբողջական հավիտենականության մեջ գոյատեւող ամբողջական պատկերը:

*Ես այստեղ չեմ հիմա,*
*Ես ինձ փչեմ հիմա,*
*Խլածաղկի նման կանհետանամ օդում:*

Սեւակի ստեղծագործական լաբորատորիայում շռնդալից ձեւով են աշխատել նրա սիրտն ու միտքը՝ խոսելով իրար հետ համահունչ ձեւով: Դավոյանը լաբորատորիայում թրծված ոսկով մարդկային ոգեղեն ոլորտները զարդարելու, հենց այդ ոլորտներում էլ այն օգտագործելու ճանապարհ է հարթել:

Ի՞նչ կարող է անել բանաստեղծի սիրտը, միտքն ու ոգին՝ այդ եռամիասնությունը, երբ արդեն գիտի մարդկանց երկրում ճաշակվածի գինը, բնության վերընձյուղվելու գաղտնիքը, եւ ձգտում է դեպի հավերժություն: Նա կկանգնի ծառի առջեւ ու խնդրանքով կդիմի նրան, թե՝ «Բա՛ց կեղեւդ, ծառ»:

*Առ ինձ կեղեւիդ մեջ.-*
*Այս անծաղիկ դարում*
*Ես կձուլվեմ քեզ հետ*
*Որպես փոքրիկ գարուն:*

Հետո, երբ արդեն ձուլված կլինեն իրար, եռամիասնությունն այսպես՝

*Որպես լեգենդ պայծառ,*
*Կբարբառի նրան*
*Անհուն, կորած մի սեր*
*Եվ մի կարոտ անծայր:*

Գոյություն ունի բանաստեղծական երկրաչափություն, որի գաղափարը շատ ճշմարիտ ձեւով մեկնաբանել է Ալեքսանդր Բլոկը: Եվ այն, ինչ վերաբերում է բանաստեղծի ստեղծագործության երկրաչափական պատկերին, իր մեջ ներառում է բարության, լույսի եւ ազատության փիլիսոփայությունը: Հենց դրա հետ էլ այնքան համահունչ է Ռ. Դավոյանի պոեզիան:

Ուղղակի զարմանալի ու հրաշալի է այն, որ բլոկյան երկրաչափական եռանկյունին Ռ. Դավոյանի մոտ դրվում է մի բարեբեր ու երանելի մթնոլորտում, որի անունը Սեր է: Այսինքն՝ Ռ. Դավոյանի ստեղծագործական ամբողջականությունը սիրո հավաքական կերպարն է:

Պարույր Սեւակը, որ մարդասիրության մի հսկա փարոս է, աշխատում է մարդասիրական այն լաբորատորիայում, ուր առավել մարդկային է դարձնում մարդուն, սիրտ է կարում սրտին, առանց հապաղելու՝ մերժում է սրտի վրա բույն գտած չարի՝ ստորի, կեղծիքի օջախները: Մարդասիրական սեւակյան այդ հսկա փարոսից աչքը չկտրող Ռ. Դավոյանի ստեղծագործական աշխարհը, ուղեցույց լույսի գաղտնիքն իմացողի վստահությամբ, երջանկության համը ճաշակածի երանությամբ, կանչում է բոլորին՝ նավարկելու Սիրո ջրերում:

Ռ. Դավոյանը խորքով ազգային բանաստեղծ է: Թեեւ նա պատկերներ չի նկարել Հայաստանի մասին. այդ վարպետորեն է արել Մարտիրոս Սարյանը, թեպետ բառային գունավորումներով չի պատկերել նրա քարերը, արեւը, միրգը եւ այլն: Նա ազգի պոեզիային, անսահման գեղեցիկ ջրերին միացել է ազգի առասպելներից, հույսից, հավատից, ծնունդ առած գետակներով՝ ամրացնելով ոգեղեն կապի օղակները անցյալի ու ներկայի միջեւ:

Ռ. Դավոյանի պոեզիան ինձ համար բացահայտեց Հայաստան երկրի եւ տիեզերական անսահմանության ոգեղեն կապը: Ահա թե ինչ մեղրահաց է գենետիկորեն փոխանցվել նրան, որի վրա նա անընդհատ քաղցրություն է ավելացնում եւ դեռ պիտի ավելացնի:

**Լիտվերենից թարգմանեց**
**ՖԵԼԻՔՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**

**ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ**
**Նուազի լը Գրան, Ֆրանսիա**

## Գոյժ մահուան՝

# Տաղանդաւոր եւ զգայուն գեղանկարիչ Յարութիւն Թորոսեանի



Յունուարի 10-ին փարիզեան շրջանի հիւանդանոցներէն մէկուն մէջ մահացած է Յարութիւն Թորոսեանը:

Լիբանանի գեղանկարչական աշխարհին մէջ յայտնի դէմք էր Յարութիւն Թորոսեան:

Ան ծնած էր 1933ին, Պէյրութ: Մաս կը կազմէր հայ արուեստագէտներու սերունդի մը: Բազմաշնորհ արուեստագէտ էր: Միաժամանակ կը սիրէր գրել: Հետաքրքրական է իր «Անկարելի սէր» գիրքը: Իր գեղանկարչական ուսումը ստացած էր Լիբանանի Գեղարուեստից վարժարանին մէջ, ապա՝ Փարիզի Գեղարուեստից Ազգային Բարձրագոյն դպրոցին՝ նկարչութիւն, փորագրութիւն (gravure) եւ որմնանկարչութիւն (fresque):

Ունի հայերէնով հրատարակութիւններ եւ իր գեղանկարներու ներկայացման ալպոմներ:

Ան անդամ էր Լիբանանի գեղանկարիչներու եւ քանդակագործներու միութեան եւ Ֆրանսայի Արուեստագէտներու պալատին:

Յարութիւն Թորոսեանի ստեղծագործական ներշնչման ենթահողը երրեակ է. ծննդավայր Լիբանանը, արմատներու եւ սիրոյ հայրենիք Հայաստանը, եւ Ֆրանսան՝ իր արուեստի մեծութիւններով:

Վերջին տարիներուն քանի մը անգամ միասին գտնուեցանք Պէյրութի ցուցահանդէսներուն եւ նուագահանդէսներուն: Ֆրանսայի մէջ յաճախ իրարու հանդիպեցանք Մոնթրէօյի իր տունը եւ արձակուրդի օրերուն՝ Նորմանտի, Վիլլէր-սիւր-Մէր կամ Տովիլ ծովափնեայ քաղաքները: Կարօտով կը խօսէր Լիբանանի եռուն կեանքին մասին, ինչպէս՝ իր ընկերներուն:

Յարութիւն Թորոսեանէն իբրեւ յիշատակ կը պահեմ երեք մերկուհիներու գեղանկարներ, որոնք գեղեցիկի եւ կեանքի մասին կը վկայեն:

Անոնք մնայուն ներկայութիւն պիտի ըլլան գիրքերուս կողքին, շարունակելով Նորմանտիի մեր զրոյցները, որոնք կը մեղմէին կարօտներ եւ աքսորի տխրութիւնները:

Արուեստ, գրականութիւն, բանաստեղծութիւն ԲԱՆՆ իսկ են, մեզմէ առաջ սկսած, մեզմով շարունակուող եւ դէպի գալիքները ընթացող: Ինչե՞ր ըսած է Գեղեցիկը: Յարութիւն Թորոսեանի մերկուհիները ի՞նչ կ՚ըսէին իրեն, ի՞նչ կըսեն արուեստասէրին, ի՞նչ պիտի ըսեն վաղը:

Կը դիտեմ: Ինք կը խօսի իր զգացումներով:

Կը մնայ ներկայութիւն:

Այդպէս է Բանի եւ Արուեստի բաց պատուհանը:

Լիբանանի արուեստի կեանքին եւ անոր զարգացման մէջ իր տեղը ունէր Յարութիւն Թորոսեան, ինչպէս իրմէ առաջ շիջած Զաւէն Խտըշեան, Լիւսի Թիւթիւնճեան եւ շատեր: Իր սերունդէն ուրիշներ, հակառակ Լիբանանի եւ լիբանանահայութեան ապրած խոր տագնապին, կը շարունակեն ստեղծագործել եւ կենդանութեան շունչ տալ հայ կեանքին:

Իր ետին տաղանդաւոր արուեստագէտի պայծառ յիշատակ կը թողու Յարութիւն Թորոսեան:

Օր մը, յաղթահարելէ ետք ներկայի բարդութիւնները, Սփիւռքի հայ արուեստագէտներու թանգարան կը ստեղծուի՞ Հայաստանի մէջ, որպէսզի հայկական ժառանգութիւնը պահուի: Այդ կ՚ըլլայ օտար երկինքներու տակ տարածուած հայ միտքի լոյսին հայրենիքին տուած տիրութեան եւ սիրոյ տուրքը:

Յարութիւն Թորոսեանի հետ արուեստասէրներ իրենց անաւարտ զրոյցները պիտի շարունակեն իր նկարներուն հետ:

**11 յունուար 2022, Նուազի-լը-Կրան**



# Գագո Ջեքսոն.
## Մայքլ Ջեքսոնի նմանակը Վանաձորից

**ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ**

***Փոփ երաժշտության արքա Մայքլ Ջեքսոնն ամբողջ աշխարհում ունի նմանակներ: Ռուսաստանում նրա նմանակներից մեկը մեր հայրենակից Գագիկն է, որը հանդես է գալիս Գագո Ջեքսոն անվամբ: Ծնվել է Վանաձորում, վաղ տարիքից սիրել է պարել, նկարել, նմանակել հայտնի մարդկանց: Մասնագիտությամբ ատամնատեխնիկ է: 1999 թվականից հանդես է գալիս որպես Մայքլ Ջեքսոնի նմանակ: 2005 թվականին հրավիրվել է աշխատելու Մոսկվայի «Դաբլ Պլյուս» նմանակների պրոֆեսիոնալ թատրոնում: 2009-ին իր դեբյուտը կատարել է ռուսական «Փառքի րոպե» հեռուստաշոուում, նույն թվականին դարձել «Փառքի րոպե» միջազգային գալա շոուի հաղթող եւ գավաթակիր` մրցելով տարբեր երկրների այդ մրցույթների եզրափակիչ փուլի մասնակիցների հետ: 2010-ին Գագիկը դարձել է նույն մրցույթի ֆինալիստ: Մայքլ Ջեքսոնի «Black or White» երգի նրա կատարումն ընդգրկվել է «Փառքի րոպեի» լավագույն քսանյակում: Նաեւ 2008 թվականի պարի առաջնությունում գրավել է առաջին տեղը, ստացել բազմաթիվ դիպլոմներ եւ վկայականներ, ինչպես նաեւ վկայական ստացել Ռուսաստանի Պետական սուրհանդակային ծառայությունից: Գագո Ջեքսոնը ելույթներ է ունենում Ռուսաստանի տարբեր քաղաքներում` ինչպես կորպորատիվ, այնպես էլ թեմատիկ երեկույթների եւ բանկետների ժամանակ, դիսկոտեկներում եւ համերգասարահներում:***

**-Գագի՛կ, աշխարհում փոփ արքայի նմանակները բազում են: Քո եւ այլոց կարծիքով` ինչո՞վ ես դու տարբերվում մյուսներից:**

-Մաքլ Ջեքսոնի մյուս նմանակներից ես տարբերվում եմ այն բանով, որ պարում եմ գրեթե լռության մեջ, քանի որ թույլ լսողական նյարդ ունեմ, ուստի հաճախ լսողական սարք եմ կրում: Բայց բեմում հնարավոր չէ պարել այդ սարքով` կա՛մ կարող է խոնավությունից փչանալ, կա՛մ դուրս թռչել: Ուստիեւ երբ բարձրախոսի մոտ կանգնած լսում եմ երաժշտության առաջին ակորդները, հանում եմ լսողական սարքս, մտնում եմ բեմ ու կատարում եմ ողջ պարը հիշողությամբ` հստակ ընկնելով չափի մեջ: Ես անգիր գիտեմ Մայքլի բոլոր համարները, նույնիսկ հանկարծաբանում եմ, ինքս եմ կատարում ելույթներիս ձայնագրությունները: Դրանք մարդկանց դուր են գալիս, եւ շատ հաճախ հրավիրում են ինձ տարբեր միջոցառումների մասնակցելու...

**-Կարծում եմ, որ շատ ստեղծագործական մոտեցում էր, երբ համաժամանակյա պարում էիր էկրանին Մայքլի տեսագրությանը զուգահեռ:**

-Դա իմ մտահղացումն էր: Ես եւ բոլորիս շատ ենք սիրում «Վտանգավոր» պարը էկրանի ֆոնի հետ համաժամանակյա, կարծես իսկական Մայքլի հետ պարելիս լինեմ:

**-Քանի՞ Մայքլ Ջեքսոնի նմանակ կա Ռուսաստանում, եւ կա՞ արդյոք նրանց միջեւ մրցակցություն:**

-Ես եմ ու **Պավել Տալալաեւը**: Երկուսս էլ լուրջ ենք վերաբերվում մեր աշխատանքին, միշտ աջակցում ենք միմյանց, մրցակցության մասին խոսք լինել չի կարող, մենք ընկերներ ենք 2003 թվականից:

**-Ասում են, որ նմանակները երբեմն սկսում են ենթագիտակցորեն նմանվել նրան, ում նմանակում են:**

-Երբեմն` այո՛: Կան որոշ բաներ, որոնք կարծես պայմանական ռեֆլեքս լինեն: Ես սիրում եմ մատներս շրխկացնել, երբ ինչ-որ տեղ լսում եմ ինձ դուր եկած երաժշտությունը, կամ, օրինակ, երբ տաքսիում հնչում է Մայքլի երաժշտությունը, ես «երգում եմ»` միայն բերանս բացելով եւ ոտքերս դոփելով:

**-Ինչպե՞ս ես համագործակցում զգեստներ ձեւավորողների, ոճաբանների եւ դիմահարդարների հետ` ստեղծելու համար քո բեմական կերպարը:**

-Դերձակուհիս` **Լյուդմիլա Լիֆանովան**, իմ զգեստները կարում է 2012 թվականից, նա չափազանց բծախնդիր է եւ կարում է այնքան բարձր որակով, որ հագուստներս երկար են ծառայում: Նաեւ լուսանկարչական շարքի համար ստեղծում է գեղեցիկ ու բարդ զգեստներ, դրանք նման են թանգարանային նմուշների: Իսկ ռեկվիզիտը` ծնկների բարձիկներ, գոտիներ, թեւնոցներ, ես ինքս եմ պատրաստում տարբեր նյութերից:



*Գագո Ջեքսոն*

**-Եթե հանդիպեիր Մայքլ Ջեքսոնին, ի՞նչ հարց կտայիր:**

-Եթե հանդիպեի նրան, հնարավորություն չէի ունենա ինչ-որ բան ասել, խոսելու կարողությունից կզրկվեի, ուղղակի աչքերիս չէի հավատա, որ իմ դիմաց ֆանտաստիկ մարդ է կանգնած, իսկական լեգենդ` բոլոր ժամանակների համար:

**-Քո կուռքի մեջ կա՞ մի բան, որը քեզ դուր չի գալիս:**

-Նա չափից ավելի էր բարի: Բարությունն անհրաժեշտ է չափի մեջ, բայց նա ապրում էր այնպիսի մարդկանց մեջ, որոնք խորտակեցին նրա կյանքը եւ շարունակում են խորտակել նույնիսկ մահից հետո: Անբարեխիղճ մարդկանց այս աշխարհը Մայքլի համար չէր...

**-Ինչպե՞ս եղավ, որ Մայքլ Ջեքսոնի հայրը հրավիրեց քեզ այցելել իրեն:**

-Մի անգամ ես հաղթեցի լուսանկարչական մի մրցույթում ու հրավեր ստացա Մայքլի հորից` մասնակցելու «This is it» ֆիլմի Լոս Անջելեսի պրեմիերային, որը կազմակերպել էր «Սանի» ընկերությունը: Բայց... «Փառքի րոպեի» նկարահանումները զուգադիպեցին, հնարավոր չէր խզել պայմանագիրը: Սակայն մինչեւ հիմա ես փայփայում եմ այդ հրավերը:

**-Քո մասին գիտե՞ն ԱՄՆ-ի Ջեքսոնի երկրպագուների ակումբներում:**

-Ինձ ճանաչում են աշխարհի բոլոր Մայքլ Ջեքսոնի երկրպագուների ակումբներում, ու մինչեւ հիմա կապ ենք պահում համացանցում:

**-Հնարավո՞ր է Ռուսաստանում ապրուստ վաստակել` միայն բեմում հայտնի մարդու նմանակ հանդես գալով:**

-Իհա՛րկե: Քանի որ ես աշխատում եմ ադեկվատ եւ գրագետ կազմակերպիչների հետ, նրանց շնորհիվ իմ բոլոր ելույթները կայանում են, եւ վաստակածս ներդնում եմ իմ սիրելի գործի զարգացման մեջ: Լինում են հրավերներ բարձրագույն իշխանություններից: Օրինակ, Ալմաթիում ելույթ եմ ունեցել նախկին նախագահ Նազարբաեւի դստեր ծննդյան խնջույքին, որտեղ բազմաթիվ հռչակավոր անձինք էին ներկա Ռուսաստանից, իսկ ծրագրի վերջում ելույթ ունեցավ ինքը` **Ջենիֆեր Լոպեսը**:

**-Դու նաեւ ստեղծում ես Ջեքսոնին պատկերող հիանալի գծանկարչական աշխատանքներ: Չե՞ս մտածում նաեւ քո ա՛յս շնորհը զարգացնելու մասին:**

-Ապագայում անպայման կշարունակեմ նկարել ու նույնիսկ մտադիր եմ բացել իմ սեփական ցուցահանդեսը:

**-Ժամանակին Խորհրդային Միության եւ Ռուսաստանի գլխավոր Ստալինը Գեորգի Սահակյանն էր` «Ռուսական ռեկորդների գրքի» ռեկորդակիրը, որը 36 ֆիլմում մարմնավորել է այդ բռնակալին: Հանդիպե՞լ ես ուրիշ հայ նմանակների:**

-Ցավոք, ոչ մեկին չեմ հանդիպել: Հետաքրքրական կլիներ նրանցից պատմություններ լսել իրենց կյանքից:

**-Հայաստանում Ջեքսոնի երկրպագուները շատ են, բայց երկրպագուների ակումբ չկա: Հաճելի կլիներ տեսնել քեզ Երեւանում:**

-Իհա՛րկե, Հայաստանում շատերն են սիրում Մայքլին, եւ ես շատ ուրախ կլինեմ ելույթ ունենալ Երեւանում:

**-Ինչո՞վ ես զբաղվել ոչ դյուրին 2020-2021 թվականների ընթացքում:**

-Տանը օգնում էի ընտանիքիս, թարմացնում էի ռեկվիզիտը, դիտում էի ենթագրերով կինոնկարներ: Երբ միջոցառումներ անցկացնելու թույլտվություն եղավ, նորից սկսեցի հյուրախաղերս: Ամռանը մինչեւ աշուն ելույթներ ունեցա Կրասնոդարի երկրամասի եւ Ղրիմի առողջարանային վայրերում:

**-Կա՞ նախագիծ, որին երազում ես մասնակցել: Թե՞ գաղտնիք է:**

-Շատ հետաքրքրական մտքեր ունեմ ու խոստանում եմ հաճելի անակնկալներ մատուցել...


*Գագո Ջեքսոնը Մերիլին Մոնրոյի նմանակի հետ*


*Գագո Ջեքսոնը հայազգի ռուսական հումորիստներ Եվգենի Պետրոսյանի եւ Կարեն Ավանեսյանի հետ*

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ
*Հայաստանի Թեքեյան մշակութային միության լրատվական կենտրոն*

# Մրցանակակիրները՝ Զավեն Խաչիկյան եւ Արմեն Ենգոյան

Հայաստանի Թեքեյան մշակութային միության «Վահան Թեքեյան» մրցանակակիրներ՝ լուսանկարիչներ Զավեն Խաչիկյան եւ Արմեն Ենգոյան

Հայաստանի Թեքեյան մշակութային միության «Վահան Թեքեյան» մրցանակաբաշխության ընթացքում մրցանակ հանձնվեց նաեւ «Գեղարվեստական լուսանկարչություն» անվանակարգում:

Այս տարի նույն անվանակարգում մրցանակի արժանացան լուսանկարիչներ Զավեն Խաչիկյանն ու Արմեն Ենգոյանը:

Զավեն Խաչիկյանը մրցույթին ներկայացրել էր «Անվերնագիր պատերազմ» ֆոտոշարքը: Արցախյան 44-օրյա պատերազմին մասնակցել չկարողացավ՝ թեեւ դիմել եւ մերժվել էր. ստիպված էր «մասնակցել» պատուհանից՝ այն դարձնելով պատերազմը վավերագրելու տարածք, երբ լուսանկարում էր ներկայի անշարժ ընթացքն ու դրվագները: Շարքը դարձավ յուրատեսակ վավերագրություն, որ միաժամանակ բացահայտեց քաղաքացի, արվեստագետ Զավեն Խաչիկյանի ապրումներն ու հույզերը:

«Մրցանակակիր շարքը վաղուց էի սկսել: Այն կարծես երկխոսություն լինի. նախ համավարակը, ապա 44-օրյա պատերազմը առիթ դարձավ շատ բաներ վերհիշելու: Ինքներս մեր ներսում փակվելու եւ «ներքին» հարցերի պատասխանները գտնելու ժամանակ էր՝ առանց աղմկելու»,-մեզ հետ զրույցում նշում է լուսանկարիչն ու վստահեցնում՝ որոշ հարցերի պատասխաններ հենց հարյուրավոր լուսանկարներն էին, որոնցից ընդամենը երեքը ներկայացրեց մրցույթին:

Զավեն Խաչիկյանը գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ-ի Ֆիզիկայի բաժինը, ապա ընդունվել ասպիրանտուրա: Իր խոսքով՝ 1970-80-ականների գիտության լճացումը նրան բերեց այն մտքին, որ ֆիզիկան սիրելը մի բան է, օգտակար գործ անելը՝ այլ բան: Գիտության ոլորտում դադար վերցրեց եւ սկսեց զբաղվել լուսանկարչությամբ՝ ֆոտոլրագրող աշխատելով ժամանակի մի շարք թերթերում:

Զավեն Խաչիկյանը լուսաբանել է 1988-ի Արցախյան շարժումը, դրան նախորդող եւ հաջորդող իրադարձությունները, որպես ֆոտոլրագրող մի քանի անգամ եղել պատերազմի դաշտում, Հայաստանի եւ մի շարք այլ երկրների առաջատար թերթերում ու ամսագրերում հրապարակել ֆոտոռեպորտաժներ: Գործունեության վերջին տարիներին նա զբաղված է լուսանկարչության արվեստային եւ ոչ լրատվական խնդիրներով: Զավեն Խաչիկյանն այն կարծիքին է, որ ժամանակն է լուսանկարչությանը ներկայացնել նույն որակի հարցեր, ինչպիսին կարելի է առաջադրել գրականությանը, գիտությանը, ռազմարվեստին, կերպարվեստին, թատրոնին, քաղաքական միջավայրին եւ այլն: «Զարգացածության ո՞ր մակարդակում է մեր հասարակությունը հիմա եւ ի՞նչ հարցեր ակնկալել նրանից», նշում է երկրի եւ ժամանակի խնդիրներով մտահոգ լուսանկարիչն ու ափսոսանքով հավելում՝ այդ հարցերի պատասխանն իմանալու դեպքում միայն իրավունք կունենայինք զարգացած հասարակություն կոչվելու:





«Մեր «հասարակությունն» ակամայից մասնակիցն է ոչ թե լայնամասշտաբ, այլեւ մանրմունր ինտրիգների, հետեւաբար լուսանկարչությամբ «լուրջ» հարցեր բարձրաձայնելը առօրեական չէ: Վերջին տարիներին հրատարակածս երկու գրքերում, ոչ լրատվական մակարդակում, որոշ հարցեր «բարձաձայնել» եմ: Ցավոք, արվեստաբանությունը թերի կրթության հետեւանքով չի նկատում ու լրատվական մեդիայի արվեստային բաժիններում չի բարձրացնում նմանատիպ հարցերը», նշում է լուսանկարիչը՝ անդրադառնալով լուսանկարչությունը՝ որպես ժամանակի անաչառ պատկեր լինել-չլինելու հարցին: Խոսելով «Վահան Թեքեյան» մրցանակի մասին՝ լուսանկարիչն առանձնակի կարեւորեց ներկա բարոյահոգեբանական եւ ֆինանսապես հոգսաշատ մթնոլորտում նման մրցանակաբաշխություն կազմակերպելը. «Այն կարծես ուժ է տալիս անհատին, ստեղծագործողին, եւ նաեւ խրախուսում, հիշեցնում՝ որպես հայ լուսանկարիչ պարտավոր ես վերադարձնել ստացածդ հոգեւոր ավանդը»:

«Գեղարվեստական լուսանկարչություն» անվանակարգում «Վահան Թեքեյան» մյուս մրցանակակիրը լուսանկարիչ Արմեն Ենգոյանն էր՝ «Գյուղական էսքիզներ» սեւ-սպիտակ շարքի համար: Յոթ լուսանկարն այդ շարքի մի փոքրիկ մասն է ընդամենը. լուսանկարիչն այն սկսել է վաղուց: Լուսանկարների շարքում գյուղաբնակ մարդն է՝ մտածող, արարիչ, գյուղական կյանքը՝ իր ամենօրյա աշխատանքով եւ զբաղմունքով:

Լուսանկարչի կարծիքով, գունավոր նկարները երբեմն «շատախոս են», իսկ սեւ եւ սպիտակ գույները որոշ պատկերների դեպքում դիտողին հնարավորություն են տալիս ամբողջացնել նկարը՝ հաղորդելով դրան իր տրամադրությունն ու գույները:

«Շատերն աշխատում են լուսանկարել, ցույց տալ այս կամ այն հայտնի մարդուն, արտասովոր մի բան: Աշխատավոր մարդը, որ արժեք է ստեղծում կամ ապահովում մարդկանց կենսունակությունն ապահովող ոլորտներում, դուրս է մնում ուշադրությունից: Չէ՞ որ հենց այդ հասարակ ու պարզ մարդիկ են մնացել հայրենի հողում՝ պաշտպանելու եւ շենացնելու երկիրը» նշեց լուսանկարիչն ու խոստովանեց՝ հենց այդ ուշադրության պակասի պատճառով է սկսել «Աշխատավոր մարդը» շարքը, որում առանձին մաս է կազմում մրցանակակիր «Գյուղական էսքիզներ» ֆոտոշարքը:

Թեեւ հանդիպելիս Արմեն Ենգոյանը լուսանկարելու պահը բաց չի թողնում նաեւ հանրության հայտնի մարդկանց, սակայն անկեղծանում է՝ առհասարակ մեծ հաճույքով լուսանկարում է ամեն տեղ՝ շուկաներից մինչեւ փողոց, արհեստանոցներից մինչեւ գյուղ՝ պահպանելով լուսանկարչության պահը, ժամանակը պահպանելու եւ այն դիտողին փոխանցելու առավելությունը:







Արմեն Ենգոյանը մասնագիտությամբ ինժեներ է, աշխատել է որպես փականագործ, ռոբոտային համակարգերի նախագծող, ապա ճարտարապետ: Գործունեության ողջ ընթացքում լուսանկարչությունը հոբբի է եղել. հիմա այն դարձել է բառացապես մասնագիտություն, որի շնորհիվ բազմաթիվ ձեռքբերումներ է ունեցել:

Նրա լուսանկարները բազմիցս տպագրվել են մի շարք ամսագրերում, թերթերում, իսկ աշխատանքները մասնակցել են ցուցադրությունների, միջազգային եւ հանրապետական մրցույթներին: Վերջերս Ռյազանում անցկացվող Հնագույն քաղաքների համաժողովի ժամանակ ԱՊՀ 26 եւ ՌԴ 40 քաղաքների ներկայացրած 833 նկարների շարքում «Մարդիկ հնագույն քաղաքների տարածքում» անվանակարգում Արմեն Ենգոյանը զբաղեցրեց երկրորդ մրցանակային տեղը՝ «Կինը միշտ կին է» խորագրով լուսանկարի համար:

Մեզ հետ զրույցում Արմեն Ենգոյանը չթաքցրեց՝ իր մրցանակների կողքին «Վահան Թեքեյան» մրցանակն իր ուրույն տեղն ունի՝ նախ այն ստացել է Հայաստանում, իսկ դրամական պարգեւը հաճելի բան է:

Լուսանկարչության իր հմտությունները նա սիրով փոխանցում է դրանով հետաքրքրվածներին՝ առաջին հերթին սովորեցնելով, որ եթե ուզում ես նկարել,պետք է նկարես ամեն ինչ՝ նկատածը նույնությամբ դիտողին փոխանցելու կարեւոր պայմանով:

Նշենք, որ Հայաստանի եւ ԱՄՆ եւ Կանադայի Թեքեյան մշակութային միությունների համատեղ նախաձեռնությամբ արդեն 27-րդ անգամ անցկացվող «Վահան Թեքեյան» մրցանակաբաշխությունն իրականացվում է ԹՄՄ «Շաքե Ղազարյան» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Այս տարիներին մրցանակների եւ դրամական պարգեւների են արժանացել հարյուրից ավելի արվեստագետներ, գիտնականներ:

«Վահան Թեքեյան» մրցանակին արժանացած լուսանկարիչներն այսօր էլ աշխատում եւ գործունեություն են իրականացնում մի շարք ծրագրերում ու նախագծերում: Նրանք ֆոտոսիրահարներին են փոխանցում լուսանկարչական արվեստի գլխավոր առաքելությունը՝ ակնթարթը պահպանելու հնարավորությունը, որ մեզ՝ դիտողներիս, թույլ է տալիս պատկերի միջոցով հաղորդակից լինել պատմությանն ու այն պահին, որ այլեւս երբեք նույնությամբ չի կրկնվի:

**Գրիգորի ԱՐՈՍԵՎ**

**գրող, լրագրող, հրատարակիչ, Բեռլին**

# Նատալյա Արոսեւայի բանաստեղծությունը Սեւանի մասին

Գրող եւ ականավոր թարգմանչուհի (չեխերենից) **Նատալյա Արոսեւան** (1919-1990)` իմ տատիկը, պատերազմից հետո բազմիցս եղել է Բեռլինում: Պատերազմի ժամանակ նրա ստորաբաժանումը նացիստական Գերմանիայի պարտված մայրաքաղաք չէր հասել, որովհետեւ նրանց տեղափոխել էին Հեռավոր Արեւելք: Սակայն հետո իրավաբան ամուսնու` Միրոն Նիսենհոլցի հետ բազմիցս եկել է Բեռլին, իհարկե, արեւելյան: Չգիտեմ` եղե՞լ են նրանք արեւմտյան հատվածում, չեմ բացառում, բայց հավաստի տեղեկություն չունեմ: ԳԴՀ-ում նրանք շատ-շատերի հետ են շփվել, այդ թվում` իրենց գերմանացի ընկերոջ, որն այդ շփումների պատճառով դատապարտվել է եւ բանտում մի քանի տարի անցկացնելուց հետո սկսել է համագործակցել Կարմիր բանակի հետ: Յոթ տարի առաջ հեռախոսազրույց եմ ունեցել նրա հետ, իսկ հիմա նա 101 տարեկան է, ողջ-առողջ է:

Արդյոք Միրոնն ու Նատալյան կարո՞ղ էին 1945-ին պատկերացնել, որ 75 տարի անց իրենց ծոռը կծնվի այդ նույն, բայց միավորված ու ազատ Բեռլինում, դեռ ավելին` ծոռը կունենա Գերմանիայի քաղաքացիություն: Ինչեւէ, հենց այդպես էլ եղել է, եւ հիմա Նատալյա Արոսեւայի թոռն ու ծոռը զբոսնում են Բեռլինի նույն փողոցներով, որոնցով անցել է նրանց տատիկը: Խոսում են նույն երկու լեզուներով, որոնցով նա էր խոսում` ռուսերեն եւ գերմաներեն (Նատալյա Արոսեւան գերմաներեն սովորել է Մոսկվայի Լիբկնեխտի դպրոցում եւ ռազմաճակատում աշխատել է որպես զինվորական թարգմանիչ): Մենք Պրահայում էլ ենք լինում, նրա մանկության քաղաքում, եւ այնտեղ էլ ենք գնում նրա հետքերով, մոտենում ենք այն վիլլային, որտեղ ապրել է հոր` դիվանագետ Ալեքսանդր Արոսեւի եւ տատիկիս քույրերի` Օլգայի եւ Ելենայի հետ: Հետագայում Օլգան եւ Ելենան դարձան հայտնի դերասանուհիներ:

Նատալյա Արոսեւան կյանքից հեռացավ 1990 թվականի հուլիսին, երբ ես ընդամենը 11 տարեկան էի: Ես նրան հիշում եմ, բայց, իհարկե, կուզեի ավելի լավ ու խորը ճանաչել: Մենք շատ ընդհանուր բաներ ունենք, ես դա միշտ եմ զգում եւ միշտ ունեմ նրա կարծիքի, խորհրդի, խոսքի պակասը: Իսկ



*Նկարում. Նատալյա Արոսեւան ամուսնու հետ Արեւելյան Բեռլինում, 1980-ական թթ.*

վերջերս նրա արխիվում գտա Հայաստանին նվիրված բանաստեղծություն: Ինձ համար դա ցնցում էր, որովհետեւ ես միշտ համակրանքով եմ վերաբերվել Հայաստանին, իսկ հետո, երբ եղա այնտեղ, սիրեցի այն եւ սերն այդ, իհարկե, հավերժ է: Հիմա ես հասկանում եմ, թե որտեղից է ծնունդ առել իմ այդ սերը. իմ տատիկն է սիրել Հայաստանը: Եվ մենք երկուսս էլ գրել-գրում ենք նրա մասին բանաստեղծություններ: Ահա եւս մի ընդհանուր բան: Հետաքրքիր է` էլ ինչե՞ր են պարզվելու...

Ես շատ շնորհակալ եմ Նաիրա Խաչատրյանին, որն օգնեց Նատալյա Արոսեւայի բանաստեղծության հրապարակման եւ ամենակարեւորը` տեքստի եւ այս համեստ նախաբանի թարգմանության գործում: Եվ խորին շնորհակալություն «ԱԶԳ» թերթին` հրապարակման համար:

---

## ՆՈՐ ՀԵՔԻԱԹ

*Ծանր է վիճակն ալեհեր Սեւանի.*
*մարտիկի վերքերից հոսող արյան պես*
*լքում է նրան իր կապույտ ուժը:*
*Չի չափել երբեք ու չի խնայել,*
*տվել է անպատռ, ինչպես տալիս են սերը,*
*որ արեւը չայրի դաշտերը,*
*որ խշշան փարթամ այգիները,*
*որ քաղաքներում վառվեն լույսերը:*
*Սեւանն իր ուժը*
*տվել է մարդկանց:*

*Յոթ սարից այն կողմ` հեռավոր հեռվում,*
*աղջնակ-գետակը` միշտ ուրախ Արփան,*
*պտաբոբիկ թռչկոտում է քարերի վրա:*
*Ձրե հյուսքերն է կապի մեջ առնում,*
*իսկ րոպե անց բաց թողնում խսկույն,*
*ջուր է ցողում, պար գալիս ափին,*
*զվարթ կարկաչում ողորկ քարերին*
*եւ իր անհոգ ծիծաղով արթնացնում է*
*արձագանքը ժայռերի:*

*Եվ մի անգամ սարերից քամին իջավ*
*գետակի մոտ այս աշխույժ:*
*Ջրի վրա կախվելով` թեւերը լուռ նա ծալեց*
*ու այսպիսի երգ երգեց.*
*«Լսի՛ր, Արփա՛ անհանգիստ,*
*ես վատ լուր եմ քեզ բերել,*
*ծանր է ցավը Սեւանի,*
*կապույտ ուժն է հեռանում,*
*նրա սրտից վիրավոր...*

*Ուժն է կորցնում մեր Սեւանը,*
*չորացնելու է արեւը բարեբեր հողը,*
*բերք չեն տալու մեր դաշտերը,*
*հանգչելու են քաղաքների վառ լույսերը...*
*Ինչպե՞ս օգնենք, ասա՛, Արփա՛»:*
*Լռեց աղմկոտ Արփան,*
*թողեց իր կայտառ ցատկը,*
*ջինջ ակներից հորդեցին*
*արծաթ արցունքները:*

*Լացով աղաչեց մեր տխուր Արփան.*
*«Ա՜խ, փարձանքի մեջ է իմ պապիկ Սեւանը:*
*Ջինջ ու անարատ իմ արյունը*
*թո՜ղ նրան նոր կյանք տա,*
*ետ բերի նրա կապույտ ուժը...*
*Բայց հեռու է պապս` Սեւանը,*
*յոթ սարից այն կողմ է նրա տունը,*
*ինչպե՞ս անցնեմ ես այս սարերը,*
*ո՜նց հասցնեմ իմ թանկ արյունը»:*

*Քամին աղմուկով թափ տվեց թեւերը.*
*«Ես գիտեմ, գիտեմ` ոնց օգնեմ դարդիդ,*
*երեք ուղղությամբ ես լուր կուղարկեմ,*
*կտրիճներ կգան բյուր հարյուրներով,*
*որ ճամփա բացեն ալիքիդ համար»:*
*Երեք ուղղությամբ նա ձայնեց ահեղ,*
*օգնության կանչեց:*
*սարերի վրա քամիներ փչեցին,*
*եւ ասես բյուրավոր բազեներ*
*կապույտ բարձրունքում թեւածեցին:*

*Մեկ կանչեց` եկան հայոց որդիները քաջ`*
*գանգուրները` սեւ խաղող,*
*իսկ աչքերում կրակոտ վառ արեւն էր շողշողում:*
*Երկրորդ կանչով եկան մարդիկ Հյուսիսից`*
*մազերի մեջ հասուն հասկի ոսկեգույնը,*
*իսկ աչքերում ջինջ կապույտը երկնքի:*
*Երրորդ կանչը ոտքի հանեց Արեւմուտքն ու Արեւելքը*
*եւ սարերում հավաքվեցին*
*ընկերներ անթիվ:*

*Միայն հարավից ոչ մեկը չեկավ.*
*այնտեղ` հարավում, հողերը գերի են,*
*այնտեղ ոչ ոք ո՛չ ցանում է, ո՛չ վարում,*
*միայն ցավն է լուռ շրջում շիրիմների արանքում.*
*այնտեղ փուշ ու տատասկն են տեր ու տիրականը:*
*Այնտեղ` հարավում, Արաքսից այն կողմ*
*Արծաթագագաթ Արարատը ծեր*
*Մասիս որդուն գետի ափ բերել,*
*գրկել ու ասում է.*
*«Նայի՛ր, իմ փոքրի՛կ Մասիս,*
*տեսնո՞ւմ ես հեռվում կապույտ ցոլանքը:*
*Նա եղբայրն է իմ, արնակից Սեւանը:*
*Ասում են` ցավն է պատել նրան,*
*կապույտ ուժն է կորցնում,*
*ինչպես վիրավոր մարտիկն` արյունը:*
*Սարերի քամին ինձ լուր է բերել, որ*
*մեր թոռնուհին` ճարպիկ Արփան,*
*իր արյունն է տալիս նրան:*

*Իմ փոքրի՛կ Մասիս, աչքը քո ջահել*
*իմ աչքից սուր է, լա՛վ նայիր, ասա՛,*
*Արաքսից այն կողմ ի՞նչ է կատարվում:*
*Մի լավ լսի՛ր` այդ ի՞նչ աղմուկ է*
*այնտեղ, որտեղ փրփրուն Արփան է»:*
*Երկար ականջ դրեց ջահել Մասիսը,*
*Երկար նայեց կրտսերը` սարը,*
*Ու բացականչեց.*

*«Օ՜, հա՛յր իմ: Կար ժամանակ,*
*որ Բաբելոնում հազար ազգ ու ցեղ,*
*հավաքվել էին, որ աշտարակ կանգնեցնեն...*
*Եթե հիշում ես, դեռ ես էլ հարցրի,*
*թե ինչպե՞ս պիտի հասկանան իրար,*
*եթե բոլորը տարբեր ծագերից են:*
*Եվ ճիշտ էի ես. իրենց գործը*
*նրանք վերջին չհասցրին:*
*Ինչպե՞ս բացատրեմ ես հրաշքը այս.*
*հիմա էլ եմ ես տեսնում հարյուր ազգ,*
*բայց մեկը մյուսին եղբայր է ասես:*
*Կարծես այնտեղ հարյուր ցեղ չէ բնավ,*
*այլ արյունակից հարյուր մեկ օջախ:*
*Հազարաբարբառ խոսք եմ ես լսում,*
*Բայց ասես միեւնույն լեզվով են խոսում:*

**Ռուսերենից թարգմանեց**
**ՆԱԻՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**

---




# Օրորա Մարտիկյանյանի հուշերի նորագույն իսպաներեն թարգմանությունը

Օրորա (Արշալույս) Մարտիկյանյանը (1900-1994) Մեծ Եղեռնը վերապրած ամենահայտնի հայուհին է` շնորհիվ իր «Հոշոտված Հայաստան» հուշագրության եւ դրա հիման վրա նկարահանված համանուն շարժանկարի (հայտնի նաեւ «Հոգիների աճուրդ» վերտառությամբ): Թե՛ գիրքը, թե՛ ֆիլմը տարածվել են ամերիկյան ու եւրոպական երկրներում, գիրքը թարգմանվել է ճապոներեն, չեխերեն եւ այլ լեզուներով: Այն երկու անգամ թարգմանաբար հրատարակվել է նաեւ իսպաներեն (1919 եւ 1999 թվականներին):

Անցած տարեվերջին Բուենոս Այրեսի «Էդիար» հրատարակչությունը Համազգային Հայ Մշակութային Միության հովանավորությամբ լույս է ընծայել «Հոգիների աճուրդը կամ Հոշոտված Հայաստան. Օրորա Մարտիկյանյանի պատմությունը» իսպաներեն հատորը` արգենտինահայ հետազոտող **Էդուարդո Գոզանլյանի** աշխատասիրությամբ: Այն ընդգրկում է անգլերեն բնագրից կատարված նոր թարգմանություն` կատարված ամերիկաբնակ վաստակաշատ հայագետ, պատմաբան, բանասեր եւ թարգմանիչ **Վարդան Մաթեոսյանի** կողմից: Վերջինս նաեւ գրքի ընդարձակ առաջաբանի հեղինակն է, որտեղ ներկայացված է Մարտիկյանյանի կյանքի ոդիսականը, արժեւորված են Էդուարդո Գոզանլյանի` սույն թեմայով կատարված երեսնամյա պրպտումները եւ նրա կողմից Հայաստանում ֆիլմի մի հատվածի հայտնաբերումը: Մարտիկյանյանի տեքստը մանրամասնորեն ծանոթագրել է Էդուարդո Գոզանլյանը եւ հատորում ընդգրկվել նաեւ գրքի ու շարժանկարին մասին իր ուսումնասիրությունը: Հատորը եզրափակում են ֆիլմի սկզբնական 16 լուսանկարները եւ տարբեր արժեքավոր նյութեր Գոզանլյանի արխիվից:

**Ա. Բ.**

# «Փաշինյանի իշխանությունը Թուրքիայի հետ արհեստականորեն մերձեցման վերջին գործողությունն է իրականացնում»

*«Ազգ»ի զրուցակիցն է «Ազգային օրակարգ» կուսակցության անդամ, փաստաբան ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ*

- Հայաստանի մի շարք համայնքներում տեղի ունեցած ՏԻՄ ընտրություններից հետո այժմ մանդատ ստացած ավագանու անդամներից շատերի նկատմամբ քրեական գործեր են հարուցվում: Իշխանությունը նորից հին երգն է երգում, թե «նախկին թալանչիների արածներն ենք ջրի երես հանում»: Մանդատ ստացած ավագանու անդամներն ու նրանց սատարողները պնդում են, թե սա քաղաքական հետապնդում է: Իշխանությունը չի էլ թաքցնում, որ որոշել է ամեն գնով իրենով անել տեղական ինքնակառավարումը: Սրան ի՞նչ անուն տալ՝ «բեսպրեդել», թե՞ «շնորհքով ներխուժում»:

- Իշխանությունները լավ են հասկանում, որ տեղերում քաղաքական իշխանություն վերցնելն իշխանության երկարակեցության գրավականներից մեկն է: Մինչեւ վերջերս իշխանությունները տեղերում թույլ էին ու ամբողջ ծավալով չէին կարողանում իրենց իշխանությունը տարածել համայնքների վրա: Տեղական ինքնակառավարման մարմիններում հաղթելու երկու կարեւոր շարժառիթ կա: Առաջինն այն է, որ նոր սահմանադրական տրամաբանությամբ՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, այսպես ասած, ավելի քաղաքականացվեցին: Կուսակցությունները հիմա ավելի ներգրավված են տեղերում իշխանությունների համար պայքարում եւ ՏԻՄ ընտրությունների արդյունքներն ուղղակիորեն կապիտալացվում են հանրապետական մասշտաբով: Օրինակ՝ ընդդիմության մի քանի հաջողություններ ՏԻՄ ընտրություններում երկրի ամբողջ քաղաքական մթնոլորտի վրա ունեցած շոշափելի ազդեցություն: Երկրորդ շարժառիթը ՏԻՄ ռեսուրսներն են: Իշխանությունները տեղերում իրենց մարդկանց որոշակիորեն վարձահատույց լինելու եւ պարբերաբար բարիքներ բաժանելու եւ հանրապետական ընտրութունների արդյունքների համար վարձահատույց լինելու խնդիր ունեն, իսկ ՏԻՄ ռեսուրսներն այդ առումով բավականին էական են՝ աշխատատեղեր, մրցույթներ, պարգեւներ եւ այլն:

**- Նիկոլ Փաշինյանի թիմը նաեւ Երեւանի քաղաքապետ Հայկ Մարությանից է փորձում ձերբազատվել: Փաշինյանն անգամ Մարությանին է Քոչարյանի հետ կապում: Իրականում՝ ո՞վ ո՞ւմ հետ է կապված, ու Մարությանն այժմ նախկի՞ն է, սե՞ւ, թե՞ անառակ որդի Փաշինյանի համար:**

- Գիտե՞ք, ներիշխանական գզվռտոցն ինձ քիչ է հետաքրքրում: Նամանավանդ, որ տարածաշրջանի եւ մասնավորապես Հայաստանի շուրջ աշխարհաքաղաքական լուրջ զարգացումների համատեքստում այսպիսի սկանդալային բեմադրություններն ունեն առավելապես շեղող բնույթ: Ըստ այդմ՝ կարծում եմ, որ պետք է տուրք չտալ այս ինֆորմացիոն գրոհներին: Կլինեն զարգացումներ, կլինի պաշտոնանկութուն, քաղաքային ընտրութուններ, այդ ժամանակ էլ կարելի կլինի անդրադառնալ այդ հարցին:

**- Խորհրդարանին դառնանք: Այստեղ ընդդիմությունն ասես պետության համար հույժ կարեւոր հարցերին լուծմանը հասել է, հիմա էլ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հրաժարականն է պահանջում: Ենթադրենք՝ Ալեն Սիմոնյանը հեռացավ, եկավ մեկ այլ ՔՊ-ական, ե՞ւ:**

- Ակնհայտ է, որ խորհրդարանական ընդդիմության աշխատանքը խիստ անբավարար է: Ինչ վերաբերում է Ալեն Սիմոնյանի հրաժարականի պահանջին, ապա ինձ թվում է՝ ընդդիմությունը փորձում է գնալ փոքր հաղթանակների ճանապարհով, որպեսզի այդ հաղթանակների շնորհիվ որոշակի քաղաքական կապիտալ կուտակի ու դա հետագայում իրացնի բուն խնդրի լուծման համար: Ինքնս այս պարագայում այդ «փոքր հաղթանակների» մեթոդաբանությանը չեմ հավատում, քանի որ «փոքր հաղթանակների փոքր պայքարները» ընդդիմությանն իր հռչակած իշխանափոխության նպատակից է՛լ ավելի է հեռացնելու:

**- Արտախորհրդարանական ուժերն էլ մի լավ օրի չեն: Բոլորով ասես թմբիրի մեջ լինեն: Կա՛մ իրար են քննադատում, կա՛մ, լավագույն դեպքում, իշխանությանը, բայց դրանից Հայաստանում ոչինչ չի փոխվում՝ տնտեսական, քաղաքական, գաղափարական, մշակութային ու անգամ կենցաղային առումով:**

- Ես ճիշտ եմ համարում խոսել մեր ուժից՝ «Ազգային օրակարգից», որն ամենօրյա կուսակցաշինության աշխատանքի մեջ է: Մենք մեր հռչակած ազգային-ազատագրական պայքարի տրամաբանության մեջ փորձում ենք ունեցած ռեսուրսներին համարժեք քաղաքական գործունեություն ծավալել: Օրինակ՝ մասնակցեցինք Գորիս խոշորացված համայնքի ընտրություններին՝ «Առուշ Առուշանյան» դաշինքի կազմով եւ արձանագրեցինք հաղթանակ, որը մեզ համար չափազանց էական եւ խորհրդանշական արժեք ուներ, քանի որ Սյունիքն այժմ աշխարհաքաղաքական էպիկենտրոնի է վերածվել, իսկ Առուշ Առուշանյանն այս հայատյաց իշխանությունների անհաշտ թշնամին է, սկզբունքային գործիչ: Այժմ մեր շարքերի ու համակիրների համար մշակել ենք ուսումնամարզական հավաքների, բանակումների եւ պարբերական մարզումների ծրագիր եւ հետեւողականորեն իրագործում ենք այն՝ համադրելով քաղաքական-գաղափարական զարգացումը ֆիզիկական-ռազմականի հետ: Ընթացիկ պարբերական քաղաքական խորհրդակցությունների մեջ ենք տարբեր արտախորհրդարանական ուժերի հետ, որոնց հետ փորձում ենք մշակել երկարաժամկետ քաղաքական պայքարի գաղափար եւ իրագործման մոդելներ, քանի որ համոզված ենք, որ այս պայքարը չի կարող սահմանափակվել Նիկոլ Փաշինյան անձին վռնդելով, այլ՝ օտարահպատակ քաղաքական համակարգի կազմալուծմամբ:

**- Արտաքին քաղաքականության գալով՝ Նիկոլ Փաշինյանն ի՞նչ էր փնտրում Եվրոպայում: Հանդիպումներ է ունեցել, արձանագրումներ արել, երկաթուղու մասին խոսել: Ըստ ձեզ՝ այնտեղ գաղտնի խոսակցություններ եղե՞լ են, որ մեզ մի որոշ ժամանակ անց կարող են անակնկալի բերել:**

- Դե Ալիեւը երեկ տված հարցազրույցում հայտարարեց, որ իրենց հաջողվել է ստանալ Հայաստանի համաձայնությունը այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» համար: Անակնկալի գալու բան չկա՝ Նիկոլ Փաշինյանն իր աշխատանքով ապացուցել է, որ կաշկանդված չէ Հայաստանի շահերին հակառակ պայմանավորվածություններ եւ որոշումներ կայացնելու համար: Բրյուսելյան բանակցությունների ֆոնին էլ տեղեկատվական դաշտ նետվեց Երեւանի քաղաքապետին անվստահություն հայտնելու գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը՝ շեղելու հանրությանը գերկարեւոր այս խնդրից: Նիկոլ Փաշինյանն ու յուր իշխանախումբը չեն էլ թաքցնում, որ պատրաստ են որեւէ «ցավոտ» զիջման ու դա անելու են միանձնյա՝ իրենց քաղաքական կապիտալի հաշվին: Իրենց համար ամենակարեւոր հարցն այն է, թե աշխարհաքաղաքական այս կամ այն կենտրոնն ինչպես կնայի իրենց գործողություններին ու, հետեւաբար, նստած սպասում են, թե ե՞րբ են այդ կենտրոնները միմյանց միջեւ ու առանց մեզ լուծելու մեզ վերաբերող հարցերը ու հանձնարարական իջեցնեն իրենց կա՛մ ի գիտություն, կա՛մ լավագույն դեպքում՝ ի կատարումն: Հենց սա է ինքնիշխանության կորուստը: Ես հեռու եմ այն պատրանքներից, թե անտեսելով մեծ խաղացողների շահերը՝ կարելի է սեփականն առաջ տանել ու հասնել 100 տոկոսանոց արդյունքի, բայց նաեւ համոզված եմ, որ սեփական շահերը 100 տոկոսով առաջ տանելու դեպքում կարելի է գրանցել 70,60 կամ 50 տոկոսանոց արդյունք՝ կախված օբյեկտիվ եւ սուբյեկտիվ մի շարք այլ հանգամանքներից: Այս իշխանություններն ակնհայտորեն որեւէ ջանք չեն գործադրում հայկական որեւէ շահ ներկայացնելու համար, այլ փորձում են սեփական իշխանությունն ամրապնդելու համար ամեն գնով գոհացնել այդ աշխարհաքաղաքական ուժերին: Սա ավանտյուրիստների մի խմբակ է, որին մինչեւ այժմ հաջողվել է 100 տոկոսով առաջ տանել միայն իրենց խմբակի նեղ անձնական շահերը:

**- Թուրքիայի ԱԳ նախարար Չավուշօղլուն նախօրեին հայտարարել էր, որ Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու համար բանագնացներ են նշանակելու: ՀՀ ԱԳՆ-ն էլ արձագանքում է՝ Հայաստանը, ինչպես մշտապես նախկինում, այնպես էլ այժմ, պատրաստ է Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերությունների կարգավորմանը: Երկկողմանի այս պատրաստակամությունն ինչպե՞ս կմեկնաբանեք:**

- Ավանտյուրիստների իշխանախմբակն իշխանության երեքուկես տարիներին անընդմեջ գործադրել է Հայ դատի մոռացության, հայոց պահանջատիրության, Թուրքիայի ու թուրքական աշխարհի վերաբերյալ պատկերացումների աղավաղման հետեւողական քաղաքականություն: Կիհշե՞ք՝ մինչեւ պատերազմը **Լիլիթ Մակունցն** ինչ վստահ առոգանությամբ էր պնդում, որ հավանական պատերազմի ժամանակ Թուրքիան չի խառնվելու եւ չի օժանդակելու Ադրբեջանին: Ըստ ամենայնի՝ մենք հասնում ենք այս «հայ-թուրքական» արհեստական մերձեցման գործընթացի կուլմինացիային, եւ այդ ֆոնին էլ հենց ահագնանում են քաղաքական ռեպրեսիվ գործողություններն այն ընդդիմադիր գործիչների եւ ուժերի վրա, որոնք այդ հավանական մերձեցմանը խոչընդոտելու թեկուզ քիչ ներուժ ունեն: Մի բանում եմ միայն վստահ, որ որեւէ գործընթացի թեկուզ իրավաբանական ձեւակերպում՝ խաղաղության պայմանագիր, դելիմիտացիայի վերաբերյալ միջպետական պայմանագիր, տարածաշրջանային լայն պայմանավորվածությունների վերաբերյալ բազմակողմ պայմանագրեր կենսունակ չեն լինելու եւ հայոց պահանջատիրությունն ու ազգային-ազատագրական պայքարն իր տարբեր դրսեւորումներով ժամանակի ընթացքում կուտակելու է պայթունի համար բավարար էներգիա, այդպես է եղել մեկ դար առաջ եւ այդպես է հիմա:



ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

## Հանդիպում ՀՀ դեսպան Հրաչեայ Փոլատեանի հետ



Կիրակի, 9 յունուար 2022-ին, ՌԱԿ Եգիպտոսի Շրջանային, Կոկանեան Սրահի եւ «Արեւ»ի վարչութիւններէն պատուիրակութիւն մը, Գահիրէի Թեմական Ժողովի ու Կոկանեան Սրահի երկարամեայ նախկին ատենապետ՝ Նուպար Սիմոնեանի ընկերակցութեամբ հանդիպում ունեցան Եգիպտոսի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Հրաչեայ Փոլատեանի հետ:

ՌԱԿ Շրջանային վարչութեան ատենապետ՝ տիար Հրայր Ճղալեան եւ Կոկանեան Սրահի վարչութեան ատենապետ՝ տոքթ. Գէորգ Երզնկացեան շնորհաւորեցին մեծարգոյ դեսպանը Նոր Տարուան ու Ս. Ծննդեան առթիւ, յաջող ու արդիւնաւէտ գործունէութեան շրջան մը մաղթելով անոր:

Հանդիպման ընթացքին, մեծարգոյ դեսպանն ու պատուիրակութեան անդամները փոխադարձաբար լայնօրէն քննարկեցին դեսպանատան ու գաղութի կառոյցներուն համագործակցութիւնը հայցող տարբեր ծրագիրներ ու զանոնք իրագործելու գործնական միջոցներ:

Օգտաշատ այս երկխօսութիւնը աւարտեցաւ հետագայ հանդիպումներու երկկողմ խանդավառութեամբ:

**ՌԱԿ Եգիպտոսի «Արեւ» շաբաթաթերթ**

# Կյանքը՝ հունվարի 22-ից հետո

ՆԱԻՐ ՅԱՆ

Հայաստանում, ըստ պաշտոնական տեղեկությունների, բնակչության 34 տոկոսն է պատվաստվել քովիդի դեմ. համավարակի աճ չի գրանցվել, սակայն հունվարի 22-ից մեր երկրում գործելու են նոր սահմանափակումներ՝ մշակութային հաստատություններ, սննդի օբյեկտներ, մարզասրահներ հնարավոր կլինի այցելել միայն ՊՇՌ թեստի բացասական պատասխանի կամ պատվաստման սերտիֆիկատի առկայության դեպքում:

Օրեր առաջ Առողջապահության նախարարության ներհիվանդանոցային վարակների կանխարգելման բաժնի պետ **Ռոմելա Աբովյանը** տեղեկացրեց նախարար **Անահիտ Ավանեսյանի** նոր հրամանի մասին՝ ավելացնելով, որ եթե հարկ լինի հնարավոր է, որ բաց տարածքներում դիմակներ կրելու պարտադրանքը նորից ուժի մեջ կմտնի: Ոչինչ չի բացառվում:

Ոչ միայն Հայաստանում, այլեւ ամբողջ աշխարհում է պատվաստումների անուղղակի պարտադրանքը գործում: Օրինակ՝ Ավստրիայում, ոստիկանը կարող է կանգնեցնել յուրաքանչյուր քաղաքացու եւ պահանջել պատվաստման QR կոդը: Չունեցավ՝ 4000 եվրո տուգանք:

Ավստրալիայի կառավարությունը երկրից արտաքսել է սերբ թենիսիստ, ինանկի չեմպիոն Նովակ Ջոկովիչին, որովհետեւ նա հրաժարվում է պատվաստվել քովիդի դեմ:

Ակնհայտ է, որ մարդկությանը կառավարելու քովիդ-19 տեխնոլոգիական գործիքը լավ չաշխատեց, կամ՝ մասամբ աշխատեց: Ստեղծելով վախի ու անվստահության մթնոլորտ, տուգանվելու, աշխատանքից ազատվելու ռիսկեր՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը մեծ խաղի մեջ ներքաշեց հարյուրավոր երկրների: Ինչ խոսք՝ մահեր էլ գրանցվեցին. Երկրագնդի վրա կորոնավիրուսից մահացել է 5 միլիոն մարդ:

«Ազատ կամք» նախաձեռնությունը, որում ընդգրկված են թե՛ փաստաբաններ, թե՛ բժիշկներ, ընդվզման նոր ալիք է սկսել՝ ընդդեմ պարտադիր պատվաստումների:

Ակնհայտ է, որ հունվարի 22-ից նախատեսված նոր սահմանափակումները պատվաստումների անուղղակի պարտադրանք են ենթադրում: Իրավապաշտպաններն ու բժիշկներն իրենց ուսումնասիրություններն են կատարել եւ համոզվել, որ պատվաստումներն ուղղակի ճնշման գործիք են՝ ենթարկեցնելու, հնազանդեցնելու մարդկանց եւ, ամենակարեւորը, մտնելու նրանց գրպանները:

Փաստաբան **Արա Զոհրաբյանը** բերում է հետեւյալ օրինակները. Արաբական Միացյալ Էմիրությունների բնակչության 99 տոկոսը պատվաստվել է առաջին դեղաչափով, իսկ 92 տոկոսը՝ երկու: Կանադան պատվաստված է 80 տոկոսով, Միացյալ Թագավորությունը՝ գրեթե նույնքան: Բայց ըստ վիճակագրական տեղեկությունների՝ այս երկրներում կորոնավիրուսով վարակվելու աճ է գրանցվել:

«Ես հարցում եմ ուղարկել Առողջապահության նախարարությանը, որ եթե պատվաստված մարդը պատվաստման պատճառով վնասներ կրի՝ առողջական խնդիրներ ունենա կամ մահանա, ո՞վ է պատասխանատվություն կրելու: Պատասխանել են՝ մարդիկ պատվաստվում են կամավոր կերպով: Այսինքն՝ մեր երկրում պատվաստման պարտադրանքը ներկայացվում է որպես կամավոր ցանկություն: Եթե պատվաստման պատճառով առաջացած խնդիրներով ինչ-որ մեկը դիմի դատարան, նախարարությունն իրեն պաշտպանելու ձեւը գիտե, ասելու է՝ այս մարդը պատվաստվել է իր կամքով, նրան ոչ ոք չի պարտադրել, հետեւաբար, ոչ ոք մեղավոր չէ նրա մահվան մեջ:

Նախարարությունը որեւէ պատասխանատվության չի ենթարկվելու»,- նշում է փաստաբան Արա Զոհրաբյանը:

Պատվաստումների անուղղակի պարտադրանքի առաջին ալիքի ժամանակ թիրախավորվել էին տարեցներն ու խոցելի խմբերը՝ պատվաստվեք, որ չմահանաք: Օրինակ էին բերվում 5000-ից ավելի մահերը:

Հետո թիրախում հայտնվեց աշխատունակ միջին խավն ու միջին տարիքը: Հարձակման հիմնական նշանակետը հենց նրանք են: Քանի որ կորոնավիրուսի ոչ մի պատվաստանյութ գրանցված չէ, եւ բժիշկների մի մասը հայտարարում է, որ դրանք փորձարկումներ չեն անցել, ժամանակի քննությանը չեն ենթարկվել, բնական է, որ դրանց նկատմամբ անվստահության մթնոլորտ պետք է առաջանար, ինչը եւ եղավ: Պատվաստում պարտադրողներին էլ հենց դա էր պետք՝ պատվաստանյութերի մասին հակասական ինֆորմացիաների ֆոնին պահանջել ՊՇՌ թեստեր:

Գաղտնիք չէ, որ հանրության աշխատունակ հատվածը հենց գիտակից խավն է: Քանի որ պատվաստանյութերը հավաստ չեն ներշնչում, աշխատունակ ու գիտակից հատվածը ռիսկի չդիմելու եւ առողջությունը չվտանգելու համար նախընտրեց պարբերաբար հանձնել ՊՇՌ թեստեր: Ու հենց այստեղ իշխանությունների ուզածը կատարվեց, ձեռքը մտցրեց աշխատունակ մարդկանց գրպանը: Մեկ ամսում 35-40 հազար դրամ՝ ՊՇՌ թեստի համար: Իսկ եթե նույն ընտանիքում չեն ուզում պատվաստվել ու ՊՇՌ թեստ են հանձնում 2-3 հոգի, ստացվում է, որ մեկ ընտանիքից ամսական ուղղակիորեն կորզվում է մինչեւ 120 հազար դրամ:

Հետո՞ ինչ, որ Բարձր դատարանը հակասահմանադրական ճանաչեց ՊՇՌ թեստի գումարը քաղաքացուց գանձելու փաստը: Մինչեւ հիմա ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել ու ոչ մի քաղաքացու չի վերադարձվել թեստավորվելու համար գանձված գումարը: Ավելին՝ հունվարի 22-ից թեստի կամ պատվաստվելու նոր պահանջներ են ներկայացվելու:

Եթե մարդուն աշխատանքը կորցնելու վտանգն անգամ չի ստիպել, որ պատվաստվի, ապա նա պատրաստ է չհաճախել ռեստորան, սրճարան, կինոթատրոն, մարզասրահ. միայն թե չպատվաստվի: Այստեղ առաջանալու է նոր խնդիր. վտանգվելու է հանրային սպասարկման բիզնեսը: Աշխարհի շատ երկրներում է հանրային փակ տարածքներ այցելելու համար ՊՇՌ թեստի կամ պատվաստման սերտիֆիկատի պահանջը գործում, սակայն այդ նույն երկրներում տնտեսվարողները բողոքի ալիք են բարձրացրել, որ իրենց բիզնեսը տապալվում է: Մոսկվայում այդ սահմանափակումն արդեն հետաձգվել է, Սանկտ-Պետերբուրգում, ամենայն հավանականությամբ, նույնպես կհետաձգվի:

Պատահական չէ, որ Առողջապահության նախարարության ներկայացուցիչ Ռոմելա Աբովյանը հայտարարել է, որ կորոնավիրուսի հիվանդացության աճ է նկատվել երեխաների ու երիտասարդների շրջանում: Բաց տեքստով ասում է, որ հիմա էլ նախարարության թիրախում նոր սերունդն է: Վիճակագրական հետազոտությունների կարիք չկա, որպեսզի պարզվի, թե սրճարաններ, արագ սննդի կետեր, կինոթատրոններ, թանգարաններ, մարզասրահներ ավելի շատ ո՞ր տարիքային խմբերն են այցելում. իհարկե, ուսանողները, երիտասարդները, պատանիները, երեխաները: Նրանք, բնականաբար, առայժմ անաշխատունակ են: Ուրեմն ովքե՞ր են վճարելու նրանց ՊՇՌ թեստերի համար. բնականաբար՝ ծնողները: Ստացվում է, որ պետությունը նորից է ձեռքը մտցնելու աշխատունակ խավի գրպանը, որովհետեւ ինչ-ինչ, բայց շատ ծնողներ վերջին կոպեկն էլ չեն խնայի իրենց երեխաներին թեստավորելու համար, միայն թե անկանխատեսելի, փորձարկում չանցած պատվաստանյութով չվտանգեն երեխաների կյանքը:

Հարցումները ցույց են տվել, որ աշխատանք ունեցող միջին տարիքի ծնողները մեկ-երկու ամիս թեստ հանձնելուց հետո ստիպված են եղել պատվաստվել, որովհետեւ ի վիճակի չեն իրենց եկամտի 30-40 տոկոսը թեստավորմանը հատկացնել, սակայն իրենց երեխաներին պատվաստել ոչ մի պարագայում պատրաստ չեն:

Անկախ փորձագետները, բժիշկները, իրավապաշտպանները, որոնց խոսքը չեն լսում ո՛չ ԱՀԿ-ն, ո՛չ էլ Առողջապահության նախարարությունը, ահազանգում են, որ պատվաստանյութերը կարող են ազդել նաեւ վերարտադրողական առողջության վրա:

«Մոդեռնա» արտադրող ընկերությունը պատվաստանյութի վրա գրել է, որ այն նախատեսված է 18-ից բարձր տարիքի անձանց համար: Իսկ Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը հենց «Մոդեռնայի» համար տարիքային շեմն իջեցրել է՝ մինչեւ 12 տարեկան:

«Այս մասով հանցագործության մասին տեղեկություն ենք հաղորդել, նյութեր ենք նախապատրաստել, բայց մինչեւ հիմա պատասխան չենք ստացել՝ քրեական գործ հարուցվելո՞ւ է, թե ոչ: Բայց որոշ հարցումներ ենք կատարել եւ պարզել, որ «Մոդեռնայով» պատվաստվել են նաեւ երեխաները: Եթե պատվաստանյութերը դեռ գրանցված չեն, իսկ հայտնի է, որ դրանք կարող են ունենալ նաեւ հապաղիչ վտանգներ, որովհետեւ դեռեւս փորձարկման փուլեր չեն անցել, ինչպե՞ս կարելի է փորձադաշտ դարձնել մեր երեխաներին, ո՞վ է պատասխանատվություն կրելու հետեւանքների համար: Հիմա էլ ասելու են, որ երեխաները կամավորության սկզբունքո՞վ են պատվաստվել»,-ասում է Արա Զոհրաբյանը:

Փաստաբանը թարմ օրինակ է բերում՝ Ֆրանսիայում ապահովագրական ընկերությունը հրաժարվել է պատվաստումից մահացած աշխատակցի ժառանգներին վճարել համապատասխան գումար՝ պատճառաբանելով, թե նա սեփական կամքով է պատվաստվել, իրենք որեւէ պարտավորություն չունեն այդ մարդու նկատմամբ: Անգամ դատարանը չի պաշտպանել պատվաստումից մահացած մարդու իրավունքները:

Արա Զոհրաբյանը նաեւ նշում է, որ անգամ սահմանափակումների առկայության դեպքում որեւէ տնտեսվարող իրավունք չունի ՊՇՌ թեստի պատասխան կամ պատվաստման սերտիֆիկատ չունեցող քաղաքացուն արգելել մտնել տվյալ հաստատություն: Իսկ եթե վերահսկող մարմինը ստուգի ու տեսնի, որ այդ մարդը չունի թեստի պատասխան կամ պատվաստման սերտիֆիկատ, բայց օգտվում է տվյալ հաստատության ծառայություններից, ապա պետք է տուգանի ոչ թե տնտեսվարողին, այլ քաղաքացուն: Օրենքը սա է նախատեսում:

Հետեւաբար, այս տեսակետից նախարարի հրամանը շրջանցման տեղիք է տալիս: Շրջանցման տեղիք է տալիս նույն պահանջը նաեւ գործատու-աշխատող հարաբերություններում: Գործատուն պարտավոր է միայն գրանցամատյանը լրացնել՝ ով է թեստ հանձնել, ով՝ ոչ: Իսկ տուգանվողը պետք է լինի աշխատակիցը, ոչ թե գործատուն: Սրա մասին քչերը գիտեն:

Առողջապահության ոլորտի չինովնիկները հիմա էլ խոսում են օմիկրոնի մասին՝ նշելով, որ պատվաստանյութերը պայքարում են այս շտամի դեմ:

Համաշխարհային պատկերն է ցույց տալիս, որ օմիկրոնն ավելի արագ է տարածվում, քան դելտա շտամը, սակայն չի ուղեկցվում ծանր ընթացքով եւ անդառնալի հետեւանքներ չի ունենում:

Մասնագետները համոզված են, որ օմիկրոնը քովիդի մուտացիան է՝ ավելի թույլ ու նվազ վտանգավոր: Նրանք համարում են, որ օմիկրոնով էլ հենց քովիդը կավարտվի: Օմիկրոն շտամով վարակված մարդը եւս ունի հակամարմիններ, նա բարձր իմունիտետ է ձեռք բերում, եւ այդ դեպքում պատվաստվելը բոլորովին անիմաստ է: Առհասարակ, պատվաստումը հարվածում է մարդու իմունային համակարգին ու գցում է նաեւ հանրային իմունիտետը:

Բիլ Գեյթսի հիմնադրամում աշխատած, ամբողջ կյանքում պատվաստանյութերի ուսումնասիրմամբ զբաղված **Վան դել Բոսխը**, դիմելով ԱՀԿ-ին, ասում է. «Օմիկրոնը կարող է բարձրացնել հանրային իմունիտետը: Ոչ մի պատվաստանյութ չի կարող ազդել այդ շտամի վրա: Հանգիստ թողեք մարդկանց: Օմիկրոնը կենդանի թուլացած վիրուս է, որը բացառիկ հնարավորություն է՝ ձեւավորելու հանրային բնական իմունիտետ: Օմիկրոնը, շրջանցելով պատվաստանյութերի առաջացրած հակամարմինները, կխթանի բնական հակամարմինների առաջացմանը: Եթե ԱՀԿ-ն չկանխի պատվաստումները օմիկրոնի դեմ, ապա նույն կազմակերպությունը կրելու է կենսաբանական աղետի պատասխանատվությունը»:

Ինչպե՞ս կարձագանքի հանրությունը Հայաստանում հունվարի 22-ից սպասվող նոր սահմանափակումներին, կիմանանք հաջորդ շաբաթ:





ԴԱՎԻԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
պատմ. գիտ. թեկնածու

# Դեպի ներս

*«Ով այնքան խիզախություն չունի իր կյանքը վտանգել ազատության համար, դատապարտված է ստրկության»:*

**Հեգել**



Հիմա արդեն միայն դավաճանությունն ու ուրացությունը գլխատելու պարզագույն սխեմաները չեն կարող վերացնել այն չարիքը, որը դարերի խորքից կարծես սերտաճել է մեր ինքնության տոհմածառի հետ՝ օտարասիրության թույնը պատվաստելով մեր արյունատար համակարգին: Այդ ինչպե՞ս է ստացվում այդքան դժնի գծապատկեր, երբ բոլոր ազգերը անողոքաբար ճնշում ու ոչնչացնում են կոլաբորացիոնիզմը, դավաճանությունն ու ուրացությունը, իսկ մենք պսեւդոռեալիստական «ոչմիթիզականության» խարանով ոչնչացնում ենք մի ողջ ազգի դիմադրողականանություն, հրեշավոր «խաղաղասիրությամբ» գողանում նրա գոյատեւման բնազդը: Եվրոպայում ֆաշիստական ներխուժման եւ գերակայության ողջ ժամանակահատվածում ոչ ոք չէր կասկածում, որ ինտերվենտների հետ համագործակցողները, հարմարվողական կոլաբորացիոնիստները, առավել եւս՝ թշնամու կողմն անցած դավաճանները դաժանորեն պատժվելու են: Այսպիսին է քաղաքական ազգերի եւ այդ ազգերի քաղաքական վերնախավերի քաղաքակրթական առաքելությունն ու ինքնապահպանության բանաձեւը: Չես կարող երկխոսել քեզ գլխատել ցանկացողի եւ կենսատարածքդ արյամբ կամ անարյուն նվաճել ցանկացողի հետ. այլընտրանքը մահն է:

Այդ ինչպե՞ս է ստացվում, որ մեզ միշտ ստիպում են ընտրել հանգչող ու թուլացող քաղաքակրթական միավորների միջեւ. ինչպես հազար տարի առաջ մնացինք հասարակական, քաղաքական եւ տնտեսական ճգնաժամի ու կոլապսի մեջ գտնվող բյուզանդականության փլատակների տակ, այնպես էլ այսօր՝ նույն փտած բյուզանդականության վերապրուկի՝ սովետականության ուրվական դարձած Ռուսաստանի նահանջող կայսերապետության շահերին ենք զոհաբերվում: Ինֆանտիլ համառությամբ շարունակում ենք դաշնակցել ինքն իրեն գտնել չկարողացող, եվրոպականության եւ ասիականության սահմանագծին արդեն 200 տարի խարխափող ցարաբոլշեւիզմի հետ: Այդ որքա՞ն կործանված պետք է լինես, որ քեզ ցեղասպանածի ու ցեղասպանել ցանկացողի հետ «խաղաղության դարաշրջան» կոչվող ցնորական մառազմով տառապես՝ առանց անգամ գիտակցելու, որ նման ազգերին սկզբունքորեն չեն թողնի գոյատեւել, զուտ այն բանի համար, որ այդպիսի ժողովուրդները կարող են խաթարել առողջ ազգերի միջեւ հաստատված հարաբերությունների տրամաբանությունը: Ինչպե՞ս կարելի է լինել որեւէ մեկի հարճը (Ռուսաստանի, Թուրքիայի, թե Արեւմուտքի՝ նույն դիպվածն է), հաղթել ուրիշների ճակատամարտերում, իսկ սեփականում՝ տանուլ տալ: Այդ ինչպե՞ս հանգեցինք այս ապաշնորհ ընթացքին, երբ մեր գոյությունն իսկ հակասում է աշխարհակարգի օրինաչափություններին ու օրենքներին:

Ո՞ւմ համար է գաղտնիք, որ գտնվելով կայսրապետությունների ու քաղաքակրթությունների հատման կետում՝ վերածվել ենք օտարների շահերն սպասարկող ժողովրդի. մեզանից քամել են այն բոլոր ազնվազարմ վարքաբանական, ինքնութենական եւ քաղաքակրթական հատկանիշները, որոնք կարող են ձեւավորել բոլոր մարտահրավերներին ու սպառնալիքներին արժանավայել դիմագրավող ազգ, քաղաքակրթական սուբյեկտ, որին հնարավոր չէ կոտրել: Մեզնից եւ մեզ միշտ քամել են, որովհետեւ մենք այդպես ենք ցանկացել ու թույլ տվել: Աշխարհագրական դիրքի ու դասավորության հնամաշ դետերմինիզմի մասին պատկերացումները ի՞նչ կապ ունեն այն բանի հետ, թե ինչպիսի ազգ ես դու ցանկանում լինել կամ դառնալ: Եվ, առհասարակ, թուլամորթության վերջին հանգրվանն է մի ամբողջ ժողովրդի ճակատագիրը բացատրել կամ դետերմինացնել աշխարհագրական իրողություններով. ազգերն իրե՛նք են իրենց կերտում՝ իրենց իդեալների, արժեքների եւ սրբացված ցանկությունների նմանությամբ: Մարդը եւ մարդկային հասարակությունը վաղուց արդեն սովորել են սրբացված գաղափարների տաճարներ կառուցել, ազգային, վերազգային եւ անհատական մակարդակներում գերնպատակներ դնել եւ դրանք իրագործել, վաղուց են ինքնամաքրվում՝ իրենց մեջ արմատախիլ անելով ինքնակատարելագործմանը խոչընդոտող ելուստները: Իսկ ի՞նչ ենք մենք ուզում, ինչպիսի՞ ապագա ենք ցանկանում կառուցել, ի՞նչ իդեալների եւ արժեքների շուրջ: Մեր մեջ աստվածային տիեզերակարգն ենք խորտակել՝ մեր իսկ հոժար կամքով: Օտար նվաճողների իդեալներն են դարձել մեր ազգային ճակատագրի ուղենիշները:

Մեր հոգեւոր կուրությունն այնքան համակարգային է, որ հայ ժողովրդի կենսական հարցերի շուրջ բանավեճերի, այդ բանավեճերում հայոց համընդհանուր ճգնաժամի շուրջ շրջանառվող առանցքային բանաձեւերի, «էկզիստենցիալ» նշանակության հարցադրումների, ազգային փրկության վերաբերյալ անթիվ-անհամար դեղատոմսերի անվերջ ու աշխարհացունց հարցերի շարանում մենք հրաժարվում ենք տեսնել ամենաառանցքայինը՝ մարդու փլուզումը. մարդու համակարգային փլուզումը: Մեր ազգային կացությունն երեկ, այսօր եւ վաղը նախեւառաջ հենց այդ փլուզված մարդու վերարտադրությունն է հանրային չափման տիրույթում. ողբերգության սկզբնաղբյուրը ջախջախված արժեքներով բեռնավորված եւ իրականում գոյաբանական միայնության մեջ գտնվող մարդ-ճգնաժամն է, ինքն իր անդունդի մեջ նայող դատարկված անհատականությունը: Մարդու ազատատենչության խարիսխն են կոտրել մեր մեջ՝ հայկյան ազատասիրության խարիսխը: Եթե կարողանանք վերակառուցել մեր ներսի մարդուն՝ իր արմատական ու խորքային արժեքներով, կվերակառուցենք նաեւ մեր հայրենիքը, որն այդ մարդու տաճարն է:

# Ավել թիքան փոր չի ծակում

Նախորդ՝ 7-րդ գումարման Ազգային ժողովի ամենաաղմկահարույց ու քննադատված նախագիծը թերեւս պատգամավորական հավելավճարները հնգապատկելու մասին օրինագիծն էր: Նախորդների ընդունած օրենքի շահառուները նորերը եղան, որոնք արդեն քանի ամիս ստանում ու մեծագույն հաճույքով երեւի վայելում են, այսպես ասած, գրպանի գումարը: Եթե նախկինում մարզային կամ ներկայացուցչական այլ ծախսերի համար պատգամավորները 50 հազար դրամ էին ստանում, ապա այժմ 250 հազար են ստանում: Թե ո՛ր պատգամավորը քանի՛ անգամ է իր հաշվին մարզ մեկնում, կամ այդ գումարից ներկայացուցչական ի՛նչ ծախսեր է անում (օրինակ՝ գործուղման գնալիս այդ գումարից արտասահմանցի ո՞ր գործընկերոջ համար է կոնյակ գնում), դեռ հարց է:

Հետպատերազմական երկրում, որտեղ անօթեւանների, տեղահանվածների, հաշմանդամություն ձեռք բերածների ու արտերկրում բուժում ստացողների հարցը պետք է առաջնային լիներ, էլ չասած՝ բանակը վերազինելու ու պետության մեջքը ուղղելու մասին, պատգամավորները բացի ամսական մոտ 450.000 դրամից նաեւ 250.000 դրամ հավելավճար են ստանում: Եթե սրան էլ գումարենք այն, որ եռամսյակը մեկ պարգեւավճար են ստանում, ապա ստացվում է՝ մենք գրեթե ոչինչ չանելու համար մոտ 800.000 հազար դրամ աշխատավարձ ենք նվիրում ազգընտի՜ր երեսփոխաններին: Բայց եթե հաշվի առնենք, որ ԱԺ հանձնաժողովների նախագահների ու նրանց տեղակալների, փոխխոսնակների ու խոսնակի աշխատավարձն է՛լ ավելի բարձր է, ապա այս թիվը անցնում է անգամ 1.5 միլիոն ՀՀ դրամը:

Ազգային ժողովի մեկ-երկու պատգամավոր է այս ընթացքում ներկայացրել, թե ինչպես ու ինչի վրա է ծախսել պետությունից ստացած հավելավճարը: Հաշվետվությունները ուսումնասիրելիս՝ դրանք հիմնականում արդարացի են, պարզաբանված, մյուսները՝ թե՛ իշխանության, թե՛ ընդդիմության ներկայացուցիչները, այդ գումարները ուղղակի ստացել ու ծախսել են կամ չեն ծախսել:

8-րդ գումարման խորհրդարանի ընդդիմադիր պատգամավորներն ինձ հետ մասնավոր ու հրապարակային զրույցների ժամանակ վստահեցնում էին՝ հավելավճարներներից հրաժարվելու են՝ դրանք առավել նպատակային ծախսերի ուղղելով: Օգոստոսից՝ նոր խորհրդարանի գումարումից մինչ այս պահը, սակայն, պատգամավորական հավելավճարից հրաժարվելու մասին որեւէ խոսք, ակնարկ, հայտարարություն չի եղել: Ժողովրդի լեզվով ասած՝ «ավել թիքան փոր չի ծակում»:

**ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ**

# Իմաստաբանական բառարան

## *Էշը՝ գլխավոր գեոդեզիստ*

«ԷՇԻ», կամ՝ «ու» արտաքին հոլովումով «ԻՇՈՒ» մասին գրել-չգրելու միտքն ինձ երկար է զբաղեցրել, քանի որ չարքաշ կենդանուն նվիրված մտորումներս կարող էին ոմանց կողմից այլաբանորեն ընկալվել: Այնուամենայնիվ, գրի առա մտքինս, ու այժմ առաջարկում եմ, առանց ենթատեքստ փնտրելու, կարդալ ու խորհել:

Նախ, ներկայացնեմ էշի ու ձիու ցեղակցական կապի մասին Նորին Գերազանցություն ստուգաբանության հայտնությունը, համաձայն որի՝ հայերեն ԷՇ բառը ծագում է հնդեվրոպական նախալեզվի *eḱue-s արմատից՝ ՁԻ նշանակությամբ, որի ժառանգներից է պարսկերեն [ասբ] (ՁԻ) բառը:

ԷՇԻ եւ ՁԻՈՒ ցեղակցական կապն ապացուցելու համար կարելի է բերել նաեւ այն փաստը, որ երկու կենդանիների ձագերն էլ կոչվում են քուռակ: Էլ չեմ խոսում ջորու ֆենոմենի մասին:

Մի հարց մշտապես հետաքրքրել է ինձ, թե ինչո՞ւ հայերն ու մեզ հարեւան ժողովուրդները «գործը մի կերպ գլուխ բերելու» իմաստն արտահայտելիս, օգտագործում են «ԷՇԸ ՑԵԽԻՑ ՀԱՆԵԼ» դարձվածքը: Ձիուն անտեսելու պատճառը ո՞րն է: Երկար մտորումներից հետո պարզեցի հետեւյալը. Երկրաչափության մեջ կա գեոդեզիկ գծերի թեորեմ՝ (էվկլիդեսյան հեռավորություն), համաձայն որի՝ երկու կետերի միջեւ ընկած ամենակարճ տարածությունը ուղիղ գիծն է: Ուշագրավ է, որ արաբներն ու իրանցիներն այն կոչում են ԷՇԻ, կամ արաբերենով՝ ՀԻՄԱՐԻ ԹԵՈՐԵՄ (հայերեն ՀԻՄԱՐ բառն առաջացել է ԷՇ նշանակությամբ արաբերեն himaar հոմանիշից): Ըստ այդ թեորեմի՝ եթե էշը կանգնի A կետի վրա, իսկ B կետի վրա խոտ տեղադրվի, A կետից B կետն անցնելու համար էշը կընտրի ամենակարճ՝ ուղիղ ճանապարհը: Այլ կերպ ասած, եթե նշված կետերի միջեւ ցեխ էլ լինի, միեւնույն է, համառությամբ ձիուց տարբերվող էշն իր նպատակակետին՝ խոտին հասնելու համար կընտրի ամենակարճ ճանապարհը: Այդ պատճառով էլ էշը համարվում է գեոդեզիայի հիմնադիրը:

Էշի եւ ձիու առանձնահատկությունները ընդգծելու համար, այդ ցեղակից կենդանիների համառության աստիճանի, ականջների երկարության ու երգեցողության ոճերի՝ զռոցի ու խրխինջի միջեւ համեմատություններ անցկացնելը բավարար չէ: Սրանց տարբերակելու համար կան նաեւ այլ կռվաններ: Օրինակ՝ «էշի ականջի մեջ» կարելի է քնել, իսկ ձիու ականջի մեջ՝ ոչ: Անիմաստ խոսակցությունը բնութագրելու համար կարելի է ասել «էշ-էշ դուրս տալ», իսկ ձիու մասին՝ ոչ: Անիրական խոստումների համար ժամկետ առաջարկելիս, կարելի է հիշել «էշի զատիկը» , իսկ «ձիու զատկի» մասին առայժմ մեզ ոչինչ հայտնի չէ:

Մի հարց եւս մշտապես հետաքրքրել է ինձ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» միջոցով մեզ փոխանցված հնագույն առասպելաբանական վեպից տեղեկանում ենք, որ արքայն Արտաշեսն Ալանաց օրիորդին գերեվարելիս, սեւ ձի է հեծնել: Բայց Խորենացին, չօգտագործելով «ՁԻ» բառը, ասես անորոշության քող է սփռել այդ խնդրի վրա:

**Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ
Անվտանգության հարցերով փորձագետ

# Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը



1979թ. փետրվարին Իրանում տեղի ունեցավ իսլամական հեղափոխություն, որի միջոցով վերջ տրվեց շահ Մոհամմեդ Ռեզա Փեհլեվիի իշխանությանը, որը թվով 35-րդ շահնշահն էր (1941-1979թթ):

Իրան վերադարձավ իսլամական հեղափոխության առաջնորդ, շիա աստվածաբան, հոգեւոր առաջնորդ Սեյիդ Ռուհոլլա (արաբերենից թարգմանվում է «Աստծո հոգի») Մոստաֆավի Մուսավի Իմամ Խոմեյնին (Իրանի բարձրագույն հոգեւոր առաջնորդ 1979-1989թթ.), որը վերցրեց իշխանությունը եւ երկրում անցկացրեց հանրաքվե՝ նոր քաղաքական կարգ եւ կառուցվածք ստեղծելու նպատակով:

1979թ. ապրիլի 7-ին Իրանն հայտարարվեց որպես առաջին Իսլամական պետություն: Առաջին հերթին կազմացրվեց «Սավաք» հատուկ ծառայությունը, կամ ինչպես շատերն էին անվանում՝ քաղաքական ոստիկանությունը: Այդ կազմակերպության շատ աշխատակիցներ դատապարտվեցին եւ գնդակահարվեցին:

1979թ.ին Խոմեյնիի հռչակագրով ստեղծվեց հեղափոխական զորամիավորում՝ «Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը»՝ «Փասդարանը», որին վստահվեց հետախուզական եւ արտաքին գործողությունների առաքելությունը:

Այնուհետեւ քաղաքական յուրաժամանակության եւ օպերատիվ կառավարման շարժառիթներից ելնելով Պահապանների կորպուսը սկսեց զբաղվել միաժամանակ պետության ներքին եւ արտաքին սպառնալիքների դեմ պայքարով, ամբողջ երկրով մեկ իսլամի տիրապետության ամրացումով, ամբողջ աշխարհում սատարել մահմեդական գաղափարախոսության տարածմանը, պայքարել բոլոր այն ուժերի դեմ, որոնք քայքայիչ գործունեություն են տարածում Իսլամական հեղափոխության դեմ:

Այսպիսով, Իրանի Իսլամական Հանրապետության բանակին հանձնարարվեց պաշտպանել պետության տարածքը եւ նրա անկախությունը, իսկ ԻՀՊԿ-ին՝ պաշտպանել հեղափոխությունը եւ նրա արժեքները:

Բանակը եւ պահապանների կորպուսը առանձին, բայց զուգահեռաբար գործող կառույցներ են, ի սկզբանե ԻՀՊԿ-ն պետք է գործեր որպես ժողովրդական բանակ, որը պետք է պաշտպաներ եւ ամրապնդեր հեղափոխական արժեքները եւ պահպաներ պետությունը հնարավոր հեղաշրջումներից: Չէ՞ որ 1953թ. ամերիկյան եւ անգլիական հատուկ ծառայությունները տապալեցին Իրանի վարչապետ Մոհամմեդ Մոսադդիղի կառավարությունը եւ իշխանության վերադարձրին Փեհլեվի շահին: Սակայն պատերազմը Իրանի եւ Իրաքի միջեւ, որ տեւեց 8 տարի (1980-1988), պետության ժողովրդական բանակը դարձրեց արհեստավարժ, իսկ ԻՀՊԿ-ը կազմավորվեց արեւմտյան զինված ուժերի կառուցվածքային տիպարով: Այսօր պահապանների կորպուսում ծառայում են 125 000 մարտիկներ: Այդ կառույցում գործում են ցամաքային ուժեր (100 000 հոգի), որոնք տեղաբաշխված են երկրի 31 մարզերում, ռազմածովային ուժեր՝ 20 000 նավաստիներով, որոնք իրականացնում են պարեկություն պետության ծովային սահմաններում, այդ թվում պահպանում են նաեւ Հորմուզի նեղուցը՝ ռազմավարական նշանակություն ունեցող նեղուց, որը միացնում է Պարսից ծոցը Օմանի ծոցին, որտեղով տեղափոխվում է նավթամթերքի գլոբալ ծովային տեղափոխումների 33%-ից ավելին: Այդ նեղուցով է տեղափոխվում նաեւ Պարսից ծոցի երկրներում արտահանվող նավթի 90%-ը:

ԻՀՊԿ-ի կառույցում գործում են նաեւ ռազմա-օդային ուժեր, որոնք էլ հենց կառավարում են «Շահաբ» բալիստիկ հրթիռները:

Այս կառույցում է գտնվում նաեւ կիբեռհրամանատարությունը, որը զբաղվում է ռազմական եւ տնտեսական լրտեսությամբ, ինչպես նաեւ պրոպագանդայով:

ԻՀՊԿ-ն մեծ դեր է խաղում նաեւ Իրանի արտաքին քաղաքականությունը մշակելիս, հսկում է երկրի տնտեսական ոլորտի շատ հատվածներ, ենթարկվում է անմիջապես հոգեւոր առաջնորդին, մեծ ազդեցություն ունի պետության ներքաղաքական կյանքում: Երկրի շատ բարձրաստիճան չինովնիկներ ծառայել են ԻՀՊԿ կառույցներում: ԻՀՊԿ որոշ ներկայացուցիչներ բավական հաջողակ են եղել աշխատանքային կարիերայում, օրինակ **Մահմուդ Ահմադինեժադը**, որը սկզբում դարձել է Թեհրանի քաղաքապետ, իսկ հետո 2 անգամ ընտրվել երկրի նախագահ:

Հենց նրա օրոք վերոհիշյալ կառույցը երկրում դարձավ ամենահզորը եւ նույնիսկ նավթագազային սեկտորը վերցրեց իր հսկողության տակ: 2019թ. ապրիլին ԱՄՆ նախագահ **Դոնալդ Թրամփը** ԻՀՊԿ-ն ընդգրկեց օտարերկրյա ահաբեկչական կազմակերպությունների ցուցակում, հայտարարելով, որ այդ կառույցը խրախուսում եւ ֆինանսավորում է միջազգային ահաբեկչությունը որպես պետական կառավարման գործիք: Ի պատասխան Իրանը, առանց երկար մտածելու, ճանաչեց ԱՄՆ Զինված ուժերը որպես ահաբեկչական կազմակերպություն...

Այսօր ԻՀՊԿ-ն ղեկավարում է գեներալ-մայոր **Հոսսեին Սալամին**: Գոյություն ունի նաեւ «Բասսիջ» կիսառազմական աշխարհազորը, որն անհրաժեշտության դեպքում կարող է զորակոչել ավելի քան 10 մլն աշխարհազորայինների, այդ թվում՝ կանանց ու երեխաների: «Բասսիջի» գործունեությունը ուղղված է օրենքի եւ կրոնական նորմերի իրագործման շուրջ հսկողություն սահմանելուն, ինչպես նաեւ երկրում գործող քաղաքական ընդդիմության ճնշմանը: «Բասսիջը» ունի ներկայացուցիչներ գրեթե բոլոր քաղաքներում:

Այժմ ընթերցողիս ուշադրությունն եմ հրավիրում ԻՀՊԿ կառույցում գործող «Ալ-Քոդս» հատուկ նշանակության ռազմական ստորաբաժանման վրա, որը 2020թ. հունվարից ղեկավարում է գեներալ **Իսմայիլ Քաանին** (բրիգադի գեներալ է նշանակվել «Ալ-Քոդս» (թարգմանաբար՝ «Երուսաղեմ») հրամանատար Ղասեմ Սուլեյմանիի սպանությունից հետո):

«Ալ-Քոդսը» զբաղվում է հատուկ հետախուզական եւ ռազմական գործառույթներով Իրանի սահմաններից դուրս: Իր ստեղծումից անմիջապես հետո այս ստորաբաժանումը մասնակցում էր Իրան-Իրաք պատերազմին, որտեղ սատարում էր իրաքյան քրդերին, որոնք ակտիվորեն մասնակցում էին Սադդամ Հուսեյնի դեմ պայքարին:

1982 թվականին «Ալ-Քոդս»-ի գործակալական ցանցը ներթափանցեց Լիբանան եւ աջակցեց «Հեզբոլլահի» կազմավորմանը: Հետագայում «Հեզբոլլահը» շատ պետություններում ճանաչվեց որպես ահաբեկչական կազմակերպություն:

Աֆղանստանում «Ալ-Քոդսը» ռեալ օգնություն ցուցաբերեց շիա առաջնորդ **Աբդուլ Ալի Մազարիին** եւ նրա «Հիզբե-Վահդաս» իսլամական կուսակցությանը, որն ակտիվորեն պայքարում էր այն ժամանակ Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետության նախագահ **Մոհամմադ Նաջիբուլլայի** դեմ:

Այնուհետեւ «Ալ-Քոդսը» Աֆղանստանում 1990-ականներին ակտիվորեն աջակցում էր **Ահմադ Շահ Մասուդին** եւ Հյուսիսային ալյանսին, որոնք պայքարում էին իշխանությունը զավթած թալիբանների դեմ:

«Ալ-Քոդս»-ում գործում են մի շարք վարչություններ, որոնք գործում են աշխարհագրական ուղղություններով, այդ թվում Արաբական թերակղզու, Հյուսիսային Աֆրիկայի, Թուրքիայի, Հնդկաստանի, Պակիստանի, Աֆղանստանի, Կենտրոնական Ասիայի, Հարավային Կովկասի, ԱՄՆ-ի եւ Եվրոպայի:

«Հեզբոլլահը», որն արաբերենով թարգմանվում է որպես «Ալլահի ծառաներ» (Ալլահի կուսակցություն), ռազմական շիա կառույց է եւ միաժամանակ քաղաքական կուսակցություն, որը 1982 թվից պայքարում է, ըստ ոմանց, Լիբանանում իսլամական պետություն (Իրանի օրինակով) ստեղծելու նպատակով:

Իրանը ծախսում է «Հեզբոլլահի» վրա տարեկան 700 մլն դոլար, իսկ կառույցն ինքը տարեկան վաստակում է 300 մլն դոլար: «Հեզբոլլահը», ինչպես եւ Իրանի ռազմական մյուս կառույցները, ԱՄՆ եւ Իսրայելը համարում են թշնամի պետություններ: 1983թ-ին այդ կառույցը Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում պայթեցրեց ԱՄՆ-ի դեսպանատունը, ինչպես նաեւ ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի դեսանտայինների զորանոցները օդակայանի ճանապարհին: Որպես դիվերսիայի կազմակերպիչներ կասկածվում էին «Ալ-Քոդս»-ը եւ «Հեզբոլլահ»-ը: Բացի այդ, այս կառույցները կասկածվում էին նաեւ 1994թ. հուլիսին Բուենոս-Այրեսում հրեական մշակութային կենտրոնի պայթեցման գործում: Իրանն առ այսօր չի ընդունում այս մեղադրանքները:

Երբ ԱՄՆ-ի Զինված ուժերը ներխուժեցին Իրաք 2003թ., «Ալ-Քոդս» կառույցի գործունեությունն այդ երկրում եւ ընդհանրապես տարածաշրջանում դարձավ գայթաքար (խոչընդոտող հանգամանք) ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ:

ԱՄՆ-ի նախագահ **Ջորջ Բուշը** (41-րդ նախագահը), որն Իրանը, Իրաքը եւ Հյուսիսային Կորեան անվանել էր «Չարիքի առանցք», 2007թ, մեղադրեց «Ալ-Քոդսին» այն բանում, որ վերջինս ռումբեր է մատակարարել շիա մարտիկներին ամերիկացի զինվորներ սպանելու համար: Ավելի ուշ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարեց, որ 2003-ից մինչեւ 2011թ. ընկած ժամանակահատվածում Իրաքում սպանվել է 608 ամերիկյան զինվոր:

2011թ.ին այսպես կոչված «արաբական գարունը» սկսվելուց հետո, «Ալ-Քոդս»-ը գործուղվեց Սիրիա: Պաշտոնապես հայտարարվեց, որ կառույցը զբաղված է շիա սրբավայրերի պահպանությամբ, սակայն հետո հաստատվեց փաստը, որ «Ալ-Քոդս»-ը օգնում էր նախագահ **Բաշար Ասադին** ճնշել ընդդիմադիր ուժերին: Այնուհետեւ, երբ պայքարը Սիրիայում վերածվեց քաղաքացիական պատերազմի, «Ալ-Քոդս»-ը անմիջական մասնակցություն ունեցավ այդ պատերազմում որպես ռազմական խորհրդականներ եւ առաջամարտիկներ մատակարարող: «Ալ-Քոդս»-ի շարքերում կռվում էին ոչ միայն իրանցիները, այլ նաեւ լիբանանյան «Հեզբոլլահ»-ի մարտիկները, կամ վերահավաքագրված աֆղան փախստականները: Ըստ որոշ տվյալների, Սիրիայի քաղաքացիական պատերազմի ժամանակ սպանվեցին ավելի քան 300 ԻՀՊԿ-ի մարտիկներ (հիմնականում սպայական կազմից) եւ ավելի քան 1100 շիա վարձկաններ աֆղանական եւ պակիստանյան փախստականներից, որոնց ԻՀՊԿ-ում ծառայության դիմաց խոստացված էր աշխատավարձ եւ քաղաքացիություն: Շուտով Իրաքում այնքան շիա մարտիկներ հավաքվեցին, որ նրանց գոյությունը գերազանցեց Իրաքի ազգային բանակին, որը 2014թ-ին արդեն ոչ մի կերպ չէր կարողանում դիմակայել «Իսլամական պետության» ահաբեկչական կազմավորումներին:

Շիա աշխարհազորայիններից շատերը հավատարմության երդում էին տալիս Իրանի հոգեւոր առաջնորդին: Այդ աշխարհազորայիններին ղեկավարում էին «Ալ-Քոդս»-ի հրամանատարները, կամ նրանց պատրաստած կադրերը: Այդպիսի հրամանատարներից մեկն էր **Աբումահդի Ալ Մուհանդիսը**, որը հանդիսանում էր Իրանի եւ Իրաքի քաղաքացի եւ «Ալ-Քոդս»-ի սպայական կազմում էր:

Հոգեւոր առաջնորդ Խոմեյնին ԻՀՊԿ-ի բարձրաստիճան սպաներին նշանակում էր բարձր քաղաքական պաշտոնների: Վերջիններս ակտիվորեն սատարում են արտաքին քաղաքական կոշտ կոնցեպցիաները եւ կողմնակից են միջուկային ծրագրի իրականացմանը:

2007թ. կիսառազմական «Բասսիջ» կառույցը լիովին անցավ ԻՀՊԿ-ի ղեկավարության տակ, որպեսզի ավելի ակտիվ եւ համակարգված պայքար տարվի երկրի ներքին սպառնալիքների դեմ:

2009թ. հունիսին ԻՀՊԿ եւ «Բասսիջ»-ի օգնությամբ վերոհիշյալ Մահմուդ Ահմեդինեժադը հաղթեց նախագահական ընտրություններում եւ գլխավորեց Իրանի Իսլամական Հանրապետությունը 2005-ից մինչեւ 2013 թիվը: Ընտրության այդ արդյունքները երկրում հրահրեցին բողոքի մեծ շարժում եւ ցույցեր:

Վերոհիշյալ 2 կառույցները ճնշեցին շարժումը, բազմաթիվ ակտիվիստներ եւ քաղաքական գործիչներ ձերբակալվեցին ու կալանավորվեցին:

⇨12

# Հերթական ապիկարութի՞ւն, թէ՞ ցեղասպանութեան հերքումին հանդուրժողական մօտեցում

Ցեղասպանութիւն մը կը յատկանշուի հետեւեալ գործընթացով. ծրագրաւորում, գործադրութիւն եւ ապա հերքում՝ ժխտում կամ ուրացում ձերբազատուելու համար այդ զազրելի արարքին հետեւանքներէն: «Բնականաբար» այսպէս կը վարուին ցեղասպանութիւն գործած բռնապետերը, իշխանաւորները, վարչակարգերը կամ խմբաւորումները: Մինչ ցեղասպանութեան ենթարկուած հաւաքականութիւն մը կամ ազգ մը ամէն բան կ՚ընէ նախ ապացուցանելու ցեղասպանութեան փաստը, որպէսզի կարողանայ մեղադրանք ներկայացնելով հատուցում պահանջել ցեղասպանէն: Հետեւաբար յետ ցեղասպանութեան պայքարը երկու կողմերուն միջեւ կը տարուի հերքումին ու անոր դէմ տարուող աշխատանքներուն միջոցաւ:




Այս հակիրճ սահմանումը կարեւոր էր անցնելու այսօրուան հիմնական թեմային.

Նախորդող ուրբաթ՝ 14 յունուար 2022-ին ծայր առին այսպէս կոչուած հայ-թրքական բանակցութիւններ: Բանակցութիւններու նախօրէին ՀՀ Արտաքին գործոց նախարարութեան մամուլի քարտուղար Վահան Յունանեանը հետեւեալ յայտարարութիւնը ըրաւ. «Հայաստանը կ՚ակնկալէ, որ Թուրքիոյ հետ երկխօսութեան գործընթացի արդիւնքով դիւանագիտական յարաբերութիւններ կը հաստատուին Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ, ինչպէս նաեւ կը բացուի երկու երկիրներու միջեւ սահմանը»: Մինչեւ հոս, ո՛չ անպայմանօրէն համամիտ ըլլալով հանդերձ քննարկելի սոյն գաղափարին հետ, կարելի է հասկնալ նպատակը: Սակայն այն ինչ որ լիովին անհասկնալի է մեզի համար՝ հայ նոյն պաշտօնեայի յայտարարութեան շարունակութեան մէջ ընդգծուած հետեւեալ միտքն է. «...Հայկական կողմի տպաւորութեամբ, Թուրքիոյ կառավարութիւնը նոյնպէս կը կիսէ առանց նախապայմանի երկխօսութիւն սկսելու մօտեցումը»: Այսինքն՝ հայկական կողմը, ո՛չ միայն ամէն գնով համաձայն է այլապէս ալ համահայկական մակարդակով խնդրայարոյց գաղափար հանդիսացող բանակցութիւններու նստիլ, այլ նաեւ կերպով մը գոհ եւ ուրախ է, որ թրքական կողմը «բարեհաճած» է ընդունիլ «առանց նախապայմաններու» բանակցութիւններու նստիլ: Անհաւատալի չէ՞ այս կրաւորականութիւնը: Ինչպէ՞ս կարելի է թարգմանել այս երեւոյթը: Հայաստանի իշխանութիւններուն հերթական ապիկարութի՞ւնն է սա, թէ թրքական հերքումը ջատագովող կամ անոր ջաղացքին ջուր հասցնող վերաբերմունք:

Յետ-ցեղասպանութեան թուրքին եաթաղանէն մազապուրծ աշխարհասփիւռ հայութիւնը ի հեճուկս Թուրքիոյ ամէն բան ըրաւ աշխարհին ապացուցանելու Հայոց Ցեղասպանութեան փաստը: Իր բնակած կամ հայ ժողովուրդին բարեկամ տասնեակ երկիրներէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը արդարօրէն կորզեց: Թուրքին ձեռքով սպաննուած 1.5 միլիոն հայ անմեղ զոհերուն յիշատակը յաւերժացնող Ծիծեռնակաբերդի յուշահամալիրը կառուցեց: Այս բոլորը՝ որպէսզի Հայաստանի իշխանութիւնները այսօր ո՛չ միայն ցեղասպանութիւն գործադրած կողմին հերքումը վերացնելու տարրական նախապայմանը չունենան նստելու համար բանակցութեան սեղան, այլ՝ գոհ ըլլան, որ ցեղասպանութիւնը գործադրած թշնամին «ազնուաբար» կը համաձայնի առանց նախապայմաններու բանակցիլ...:

Հակառակ մեր ցասումին, յամենայնդէպս ի՞նչ կարելի է սպասել պարտութեան մը ամբողջական պատասխանատուութիւնը կրող, սակայն տակաւին իշխանութեան վրայ մնալ յամառող կողմէ մը: Ի՞նչ կարելի է ըսել այն մարդոց, որոնք ականջալուր են, թրքական Aydinlik-ի փոխանցմամբ, Թուրքիոյ խորհրդարանի նախկին փոխնախագահ, «Թալէաթ Փաշա» միութեան նախագահ Հասան Քորքմազջանի յայտարարութեան, թէ Հայաստանը պէտք է անմիջապէս կատարէ հետեւեալները.

1. Իրականացնէ 2020ի Նոյեմբերի 9-ին ձեռք բերուած եռակողմ պայմանաւորուածութիւնները:
2. Պէտք է յարգէ Թուրքիոյ տարածքային ամբողջականութիւնը եւ յայտնէ այդ մասին:
3. Հայաստանը պէտք է հրաժարի «ցեղասպանութեան պնդումներէն»:
4. Պէտք է վերջ դնէ Թուրքիոյ դէմ թշնամանքին եւ քանդէ Շիրակի մարզին մէջ տեղադրուած Սողոմոն Թեհլիրեանի արձանը:

Ի՞նչ պէտք է յուսալ վերոյիշեալ պայմաններով հայ ժողովուրդին հողային պահանջատիրութիւնը չէզոքացնել փորձող եւ Հայոց ցեղասպանութեան հերքումը յաւերժացնելու միտումով թշնամիին հետ առանց տարրական պայմաններու բանակցելու գացող կողմէն, որ ըստ երեւոյթին ապիկարութեամբ, թէ՞ դիտաւորեալ պատրաստակամ է ամէն բան տալ, յայտնի չէ, թէ ի՛նչ ստանալու համար:

**Խմբագրական ՌԱԿ «Զարթօնք» թերթի, Պէյրութ, Լիբանան**

# Կաթ պարունակող մթերք. ի՞նչ է այն

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**

Մերօրյա Հայաստանի հանրապետության առօրյան դիտարկելիս երկակի տրամադրության առաջ ես կանգնում: Մի կողմում Հ-1 հեռուստաընկերության գունագեղ լուրերն ու հաղորդումներն են, որոնք չգիտես ինչու որպես հանրային հեռարձակումներ են ներկայացվում քանզի նախարարների ու մեծամասնություն կազմող ԱԺ-ականների խոսքերն են սփռում, մյուս կողմում երկրի հարյուր հազարավոր բնակիչների գնահատականներն են իրենց ոչ վայել միջավայրի շուրջ: Որպեսզի վերջին մոտեցումը զուտ սիրողական չհամարվի, փորձեմ խոսել կոնկրետ օրինակով ու փաստով:

Սույն տարվա հունվարի 12-ին ԱԺ տնտեսական հարցերի հանձնաժողովը քննարկեց... կաթ եւ կաթ պարունակող կաթնամթերքների վաճառքի ընթացքում ապրանքը ցուցադրելու կարգի մասին ՀՀ էկոնոմիկայի նախարարության կազմած օրենքի նախագիծը: Պահանջը հետեւյալն էր. մինչեւ 200 քառակուսի մետր տարածքով առեւտրային կետերի ցուցադարակաշարերում հարկ է ընդգծված առանձնացնել զուտ կաթից ստացված կաթնամթերքները եւ այսպես կոչված կաթ պարունակող կաթնամթերքային ապրանքը: Նշեմ, որ ՀՀ քաղաքացու շրջապատում էլ քիչ չեն նրանք, որոնք տարակուսում են, թե ինչ է նշանակում կաթ պարունակող ապրանք ասվածը, քանզի իրենց ողջ կյանքում համոզված են, որ կաթնամթերքը կաթի վերամշակումից ստացված կաթն ու մածունը, կաթնաշոռն ու պանիրը, մյուս ապրատեսակներն են: Իրականում կյանքն ու ապրանքական հարաբերությունները փոփոխվում են, ի հայտ են գալիս նոր հասկացություններ ու որակումներ, որոնցից մեկն էլ... ընդամենը վերջին տարիներին մեզանում օգտագործվող **կաթ պարունակող մթերք** ձեւակերպված արտահայտությունն է: Այն ընդամենը որոշակի որակի կաթի հետ նույնպես որոշակի բուսայուղերի խառնուրդն է ապրանքի պահանջվող ու նաեւ ցանկալի չափաբաժինը ստանալու նպատակով: Թե՛ առողջապահական եւ թե՛ այլ առումներով որեւէ քողարկում կամ շրջանցում չի արձանագրվում, քանզի այդօրինակ ապրանքն անվանվում է իր նոր իմաստով, այն է՝ տվյալ դեպքում **կաթ պարունակող**, քանզի կան նաեւ այլ տարատեսակներ հյութերի, մսամթերքների պարագայում: Տարօրինակ ու անսովոր վիճակ, կամ՝ փաստ:

Ինչո՞ւ ենք հայտնվել ոչ այնքան բարենպաստ այս վիճակում, որը կարելի է նաեւ վտանգավորության աստիճանի ներկայացնել, քանզի խոսքը լիարժեք առողջ սննդին ու սննդակարգին է առնչվում: Ողջ հարցն այն է, որ Հայաստանի հանրապետությունում իր 3 մլն բնակչության համար անհրաժեշտ առաջին անհրաժեշտության սննդահումք պարզապես չի արտադրվում, թեեւ հողա-ջրա-ջերմային պայմաններն առավել քան առկա են, գումարած՝ քարից հաց քամող հայտարարված աշխատունակ տարրը, հողագործից մինչեւ նախարար: Հատկապես վերջիններս քննարկվող խնդրի պարագայում կանխատեսում էին, ասենք, 2015 թվականին ՀՀ-ում պահվող կովերի գլխաքանակը հասցնել 370 հազարի, կաթի համախառն արտադրությունը՝ 900 հազար տոննայի: Ավաղ, արդեն 2018 թվականի հունվարի 1-ին կովերի գլխաքանակը նվազեց ամբողջ 100 հազար գլխով, կաթի արտադրությունը հազիվ կազմեց 700 հազար տոննա, նախորդ տարիների համեմատ նվազելով 50 հազարական տոննայով: Տարօրինակորեն նման վիճակը որեւէ մեկին չանհանգստացրեց, քանզի անգամ այս պայմաններում ՀՀ-ում հայտնվեցին կաթ-կաթնամթերքի արտադրության նոր ընկերություններ, դրանց արտահանման ծրագրերով: Դե, ՀՀ իշխանություններին միայն արտահանում ասա, մնացյալը խնդիր չէ, արտոնությունների ցանկացած պայման կբավարարեն: Ոչինչ, որ անասնապահությունում կաթնատու ոլորտ գոյություն չունի, անասնապահների կենդանիները ոչ լիարժեք կերակրման հետեւանքով պահանջվող կաթնատվության անգամ նվազագույն ցուցանիշներ չեն ապահովում, ոլորտի գործունեությունը շահավետ չեն դիտարկում, որն էլ բերում է կաթի փոշու օգտագործման, որը նաեւ չոր կաթ է անվանվում: Կաթ-կաթնամթերքների պակաս չկա, իսկ անասնապահը դժգոհում է կաթի մթերման գնից, այն ջրի գնի հետ է համեմատում, աստիճանաբար լքում աշխատանքն ու աշխատատեղը: Ահա այսօրինակ մոտեցումների հետեւանքով ավելորդ համարվեց անգամ ՀՀ-ում գյուղատնտեսության նախարարության գոյությունը, որը հիմա սահմանափակ իրավասություններով իրականացնում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: Խնդրի մասամբ իսկ արմատական լուծումը գերխնդիր է համարվում: Ասենք, կովերի կաթնատվության հարցը, որը երկիր մոլորակի բազմաթիվ հատվածներում տարեկան հասնում է 8-10, անգամ 12-14 հազար լիտրի, ՀՀ-ում... հազիվ 2 հազար լիտրի: Տարօրինակորեն թե ցավալիորեն նման ցուցանիշը որեւէ մեկին չի մտահոգում, թեեւ շահառուները հազարավոր անասնապահներն են, այծի կաթի չափ կաթ տվող իրենց խոշոր եղջերավորներով: Լսած կամ տեսած չկաք, չէ՞, որ ասենք Հայաստանի պետական ագրարային համալսարան անունով բարձրագույն բուհական հաստատությունը, իր դոկտոր-պրոֆեսորական անձնակազմով, միջազգային կապերով որեւէ անգամ ու ձեւով բարձրաձայնի խնդիրը, լուծումներ գտնի ու առաջարկություններով հանդես գա: Նույնը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ոլորտի կայացման ու զարգացման ծրագրերի պատասխանատուները, առաջատար մասնագետները: Խելացի անասնագոմերի գաղափար հռչակվեց, որից օգտվում են ֆինանսական միջոցներ ունեցող որոշ անհատներ, երբ հարյուր հազարավոր անասնապահներ ծրագրերին մասնակցությունն անգամ երազներում չեն տեսնում:

Թե ինչի կհանգեցնի առեւտրակետերի ցուցադարակաշարերում բուն կաթից ու կաթ պարունակող կաթնամթերքներից պատրաստված ապրանքների ընդգծված ու տեսանելի առանձնացումը, դժվար է գուշակել: Գնային տարբերությունից մինչեւ որակական ցուցանիշների խնդիրներն այդպես էլ անհասանելի կմնան հայաստանյան սպառողների համար, որոնց պարզապես պարտադրվում է օգտվել կաթ պարունակող ապրանք հայտարարվող ապրանքից, առանց խնդրի հիմնարար լուծման առաջարկի:

Սպասենք ու հուսանք:

**18.01.2022**

# SOS. Փրկեցեք նրանց հոգիները

**Հայաստանի Հանրապետության մոտ երեսուն քաղաքացիներ, առ Ամերիկա հայացք նետելով, SOS են հնչեցնում, թե փրկեցեք մեր հոգիները, ընդունեցեք մեզ օվկիանոսից այն կողմ ու «վայիս» մի եղեք մեր՝ Ամերիկայում հայտնվելու երազանքին: Հայ մարդիկ, հավաքվելով Խորհրդային Միության հերոս, ծովակալ Հովհաննես Իսակովի արձանի մոտ, Ամերիկայից պահանջում-խնդրում են հարգել արտագաղթելու սեփական իրավունքը եւ անասելի մեծ ցանկությունն ու բյուրակրատական քաշքշուկներ չստեղծել Նահանգներ մեկնելու հարցում: Ցույց անելու վայրի ընտրությունն ու օտար պետությունից արտագաղթի հարցում օգնություն աղերսելը, վստահ ենք, մտածված չի այդպես ընտրվել կամ մտածվել, բայց Իսակովի արձանի ներքո Ամերիկային խնդրագին հայացք նետելը, համաձայնեք, խոսուն է:**

**Երկրից արտագաղթել ցանկացողները փողոց դուրս են եկել «Չենք ուզում կորցնել մեր հնարավորությունը», «Ուզում ենք պայծառ ապագա մեր երեխաների համար», «5 րոպե հարցազրույցը հեռացնում է մեզ մեր երազանքից» ու այլ գրություններով ցուցապաստառներով: Հավաքվածներից շատերը, ի դեպ, լրագրողների հետ չեն շփվել, տեսախցիկներից խուսափելու համար դիմակով ու գլխարկներով են եղել: Ասես իրենց իսկ արածից ամաչել են, իսկ արարքը՝ սեփական երկրից փախչելու համար բացահայտ, օրը ցերեկով ցույց անելը, իհարկե, ամոթ է:**

**Երեւույթը, ցավոք, նոր չէ: Դեռ մինչեւ պատերազմն էլ Ռուսաստան մեկնել ցանկացողներն էին կառավարության մոտ ցույց անում: Մարդիկ, որ համավարակի ժամանակ հանկարծ հիշել էին Հայաստանի մասին ու որոշել համատարած լոքդաունի ժամանակ մայր հողում հանգրվանել, մի քանի ամիս անց արդեն պահանջում էին իրենց հատուկ ավտոբուս տրամադրել ու ՌԴ ուղարկել: Եթե պետք է, ասում էին, անգամ ՀՀ քաղաքացիությունից կհրաժարվենք, միայն թե Ռուսաստան հասնենք:**

**Ի դեպ, անցյալ տարի «Գրին քարտ» շահելու համար դիմել է Հայաստանի հանրապետության 160.965 քաղաքացի: Իսկ թե քանի՞ քաղաքացի է «սեւով» արտագաղթում, այդ մասին հայրենի կառավարությունը համեստորեն լռում է:**

**ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ**

# Սեւան Նշանյանը Հայաստան է գալիս



Գերմանական «Թագեսշպիգել» թերթը հունվարի 19-ին անդրադարձել է Սեւան Նշանյանի՝ Հունաստանից Հայաստան տեղափոխվելու խնդրին: 5 տարի առաջ Թուրքիայի բանտից Հունաստան փախած թուրքահայ մտավորական Սեւանը երեքշաբթի օրը լքեց այդ երկիրը՝ կանխելով շաբաթ օրը՝ հունվարի 22-ին Հունաստանից իր արտաքսումը: Թուրքիայում «չափազանց հայկական», Հունաստանում «չափազանց թուրքական» բնութագրում ստացած այդ 65-ամյա մշակութաբանին Հունաստանը դեռեւս չի պարզաբանել, թե ինչ հիմքով է արտաքսման պահանջ ներկայացնում, գրում է **Սուզաննե Գյուսթենն** իր հրապարակման մեջ: Ամերիկյան Յեյլ եւ Կոլումբիա համալսարաններում կրթություն ստացած գիտնականը հեղինակել է թուրքերեն ստուգաբանական նշանավոր բառարանը, Անատոլիայի ատլասը, որ ընդգրկում է 50 000-ից ավելի պատմական տեղանուն: Եթե Նշանյանը գերմանացի կամ ֆրանսիացի մտավորական լիներ, նա ուրախությամբ իր վաստակի մասին կպատմեր թոքշոուների հյուր լինելով, նկատել է տալիս «Թագեսշպիգելը»:

Լայն զանգվածներին Նշանյանի անունը հայտնի դարձավ 2000-ականներին: Հոդվածի հեղինակի մատուցմամբ, Թուրքիայում զբոսաշրջությանն ուղղված՝ բնությունն ու մշակույթը գերակա դարձնելու Սեւան Նշանյանի մոտեցումը, բնապահպանական զբոսաշրջությունը, «Փոքր հյուրանոցների գիրքը» ոգեշնչեց ճանապարհորդներին եւ հյուրանոցատերերին: Թուրքիայի արեւմտյան մասում Սիրինջե գյուղը Նշանյանի ջանքերով դարձավ մշակութային ժառանգության մաս: Բայց վերականգման արտոնություն չուներ, եւ գործը դատարան մտավ: Բանտարկության պատժաչափին ավելացավ, երբ հրապարակավ սկսեց վիճարկել Մուհամեդ մարգարեին քննադատելու իրավունքը, որի համար 2014-ին ազատազրկման բազմամյա պատիժ կրեց: «Թռավ թռչունը» 2017-ի ամռանը թվիթթերում գրառեց Նշանյանը, երբ, ինչպես «Թագեսշպիգելն» է ծանուցում, իր բանտային արձակուրդն օգտագործեց Թուրքիայից էգեյանով Հունաստան հասնելու համար: Գրառման մեջ Նշանյանը հավելել էր՝ նույն ազատությունը մաղթում եմ մյուս 80 միլիոն թուրքերին: Հունաստանում նա ապաստանի իրավունքի համար ներկայացրած դիմումից հրաժարվեց, երբ 2019-ին ամուսնացավ Հունաստանի քաղաքացիություն ունեցող մի կնոջ հետ եւ ստացավ բնակության իրավունք: Նշանյանը կնոջ հետ հաստատվեց Սամոս կղզում, ուր Սեւանը շարունակեց իր նախասիրած գործը՝ պահպանել մշակութային ժառանգությունը, վերականգնել լքված գյուղերն ու քարուքանդ տները: Բայց հունական կղզում անդորրը երկար չտեւեց: Թե՛ Նշանյանը, թե՛ նրա կինը ծնունդով Ստամբուլից էին, Սամոսում լուրեր տարածվեցին, թե կղզին ուզում են «թուրքացնել», շուտով Սամոսում մզկիթ էլ կկառուցեն, իր հոդվածում ծանուցում է գերմանացի հեղինակը՝ շեշտելով,կղզու բնակիչների զայրույթը՝ քրիստոնյա ամուսինների հանդեպ: Նշանյանին որեւէ բան չէր հուշել, թե այժմ Հունաստանը նրա համար անվտանգությանը սպառնացող, ռիսկային երկիր է, թե անցանկալի անձ է հռչակվելու: Տարեվերջին նրան ձերբակալեցին, մեկ շաբաթ բանտում էր, մինչեւ հունվարի 7-ին դատարանը հրապարակեց երկրից արտաքսման վճիռը՝ առանց պատճառաբանման, ինչպես գերմանական «Թագեսշպիգելին» ներկայացրել է Նշանյանը: Հունվարի 22-ին արտաքսումը կանխելու նպատակով, Նշանյանը երեքշաբթի՝ հունվարի 18-ին մեկնել է Ֆրանսիա: Գերմանական թերթին Նշանյանն ասել է, թե Փարիզից Հայաստան է տեղափոխվելու, Թուրքիայից փախչելուց հետո ՀՀ քաղաքացիություն են տրամադրել իրեն, հիմա էլ ապաստան են առաջարկում:

«Օտար երկրում նորից 0-ից սկսելը վախեցնում է», 65-ամյա Նշանյանի խոստովանությամբ է եզրափակում հոդվածը «Թագեսշպիգելը»:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԹԵՔԵՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# Անվճար դասագրքեր կարիքավոր երեխաների համար





Կրթությունը յուրաքանչյուր քաղաքակիրթ երկրում առաջնային ոլորտներից է: Սակայն, նյութական խնդիրների պատճառով շատ երեխաներ զրկված են նվազագույն կրթական ծրագրից: 2010թ. սկսած «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամն իրականացնում է «Անվճար դասագրքեր կարիքավոր երեխաների համար» ամենամյա ծրագիրը եւ օժանդակում առավել անապահով երեխաներին ստանալ անվճար դասագրքեր:

Ծրագիրն իրականացվում է նվիրատվությունների շնորհիվ, որոնք մասնավորապես ապահովվում են Լոնդոնի Թեքեյան խնամակալ մարմնի կողմից Մեծ Բրիտանիայում եւ այլ երկրներում կազմակերպված դրամահավաքների միջոցով:

2021-2022 ուսումնական տարում «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամը 2,149 անվճար դասագիրք է տրամադրել 154 անապահով աշակերտի Երեւանից, Գյումրիից, Ստեփանավանից եւ Կարբի գյուղից, դրանով իսկ մեղմելով ընտանիքների նյութական հոգսը: Իսկ ծրագրի իրականացման տասներեք տարիների ընթացքում ընդհանուր առմամբ հիմնադրամը 2,028 շահառուի տրամադրել է 27,570 դասագիրք 13,753,321 ՀՀ դրամ արժողությամբ:

Հիմնադրամը նպատակ ունի ընդլայնել ծրագիրը, ուստի հայցում եւ ակնկալում է Հայաստանի եւ Սփյուռքի կազմակերպությունների եւ անհատների տեւական համագործակցությունն ու օժանդակությունը սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին:

*Նվիրատվություն կարող եք կատարել՝*
*«Թեքեյան Կենտրոն» հիմնադրամ*
*/ՀՀ, Երեւան 0025, Խանջյան 50/*
*Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ*
*Բանկային հաշիվ՝ 15700 22679770200 (ՀՀ դրամ)*
*SWIFT / BIC: ARMIAM22*

*«Թեքեյան Կենտրոն» հիմնադրամը հայտնում է իր խորին երախտագիտությունը բոլոր նվիրատուներին՝ հայ դպրոցի զարգացման եւ բարգավաճման հայրենանվեր գործին աջակցելու համար:*

# Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորուստը

⇨10

2013թ-ին հերթական ընտրությունների ժամանակ ԻՀՊԿ-ը նորից ակտիվորեն միջամտեց ընտրական գործընթացներին, բայց այդ ժամանակ հաղթեց ավելի չափավոր քաղաքական գործիչ **Հասան Ռուհանին**, որը կողմնակից էր ավելի մեղմ արտաքին քաղաքականության: Բայց ինչպիսին էլ լիներ ընտրությունների արդյունքը, ԻՀՊԿ-ը շարունակում էր հսկել եւ ղեկավարել երկրի տնտեսական բլոկի շատ սեգմենտներ: Հատկապես ուժեղ հսկողություն էր սահմանվում բանկերի գործունեության, նավթարդյունաբերության, նավաշինարարության, արդյունաբերության տարբեր ճյուղերի վրա: Ուժեղ ազդեցությունը ներքաղաքական կյանքում հնարավորություն էր տալիս ԻՀՊԿ-ի հետ կապված ընկերություններին առանց տենդերներում հաղթելու ստանձնել նավթային սեկտորը, արդյունաբերական ճյուղերը: Այս տնտեսական գործունեությունը հնարավորություն էր տալիս որոշ չինովնիկների հարստանալ, ինչպես նաեւ մեծ գումարներ ներդնել զենքի ու զինամթերքի ձեռք բերման գործում, միջուկային ծրագրի զարգացման գործում, արտասահմանում գաղտնի գործառույթների անցկացման համար, եւ, ի վերջո, ֆինանսական օգնություն ցուցաբերել ԻՀՊԿ վետերաններին եւ զոհված մարտիկների ընտանիքներին:

Այս պահին ԻՀՊԿ մարտիկներից ամենահայտնի զոհված հրամանատարը համարվում է «Ալ-Քոդս»-ի նախկին հրամանատար գեներալ Ղասեմ Սուլեյմանին, որը զոհվեց 2020թ. հունվարի 3-ին Բաղդադի օդանավակայանում, ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերի թիրախային հարվածների հետեւանքով: Պենտագոնը հայտարարեց, որ Սուլեյմանիի չեզոքացման հատուկ օպերացիան իրականացվել է նախագահ Դոնալդ Թրամփի հրահանգով: Վերջինս Սուլեյմանիին համարում էր թիվ 1 ահաբեկիչը աշխարհում: Ի պատասխան, ԻՀՊԿ-ն անցկացրեց «Նահատակ Սուլեյմանի» օպերացիան եւ ռմբակոծեց ամերիկյան ռազմական դիրքերն Իրաքում. արեւմուտքում տեղաբաշխված «Այն-Ալ-Ասադ» ավիահենակետը եւ հյուսիսում՝ Էրբիլ նահանգի օդանավայակայանը: Ռմբակոծության հետեւանքով, ըստ իրանական կողմի, սպանվեցին 80 ամերիկյան զինվորականներ, մինչդեռ ԱՄՆ-ը հայտարարեց, որ մարդկային կորուստ չկա:

ԻՀՊԿ ռազմա-տիեզերական ուժերի հրամանատարը (բրիգադի գեներալ **Ամիրալի Հաջիզադե**) հայտարարեց, որ այդ ռմբակոծությունը սկիզբն է խոշոր օպերացիայի ընդդեմ ամերիկյան հենակետերի ամբողջ տարածաշրջանում: Սակայն կորոնավիրուսի համավարակի, միգուցե նաեւ այլ պատճառներով, կարճատեւ այդ պատերազմը դադարեց: Այնուհետեւ, ԱՄՆ-ում իշխանության եկավ **Ջո Բայդենը**, եւ ԱՄՆ-ը չափավորեց իր բորբոքվածությունը ընդդեմ Իրանի, եւ կարծես թե նոր հարաբերությունների դարաշրջան է սկսվում այդ պետությունների միջեւ: ԱՄՆ հիմնական թիրախները այժմ Ռուսաստանը եւ Չինաստանն են:

Չմոռանամ ընթերցողիս հայտնել, որ իսլամական հեղափոխության հաղթանակը Իրանում մեծ հարված էր նաեւ սովետական հեղափոխության ռեզիդենտուրային, որը 1979-1983թթ. ղեկավարում էր հայտնի խորհրդային հետախույզ **Լեոնիդ Շեբարշինը**...

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԱ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան 0010, Եզնիկ Կողբացի 20/3
**e-mail:** azg@azg.am, azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

“AZG” Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960
20/3 Yeznik Koghbatsi st.,
Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Եզնիկ Կողբացի 20/3: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 20.01.2022, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: